

ԲԵԼԼԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՎԻՉԸ

ԵՎ

ՀԱՅ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

БЕЛЛА БАРСЕГЯН

ГЕНРИК СЕНКЕВИЧ И АРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1978

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԵԼԼԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՎԻՉԸ
ԵՎ ՀԱՅ ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

A
61805

61320



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԴԱ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1978

Աշխատության մեջ քննարկվում են Սենեկերի ստեղծագործությունների արձագանքները հայ հասարակայնության մեջ, բացահայտվում են այն ազդակները, որոնցով պայմանավորված էին լեհ գրողի նովելների ու վեպերի հայերեն թարգմանությունները: Ուսումնասիրվում են Սենեկերի «Նոերգության» և Մուրացանի «Դևորգ Մարզպետունու» տիպարանական առանձնահատկությունները:

Պատասխանատու խմբագիր
բանասիրական գիտությունների դոկտոր
Ս. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ

Դիբիր հրատարակության ևն երաշխավորել, գրախոսներ՝
բանասիրական գիտությունների բեկնածուներ
Վ. ՓԱՐԹԱՄՅԱՆԸ և ԷԴ. ՀԱԿԻՐՅԱՆԸ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում՝ դեռևս IV դարից սկսած, մշակութային բազմազան կապեր է ունեցել ինչպես Արևելքի, այնպես էլ Արևմուտքի հետ: Հարևան և հեռավոր ժողովուրդների հետ ունեցած այդ առնչությունները փաստական հարուստ նյութեր են պարունակում, որոնց հետազոտությունը կենսական անհրաժեշտություն է ինչպես հայ, այնպես էլ այլազգի գրականագիտության համար, քանի որ գրականությունների բնական զարգացման ողջ ծավալն ու խորությունը անհնարին է ընդգրկել առանց այդ առնչությունների, առանց համաշխարհային գրական պրոցեսի հետ նրա ունեցած կապերի բացահայտման: Պատմական ու մշակութային հանգամանքներով պայմանավորվող այդ առնչությունների մեջ իրենց ուրույն տեղն ունեն հայ-լեհական գրական կապերը, որոնց զարգացմանն ու ծավալմանը ինչ-որ չափով նպաստել է և այն հանգամանքը, որ հայերը դարեր շարունակ հաղարավոր թիվերով կապված են եղել լեհաստանին:

Անշուշտ, լեհահայ բազմաբնույթ հարուստ մշակույթը այն նախադրյալն էր, որ զուգորդվելով համաշխարհային քաղաքակրթության մերձեցնող գործոններին առանձնահատուկ թափ է հաղորդել հայ-լեհական առնչությունների զարգացմանը: Ահա թե ինչու XIX դարից սկսած հայ իրականության մեջ արտակարգ ուժեղանում է հետաքրքրությունը լեհահայ գաղութի պատմության, մշակույթի, ինչպես նաև դրանց ծավալմանն ու ինքնատիպ գրսևորմանը նպաստող լեհական մշակույթի ու գրականության հանդեպ: Սակայն պետք է ավելացնել, որ XIX դարում լեհ մշակույթի նկատմամբ գրսևորված այս աշխուժությունը ունեի մի այլ, առավել հիմնավոր

պատճառ: Տվյալ ժամանակաշրջանում, երբ երկու երկրներն էլ գտնվում էին քաղաքական անբարենպաստ պայմաններում, հայերին առանձնապես դրավում էին լեհ գրողների հայրենասիրությամբ տոգորված բարձրարժեք գեղարվեստական ստեղծագործությունները: Այստեղ, Իհարկե, առանձնահատուկ է եղել Ա. Միցկևիչի և Հ. Սենկևիչի հմայքը, որոնց ստեղծագործությունները, սկսած XIX դարի վերջին քառորդից, բաղմիցս հրատարակվելով ու վերահրատարակվելով, ջերմորեն ու հարազատորեն են ընդունվել հայ հասարակայնության կողմից:

Անցյալ դարի լեհ քնարերգականների ու արձակագիրների գործերը թարգմանելու բավական հարուստ ավանդություն գոյություն ունի հայ գրականության մեջ: Իհարկե, թարգմանված լեհ գրողների ու բանաստեղծների մի ամբողջ անվանացանկ կարելի էր բերել այստեղ, սակայն վարը թվարկվող գրական մեծություններն էլ բավական կլինեն պատկերացում տալու, որ լեհ գրողների գրական ժառանգության ներընդունումը պայմանավորված է եղել հայ հասարակության գաղափարական-գեղարվեստական ու գեղագիտական ներքին պահանջներով: Միցկևիչի ու Սենկևիչի կողքին հարկ ենք համարում հիշատակել լեհ գրականության և այն քերթողներին, որոնց հայ հասարակայնությունը ճանաչել է դեռևս XIX դարում. Վլ. Սիրոկոմլի, է. Օժեշկովա, Բ. Նժ, Բ. Պրուս, Կ. Տեոմայեր, Ստ. Պշիբիշևսկի: Ավելացնենք, որ քաղաքական-հատարակական պայմանների փոփոխմանը զուգընթաց, լեհ գրականության հարուստ ժառանգությունը հայ հասարակությունը օգտագործել է ինքնօրինակ ձևով՝ տարբեր էտապներում թարգմանել նոր հեղինակների, վերահրատարակել եղածները՝ ինչպես գեղագիտական ներքին պահանջների մի շարք գործոններից:

Ինչ խոսք, լեհերն էլ իրենց հերթին են մեծ հետաքրքրություն ցուցաբերել լեհահայերի և ընդհանրապես հայ ազգի նկատմամբ: Առաջին հերթին նրանց հետազոտության առարկան է դարձել լեհահայ գաղութի պատմությունը և Ռեչ-Պոսպոլիտայի կյանքում հայերի կենցաղի, բարքերի, գրականության, արվեստի, լեզվի ու բանահյուսության ունե-

ցած դերը: Միայն XIX դարում Լեհաստանում մի քանի տասնյակ գիտական ու ճանաչողական արժեքավոր աշխատություններ են հրատարակվել, նվիրված՝ ինչպես լեհահայերի, այնպես էլ բնիկ հայերի ու հայոց աշխարհի պատմության ու վերը հիշատակված բնագավառների հարցերին: Հատկանշական է, որ XIX դարի լեհ գրողներից շատերը, ինչպես, օրինակ, Տ. Միցինսկին, Զ. Նալկովսկան, հարադատորեն ընկալելով հայ ժողովրդի զավակների ճակատագիրը, գրում են պատմվածքներ նրանց կյանքից: Հ. Սենկևիչը, Լ. Գնուտովսկին, Զ. Կաշկովսկին, Ս. Փերոմսկին իրենց պատմավիպերում պատկերում են լեհերի հետ լեհահայերի ունեցած համատեղ կյանքը: Եվ, վերջապես, անցյալ դարի լեհ պարբերական մամուլում թարգմանվում ու հրապարակվում է հայ ժողովրդական երգերի մի ամբողջ շարք, տպագրվում են պատառիկներ հայ պոետների ստեղծագործություններից: Ինչ վերաբերում է XX դարին, ապա պետք է ասել, որ ինչպես հայ հին, նոր ու ժամանակակից գրականության տասնյակ դործեր են ներկայացվել լեհ հասարակայնության ուշադրությանը, այնպես էլ անընդմեջ լույս են տեսել գիտական ու ճանաչողական բնույթի գրքեր ու հոդվածներ՝ հայ գրականության, փիլիսոփայության, արվեստների վերաբերյալ, հրատարակվել են ճանապարհորդական նոթեր ու տպավորություններ Հայաստանի մասին:

Երկու երկրների՝ Լեհաստանի ու Հայաստանի քաղաքական, հասարակական ու տնտեսական պայմանների զարգացումը տարբեր ժամանակներում համապատասխան կերպով թելադրել է գրական կապերի ուղղությունն ու աշխուժությունը, որոնք հատկապես լայն ծավալ են ստացել XIX դարի 80-ական թվականներից մինչև XX դարի 20-ական թվականները և ապա՝ 40-ական թվականներից մինչև մեր օրերը:

Հայ-լեհական գրական կապերը մինչև այժմ չեն հետադուրվել, թեև հատկապես վերջին դարում դրանք դարձել են առավել սերտ: Հիշտ է, հայ և լեհ գիտնականները միշտ էլ հետաքրքրություն են ցուցաբերել երկու ժողովուրդների

պատմական, մշակութային փոխադարձ կապերի հանդեպ, մամուլի էջերում հանդես եկել հոգվածներով, ակնարկներով, սակայն այնպիսի ուսումնասիրություն, որն ամփոփեր, բաղդատեր, հետազոտեր ու վերլուծեր այդ կապերի վերաբերյալ փաստական նյութերը, մինչև այժմ չի կատարվել:

Իհարկե, ինչպես վերը թվարկված, այնպես էլ մի շարք այլ լեհ գրողներ հայ իրականության մեջ մեծ ճանաչում են գտել, սակայն այդ տեսակետից ամենաբացառիկ տեղը պատկանում է Հենրիկ Սենկևիչին, որի հետ հայ գրականության ունեցած առնչությունների ուսումնասիրությանն էլ նվիրված է այս աշխատանքը:

Համաշխարհային հռչակ ունեցող Հենրիկ Սենկևիչը (1846—1916), որն, ի դեպ, վեցերորդն էր, որ արժանանում էր միջազգային Նոբելյան մրցանակի, իր ստեղծագործական ուղին սկսում է XIX դարի 70-ական թվականներին, երբ լեհաստանում ռեալիզմն արդեն իր նշանակալից վարզացումն էր ապրում:

Սենկևիչի գրական ասպարեզ իջնելը համընկնում է այն ժամանակաշրջանին, երբ լիբերալ-բուրժուական միտքը 60-ական թվականների վերջերին և 70-ականի սկզբներին առաջ է քաշում այսպես կոչված «վարչավյան պողիտիվիզմը», որն Արևմտյան Եվրոպայում բավական մոդայիկ դարձած պողիտիվիստական փիլիսոփայության տարատեսակն էր: Լեհական պողիտիվիզմը՝ ի տարբերություն արևմտաեվրոպականի, ոչ թե փիլիսոփայական, այլ հասարակական-գաղափարական մի հոսանք էր, որը, ինչպես Յու. Կժիժանովսկին է նշում, կրում էր «ուտիլիտար-գործնական» բնույթ: «Այդ շրջանի պողիտիվիզմը,—գրում է ոուս լեհագետ Ի. Գորսկին,—փաստորեն պարտված ապստամբության (1863 թ.—Բ. Բ.) բուրժուական ռեակցիան էր: Դատապարտելով ազգային անկախության համար մղվող ապստամբական, ղինված պայքարի տրագիցիան՝ որպես ժողովրդի համար անհեռանկարային, ռոմանտիկ ու խորտակիչ մի բան, նրանք

(պողիտիվիստները—Բ. Բ.) դրան հակադրեցին լեհաստանի տնտեսական հզորացման գաղափարը»¹։

Պողիտիվիստական «աշխատանքը հիմքում» ծրագիրը կոչ արեց շլյախտային ու բուրժուական մտավորականությանը՝ օգնելու, լուսավորելու ժողովրդին։ Այդ նոր ուղղությունը գոյության առաջին շրջանում, այսինքն՝ մինչև 80-ական թվականները, երբ ռեալիզմը հիմնավորվեց ու խորացավ լեհ գրականության մեջ, առաջադիմական նշանակություն ունեցավ իր ժամանակի համար։ Պողիտիվիստները առաջ քաշեցին կոնկրետ հարցեր, ինչպիսիք են՝ պայքարը ֆեոդալիզմի մնացուկների դեմ, շլյախտայի քննադատությունը, կանանց էմանսիպացիան, բնական զիտությունների նվաճումների, զիտության ու տեխնիկայի առաջընթացի խնդրառուումը, արդյունաբերության, հողագործության, առևտրի զարգացումը։ Ըստ որում, այդ բարօրությունը պետք էր հասնել հասարակության բոլոր դասերի համագործակցության շնորհիվ։

Բնական է՝ այդ շրջանի պողիտիվիզմը հսկայական ազդեցություն գործեց 60—80-ական թվականների լեհական գրականության և հասարակական մտքի վրա։ Լեհ խոշորագույն գրողները՝ է. Օժեշկովան, Հ. Սենկևիչը, Բ. Պրուսը, Ա. Դիզասինսկին, 60—70-ական թվականների պողիտիվիստական մամուլի ազդեցությամբ փայտացում էին այն պատրանքը, թե բուրժուական նոր կարգը երկրին ու ժողովրդին կրերի բարգավաճում ու բարեկեցիկ կյանք։

Սենկևիչի այդ շրջանի ստեղծագործությունները, հատկապես «Իզուր» և «Հումորիսկներ Վորոշիլլայի պայուսակից» պատմվածքները, կրում են պողիտիվիզմի ազդեցությունը։ Դրանց մեջ, ծաղրելով արիստոկրատիային, նա իդեալականացնում է նոր սերնդի ներկայացուցիչներին։ Այդ և մի շարք պատմվածքներում, մերկացնելով սոցիալական արատները, Սենկևիչն աշխատում էր հասարակությանը դաստիարակել հայրենասիրության ու հումանիստական գաղափարների ոգով։ Բայց պետք է շեշտել, որ Սենկևիչը

¹ „История польской литературы“, т. I, М., 1968, стр. 460.

բուրժուական առաջադիմությունն ընդունում էր որպէս լոկանհրաժեշտություն, շնայած նրա համակրանքը հին, «լավ» ժամանակների կողմն էր: Դատապարտված սերնդի մարդկանց նկատմամբ նա իր կարեկցանքը արտահայտում է «Փոքր եռերգությունում» («Հանյա», «Հին սպասավորը», «Սեկիմ Միրզա»):

Սենկեիշը պոզիտիվիստներից հեռանում է 80-ական թվականներին, երբ ռեալիզմը ծաղկում էր ապրում, իսկ պոզիտիվիզմը արդեն էական դեր էր խաղացել լեհ հասարակական կյանքում՝ իր կողմը գրավելով դեմոկրատական մտավորականության հիմնական ուժերն ու աշխուժացրել հասարակական միտքը: Սենկեիշը նրանցից հեռանում է նաև նահապետականության հանդեպ տաժաժ համակրանքի, պահապանողական հայացքների տեր մարդկանց հետ անձնական կապերի և լեհ պատմության դնահատման հարցում պոզիտիվիստների հետ ունեցած տարաձայնությունների պատճառով:

1876 թվականին Սենկեիշը որպէս լրագրող մեկնում է ԱՄՆ և երկար ժամանակ ապրում Կալիֆորնիայում: Այդ ուղևորության արդյունքը լինում է «Ճանապարհորդական նամակներ Ամերիկայից» նովելների շարքը, որտեղ հեղինակը ռեալիստական մեծ ուժով վեր է հանում «ոսկի» Կալիֆորնիայի կյանքի ստվերոտ կողմերը, պատկերում հեղիկների ողբերգական ճակատագիրը, լեհ գաղթականների ծանր կյանքը Նահանգներում:

Ամերիկայի, ինչպէս և կապիտալիստական Եվրոպայի (որտեղ նույնպէս ճանապարհորդում է) ցուցադրական դեմոկրատիզմի ետևում թաքնված սոցիալական աչք ծակող հակասությունները ապշեցնում են Սենկեիշին: Շուտով, ազատվելով քաղաքակրթության դարդացման հանդեպ ունեցած իր միամիտ պատկերացումներից, «Փոքր եռերգության» հեղինակը հռեաթիստիկ է տրամադրվում բուրժուական աշխարհի նկատմամբ:

Սենկեիշը, որ անհրաժեշտություն էր համարում պատմական լավատեսությունը, ճնշված ազգի «ուզին ամբապնդելու» համար հայացքն ուղղում է դեպի անկախ Լեհաստանի պատմությունը: Հայրենասիրական ոգով ներշնչված ժողո-

վուրդը 1863 թ. լեհական ապստամբության պարտությունից հետո, իրոք, կարիք էր զգում ոգևորիչ խոսք լսելու: Եվ ահա, 1883—1888 թթ. երևան գալով Սենկևիչի պատմավեպերի շարքը՝ «Եռերգությունը» («Հրով և սրով», «Ջրհեղեղ», «Պան Վոլոդյովսկի»), նրան իր երկրում այնպիսի փառք է բերում, որին մինչ այդ չէր արժանացել ոչ մի լեհ գրող:

«Յո երթաս» և «Խաչակիրներ» պատմավեպերում, ինչպես նաև «Առանց դավանանքի» ժամանակակից վեպում դրսևորվեց Սենկևիչի ստեղծագործական մեծ կարողությունը, նրա համար ապահովելով համաշխարհային հռչակ: Արդեն 90-ական թվականների վերջերին «Յո երթասի» հեղինակը այնպիսի ժողովրդականություն է ձեռք բերում, որ նրա գրական գործունեության 25-ամյա հոբելյանը՝ 1900 թ. լեհաստանի հետ միաժամանակ նշում են այն երկրները, որոնք ծանոթ էին նրա գործերին:

Սենկևիչի հոբելյանը վարչավայում վեր է ածվում իսկական տոնակատարության: Իրականում Սենկևիչի գրական գործունեության քսանհինգամյա հոբելյանը պետք է տոնվել 1897 թ. (նրա առաջին «Իզուր» պատմվածքը լույս էր տեսել 1872 թ.): Սակայն այդ տարեթիվը համընկնում էր (մեկ տարի շուտ) Միցկևիչի հարյուրամյա հոբելյանին, այդ պատճառով էլ Սենկևիչը հրաժարվում է իր հոբելյանի տոնակատարությունից: Միքայել Ռադձիվիլիին (հոբելյանական կոմիտեի նախագահին) գրած նամակում նա շնորհակալություն է հայտնում իրեն մատուցած հարգանքի համար և գտնում, որ լեհ ժողովրդի ամբողջ ուժն ու հնարավորությունները պետք է տրամադրվեն մեծ պոետի արձանը կանգնեցնելու ու հոբելյանը նշելու գործին և, որ դա էլ կլինի իր ամենամեծ հոբելյանը²:

Հայ ժողովուրդը, որ բարձր էր գնահատում Սենկևիչին, չէր կարող իր սիրած գրողի քսանհինգամյա հոբելյանը աննկատ թողնել: Հոբելյանական օրերին Սենկևիչի «Առանց դավանանքի» վեպի թարգմանիչ Տիգրան Հովհաննիսյանը հայերեն հրատարակված վեպի հետ միասին շնորհավորա-

² Słowo Julian Krzyżanowski, Henryka Stenkiewicza żywo i sprawy, Warszawa, 1968, s. 205.

կան նամակ է հղում հորեկյարին՝ գրելով հետեւյալը.

«Մեծարգո Հորեկյար

Խնդրում եմ ընդունեք Ձեր գլուխգործոցներից մեկին՝ «Առանց դավանանքի» իմ կատարած թարգմանությունը, որպէս խորը հարգանքի նշան այն ժողովրդի Մեծ ղավակին, որ ինչպէս անմահ Վիկտոր Հյուգոն է ասում. «Չնայած դարձել է փոքր ժողովուրդ, այնուամենայնիւ, կմնա որպէս Մեծ ազգ»:

Իմ ամենախորին հարգանքը և մեծարանքը

Պատվելի Հորեկյարին

Տիգրան Հովհաննիսյան»³:

Հորեկյարին շնորհավորական հեռագիր է ուղարկում նաև «Աղբյուր» և «Տարազ» հանդեսների խմբագրությունը: Հենուարում ասվում էր. «Համաշխարհային ժամանակակից գրականության հանճարեղ գեղագետ՝ փայլուն հորեկյարին հրճվանոք ողջունում է Աղբյուր և Տարազ հանդեսների խմբագրությունը:

Երկար ու երկար, պայծառ և այնպէս էլ բեղմնավոր շատ տարիներ շքնաղ Լեհաստանի արժանավոր ղավակին, նշանավոր հոգեբան-վիպասանին»⁴:

Սկսած 1900 թ. հոկտեմբերից հայ մամուլում պարբերաբար հրապարակվում են հոգվածներ, տեղեկություններ Սենկևիչի հորեկյանի և նրա գրական գործունեության շուրջը: Տոնակատարությունների մասին գրում են «Տարազ» հանդեսը, «Նոր-դար», «Մշակ» և այլ թերթերը: Մանրամասն նկարագրելով վարչավայում կայացած հորեկյանական տոնախմբությունը, «Մշակը» նշում է հատկապէս Օբլինհուրեկ կալվածքը Սենկևիչին նվիրելու իրողությունը, որն իրականացվել էր հորեկյանական մասնաժողովի կողմից՝ ժողովրդից հավաքած նվիրատվությունների միջոցներով: Թիրթը մեջբերում է հանդիսավոր երեկույթում Սենկևիչի արտա-

³ ՀՍՍՀ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Տիգրան Հովհաննիսյանի ֆոնդ, № 197 (նամակի պատճեն լեհերեն է):

⁴ «Տարազ», 1900, № 48, էջ 728:

սանած շնորհակալական խոսքը, որտեղ ասվում էր. «Ես դժվարանում եմ խոսքերով արտահայտել այն զգացմունքները, որ այժմ զգում եմ: Առաջվա ժամանակներում այսպես վարձատրում էին պատերազմի դաշտում հռչակված զինվորներին, իսկ այժմ պետք է ծառայել հասարակությանը ամենօրյա համառ աշխատանքով: Աստված օրհնել է իմ աշխատանքը, պակաս էր մի կտոր մեր հողից: Իմ երկիրը տալիս է ինձ և այդ: Որտեղի՞ց գտնեմ ես այնպիսի բուռն խոսքեր, որպիսին իմ շնորհակալությունն է: Սրտի խորքից աղաղակում եմ,—շնորհակալություն երկրին և թող ապրի այդ մեծ ժողովրդական սիրտը, որ գիտե այսպես զգալ, այսպես վարձատրել»⁵:

Ժամանակի հայտնի գրականագետ Մինաս Բերբերյանը դեռևս 1900 թ. հուլիսին նամակով դիմում է Յուրի Վեսելովսկուն՝ խնդրելով շտապ ուղարկել Սենկևիչի մասին հրատարակված գրքերից, որպեսզի հոբելյանական օրերին կարողանա հոգվածով հանդես գալ մամուլում⁶: «Նոր-դարի» դեկտեմբերյան համարում լույս է տեսնում լեհ գրողին նվիրված Բերբերյանի հոգվածը, որտեղ հայ գրականագետը մեկնում է (Իհարկե՝ համառոտ) Սենկևիչի ստեղծագործությունները: Խոսելով այդ մեծ հոբելյանի մասին, Բերբերյանը համոզմունք է հայտնում, որ այդ տոնախմբությունը անսպառնալի միջազգային բնույթ կընդունի, քանի որ ամբողջ աշխարհն է ճանաչում Սենկևիչին: «Մենք էլ անմասն չենք մնացել նրա տաղանդի ներգործությունից,—գրում է նա,—մենք էլ պարտք ենք համարում ի դիմաց հայ ընթերցողների, շնորհավորել տաղտնդավոր լեհ վիպասանի հոբելյանը և ցանկալ նրան երկար տարիներ աշխատելու ազգային և համամարդկային մտավոր ասպարեզի վրա»⁷:

Ստ. Լիսիցյանը հանդես է գալիս «Հենրիկ Սենկևիչ» խորագիրը կրող ծավալուն հոգվածով, որտեղ, բացի Սենկևիչի մասին կենսագրական տեղեկություններ հաղորդելուց, բնութագրում է ժամանակաշրջանն ու նրա ստեղծագործա-

⁵ «Մշակ», 1900, նոյեմբերի 20:

⁶ Տե՛ս ԳԱԹ, Յու. Վեսելովսկու ֆոնդ, № 95:

⁷ «Նոր-դար», 1900, դեկտեմբերի 9:

կան ուղին, վերլուծում ստեղծագործությունները՝ առաջին անգամ հայ հասարակայնությանը ամբողջական պատկերացում է տալիս լեհ գրողի կյանքի ու գրական գործունեության մասին: Հոգվածագիրը, բարձր գնահատելով Սենկևիչին որպես մեծ հայրենասերի, քաղաքացու և հումանիստ գրողի, նշում է. «...և եթե դեկտեմբերի 9-ին Վարշավայում տեղի ունեցած՝ Սենկևիչի 25-ամյա գործունեության հոբելյանին մասնակցել է ոչ միայն նրա ազգը, այլև ռուսը, անգլիացին, ֆրանսիացին, գերմանացին, իտալացին, հայը, առհասարակ բոլոր եվրոպական ազգերը, պատճառը հենց այն է, որ Սենկևիչը կարողացել է զարնել ամեն մի քաղաքակիրթ մարդու հոգեկան լարերին, ցույց տալով նրան նրա այժմյան խարխափող վիճակը ու կանչելով միահամուռ ոգևորության՝ հանուն սիրո դեպի ճնշվածները, զրկվածները, թուլիքը,—հանուն բոլոր անձնական, ազգային, կամայական ձգտումների ձուլման ընդհանրական բարօրության հետ...»⁸:

«Նոր-դարի» էջերում նույնպիսի ծավալուն հոգվածով հանդես է գալիս Սիմեոն Հախումյանը, որը կյանքի վերջին տարիներին ապրում էր Փարիզում: Նա հայ ընթերցողին նախ տեղեկացնում է, թե Սենկևիչը Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում և այլ երկրներում ինչպիսի մեծ ժողովրդականություն էր վայելում, ինչպիսի խորիմաստ ուսումնասիրություններ էին լույս տեսնում նվիրված նրա ստեղծագործություններին, ապա, ընտրելով Սենկևիչի հարյուրավոր կենսագիրներից Վալերիա Մարենե Մորցկովսկայի (Մոժկովսկայա)⁹ արբեցուցիչ, ջերմ սիրով գրված աշխատությունը, դրա հիման վրա համառոտակի ներկայացնում է լեհ գրողի ստեղծագործությունների տեսությունն ու հետաքրքիր գրվագներ պատմում Սենկևիչի կյանքից: Հախումյանը գրում է, որ եվրոպական աշխարհը՝ բառի իսկա-

⁸ «Մուրճ», 1901, № 1, էջ 108:

⁹ Վալերիա Մարենե Մոժկովսկայան (1832—1903) 60—70-ական թվականներին ճանաչում է գտնում իր պատմվածքներով, վիպակներով, վեպերով, ինչպես նաև ըննադատական արժեքավոր հոգվածներով:

կան առումով, միանում է հոբելյանական այդ մեծ տոնին, որովհետեւ Սենկևիչը իր հայրենիքի փառքն ու հանճարը դուրս է տարել նրա սահմաններից հեռու և այն նույնչափ սիրել է տվել օտարներին: «Եվ մենք՝ փոքր ազգերի որդիներս,—ավիլացնում է հոգվածագիրը,—սլիտի սքանչանանք այդ մեծ տաղանդով և հասարակական սիրով և, միանալով ընդհանուր տոնին, ամենքի հետ միասին աղաղակենք և հավատանք, որ sic itur ad astra*»¹⁰:

«Մշակը» տպագրում է Սենկևիչի հետևյալ բովանդակութեամբ շնորհակալական նամակը. «Այն բոլոր վայրերին, բաղաքներին, գիտական և հասարակական հիմնարկություններին, ընկերություններին, կուբներին, խմբագրություններին և մասնավոր անձերին, որոնք բարեհաճեցին գործով կամ խոսքով մասնակցել իմ զրական գործունեության 25-ամյա հոբելյանի տոնին, ուղարկում եմ սրտագին և ջերմ շնորհակալութեանս արտահայտությունը»¹¹:

Նույն թերթը իր ապրիլյան համարում հաղորդում է Սենկևիչի ստեղծագործությունների օտար լեզուներով կատարված թարգմանությունների, հոգվածների, հոբելյանի, կապակցութեամբ ստացված ուղերձների, դիպլոմների, ընծաների մասին, որոնք ցուցադրվում են Վարշավայում՝ Սենկևիչին նվիրված ցուցահանդեսում¹²:

Սենկևիչի հոբելյանի արձագանքները, կարծես, սթափեցնում են այլ ժողովուրդների մտավորականությանը՝ բարձրացնելու իրենց մշակույթի երախտավորներին արժանին հատուցելու ցավոտ խնդիրը: Այս կապակցութեամբ «Մշակի» 1903 թ. մայիսյան համարում կարգում ենք. «Հայտնի ռուս վիպագրող Ա. Պ. Չեխովի հարգողների մեջ..., միտք է ծագել՝ թույլտվություն ստանալ կառավարությունից և ստորագրություն բանալ ամբողջ Ռուսաստանում՝ կամավոր նվերներ հավաքելու՝ Չեխովին համազգային մի նվեր տալու

* Այդպես են բարձրանում մինչև աստղերը:

¹⁰ «Նոր-դար», 1900, դեկտեմբերի 9—10:

¹¹ «Մշակ», 1901, հունվարի 11:

¹² Տե՛ս «Մշակ», 1901, ապրիլի 20:

նպատակով, ինչպես վարվեցին լեհացիները Սենկևիչի վերաբերմամբ»¹³։

Այդ խնդրի լուծմամբ շատ ավելի վաղ մտահոգված էին հայ մտավորականները։ Արշակ Չոպանյանն, օրինակ, որն «Անահիտի» էջերում բազմիցս բարձրացնում էր ազգային գրականության ստեղծելու հարցը, մեծ կարևորություն է տալիս և հասարակության կողմից տաղանդը գնահատելու անհրաժեշտությանը։ Այդ առիթով Ա. Չոպանյանը գրում է, որ այն մարդիկ, որոնք մտահոգված են «հայ ժողովրդի վերականգնմամբ ու բարգավաճմամբ», պետք է հոգ տանեն ազգի համար շատ կարևոր նշանակություն ունեցող այդ խնդիրը լուծելու։ «Այս գաղափարն ըմբռնած ըլլալուն համար է,—գրում է նա,—որ լեհերը այնքան մեծադղորդ հանդիսավորությամբ մը տոնեցին մեկ քանի ամիս առաջ հոբելյանն իրենց Սենկևիչին, այսինքն այն գրագետին, որ իրենց ազգային պատմության ամենին նշանակալից գրուածներն հավերժացուց իր վիպերով և որ իր գրական տաղանդովն աշխարհի համակրությունը շահելով լեհ ազգության կենսունակությունն ապացուցելու անգնահատելի ծառայությունը մատուցց իր ազգին։ Այդ վիթխարի խանդավառությունը, զոր լեհերը ցուցց տվին Սենկևիչի հոբելյանի առթիվ, պետք է ամոթի սեղմումով մը կծկեր ամեն հայի սիրտ»¹⁴։

Վերը հիշված հոգվածում Մ. Բերբերյանը նույնպես անդրադառնում է այդ խիստ կարևոր նշանակություն ունեցող հարցին և օրինակ է բերում լեհ ազգին, որը գիտե շնորհակալ լինել իր ազնիվ և տաղանդավոր գործիչներին։ «Մենք էլ ենք ունեցել,—գրում է Բերբերյանը,—մեր սենկևիչները (Իհարկե ավելի փոքր չափով և ավելի նեղ մտքով) Ծերենց, Բաֆֆի, այժմ և ունենք գրողներ ու գրական գործիչներ, որոնք տասնյակ տարիներ նվիրված են ազգային առաջադիմության գործին. ի՞նչ արինք մենք, և ի՞նչ ենք անում մենք։ Ոչինչ և կամ գրեթե ոչինչ...»¹⁵։

13 «Մշակ», 1903, մայիսի 6։

14 «Անահիտ», 1901, № 7, էջ 104։

15 «Նոր-դար», 1900, դեկտեմբերի 14։

Այդ հուլող հարցին են անդրադառնում նաև «Նոր-դար», «Մշակ» թերթերը, «Տարազ» հանդեսը, որոնք գրե-լով հայ գրողների «աննախանձելի գրության մասին», նո-րից ու նորից են օրինակ բերում Սենկևիչին, որի հոբելյանը տոնում էր ոչ միայն հրախտապարտ ազգը, այլև ողջ աշ-խարհը:

Յուլիան Կժիժանովսկին, անդրադառնալով Սենկևիչի փառքի տարածման համար կարևոր նշանակութուն ունեցող հոբելյանական այդ տարեթվին, որը շուրջ մեկ տարի աշ-խարհի տարբեր կողմերից իր վրա էր հրավիրել բոլորի ուշա-դրութունը, նշում է, որ «...ինքը՝ Սենկևիչը ունենալով հու-մորի մեծ զգացողություն, ակնարկելով այն ժամանակվա բոլորի ուշադրութունը գրաված չինական պատերազմը, ասում էր. «Զինաստանով ու Սենկևիչով հագեցած եմ»¹⁶: Իր իսկ հոբելյարի այդ արտահայտությունը սպառիչ պատաս-խան է տալիս տոնակատարության ոչ միայն համազգային, այլև համաշխարհային նշանակության մասին:

Հայ հասարակայնության կողմից աննկատ չի անցնում նաև Սենկևիչի 70-ամյա հոբելյանը, որ լրանում էր 1915 թվականին: «Տարազ» հանդեսը այդ կապակցությամբ ըն-դարձակ հոդված է տպագրում, որտեղ հոդվածագիրը (ազգա-նունը նշված չէ) խոսում է լեհական գրականության վար-դացման մասին, վերլուծում Սենկևիչի հանրահայտ ստեղծա-գործությունները, ապա ուրախությամբ նշում, որ «Յո հր-թասի» հեղինակին, 70-ամյա հոբելյանի կապակցությամբ, Պետերբուրգի ակադեմիան ընտրել է պատվավոր ակադեմի-կոս: «Նշանակալից է այն հանգամանքը,—գրում է հոդվածա-գիրը,—որ Ռուսաստանը ի դեմս ռուս ակադեմիայի առա-ջինն է իր հղբայրական ձևերը մեկնում Լեհաստանին ի դեմս Սենկևիչի, որովհետև Սենկևիչը սոսկ լեհական գրող չէ, այլ ժամանակակից Լեհաստանի սիմվոլ, նրա ամենա-վառ ու պայծառ ներկայացուցիչը, նրա հոգեկան արժեք-

¹⁶ Julian Krzyżanowski, Henryka Sienkiewicza żywot i sprawy, s. 215.



ների՝ ամենքի կողմից ընդունված պահապանը, նրա փառավոր անցյալի հրգիշը»¹⁷:

Սենկևիչի 70-ամյակի առթիվ հայ ժողովրդի անունից «Տարազը» ողջույնի խոսք է ուղղում ամբողջ լեհ ազգին՝ «Հյուսիսում տանջվող բախտակից հղբայրներին», սրոնց մայր երկիրը նորից էր ճարակ դարձել սրի ու հրի՝ անբուժ խոցերին ավելացնելով նոր ու խորին վերքեր: «Այո, շատ է խավար հորիզոնը,—գրում է հանդեսը,—սակայն նա չի կարող լինել հավերժական. արշալույսը մոտ է բացվելուն ... Սակայն դուք մենակ չեք տանջվում: Խավար Ասիայի մի կորած անկյունում, կա և Ձեզ նման մի դժբախտ ժողովուրդ, որ դարևոր հալածանքին տոկալով և մահվան հրկյուղն արհամարհած, այժմ սրտատրուփ ձգտում է պայծառ ապագայի: Այո՛, նա իսկ և իսկ նման է Ձեզ, այդ հավերժ տանջված, բայց և երկաթի պես տոկուն հայ ժողովուրդը: Գիշատված է Ձերի նման և նրա չքնաղ հայրենիքը: ... Սակայն նա պիտի կռվի մինչև վերջ անհուսահատ հռանդով: Նա հետևաբար պիտի տոկա բոլոր արհավիրքներին, նա պիտի հուսա անվերջ, բանի որ նա անսասան հավատում է գալիք լավագույն ապագային...

Այո, շատ ենք նման միմյանց, ով բախտակից հղբայրների. Ձեզ տանջում է միատեսակ ներկան, և անշուշտ, Ձեզ սպասում է նման ապագա...: Ուրեմն, կրկին ողջույն Ձեզ, որ տանջվել գիտեք, տոկալ և հուսալ...»¹⁸:

Սենկևիչի գրական գործունեության 70-ամյա հոբելյանը նշելուց մեկ տարի հետո, աշխարհի թերթերը հաղորդում են լեհ մեծանուն գրողի մահվան բոթը: Ի հիշատակ Սենկևիչի՝ տարբեր երկրների եկեղեցիներում կատարված հոգեհանգիստները, ցերեկույթները, մամուլի էջերում հրապարակված մահախոսականներն ու հողվածները ապացույց էին այն բանի, թե լեհ վիպասանը այդ երկրում ինչպիսի ժողովրդականություն էր վայելում և որքանով էր ազդեցություն թողել տվյալ ազգի մշակույթի վրա:

¹⁷ «Տարազ», 1915, № 8—9, էջ 102:

¹⁸ Նույն տեղում:

Հայ մամուլը նույնպես հաղորդում էր Սենկևիչի մահվան հետ կապված ամեն մի մանրամասնություն: Հատկապես «Մշակը» պարբերաբար գրում է հոգվածներ, հանգամանորեն նկարագրում Սենկևիչի թաղման արարողությունը, տեղեկություններ տալիս կազմակերպված ցերեկույթների մասին, ծանոթացնում լեհ գրողի թողած գրական ժառանգությունը:

«Մշակը» չի բավարարվել Սենկևիչի մահվան վերաբերյալ միայն հաղորդումներ տալով: Սենկևիչի հիշատակին նվիրված Ստ. Զորյանի հոգվածը առաջինն է երևում «Մշակի» էջերում: Զորյանը՝ Սենկևիչին դասելով դարի մեծագույն գրողների՝ Զուլայի, Տոլստոյի շարքը, գրում է, որ լեհ հռչակավոր գրողը իր գրվածքներով հզոր ապացույցներ է տվել լեհ ժողովրդի մեծ կարողության մասին: Կենսագրական տեղեկությունների հետ միասին, հոգվածագիրը ընդհանուր գծերով բնութագրում է Սենկևիչի ստեղծագործական ուղին, տալիս որոշ գործերի գնահատականը: Նրան համարելով համաշխարհային գրականության սյուներից մեկը, որը կյանքից հեռացավ այն ժամանակ, երբ պետք է վճուժեր իր սիրելի հայրենիքի ճակատագիրը, Զորյանը գրում է. «Հանձին Հ. Սենկևիչի, համաշխարհային գրականությունը կորցնում է իր ամենալավագույն դեմքերից մեկին, իսկ լեհ ազգը իր ամենամեծ գրողին, որն իր հզոր տաղանդով այնքան համակրություններ գրավեց դեպի լեհ ազգը»:

Հավերժ հիշատակ և հավիտենական հանգիստ տանջված ազգի մեծ գրողին»¹⁹:

«Մշակում» տալագրվում է նաև թերթի խմբագիր Հ. Առաքելյանի առաջնորդող հոգվածը: Այդտեղ խոսվում է քաղաքական ինքնուրույնությունից զուրկ լեհ ազգի մասին, որը, հոգու, մտքի ու սրտի մեջ դարեր շարունակ ամբարիկով համամարդկային լավագույն ավանդույթներ, չիդհալներ, վերապրել է նաև բազում վշտեր ու կսկիծներ: Դրանք աղնըվացնելով մարդկային հոգին, իրենց ճնշված, թշվառ դրության մեջ անգամ կարողացել են տալ այնպիսի մեծ մար-

¹⁹ «Մշակ», 1916, նոյեմբերի 8:

դիկ, որոնք ոչ միայն իրենց ազգի, այլև ամբողջ մարդկության պարծանքն են հղել: Սենկևիչին անվանելով «տիեզերական գրող», հողվածագիրը գրում է, որ լեհ գրողի գրքավածքները «կրթել և դեռ բազում դարեր կրթելու են ոչ միայն լեհ, այլև ուրիշ ազգերի բազմաթիվ սերունդներ»: Նմանության և շոշափման եզրեր գտնելով հայ և լեհ ազգերի պատմական ճակատագրերում, Առաքելյանը գրում է. «Կյանքի ծանր հարվածներ, հնագույն մաշված կուլտուրա, մարտիրոսագիտություն, ապագայի վառ հույսեր և երազներ, հավատ դեպի ճշմարտության վերջնական հաղթանակը, դեպի պայծառ, լուսավոր ապագան, վերջապես, այն հանգամանքը, որ լեհաստանը իր ծոցում ջերմ ապաստան է տվել հայ փախստական գաղթականներին քրիստոնեաբար—այդ ամենը ստեղծել են երկու բազմաշարժար ազգերի միջև սիրո, համակրանքի շաղկապ: Ճիշտ է, հայերը շունեն Սենկևիչի պես համաշխարհային հանճարներ, բայց նրանք իրենց ածուխ մեջ, որքան հնարավոր է եղել Ասիայի խավար խորքերում, նպաստել են տարածմանը քրիստոնեական և հիվուպական մեծ քաղաքակրթության, որի ջահակիրներն են եղել լեհացիք»²⁰:

«Տարազի» էջերում Սենկևիչին նվիրված հողվածով հանդես է եկել նրա հայ առաջին թարգմանիչ Տիգրան Նազարյանը՝ խոսելով լեհ գրողի գրական ուղու և նրա առանձին ստեղծագործությունների մասին: Նազարյանը իր հարգանքը մատուցելով «հայրենատենչ մեծ մատենագրի հիշատակին», իր «անեղր իղձն» է հայտնել լեհ ժողովրդին՝ տեսնելու լեհերի «ոտնակոխ ու ավեր հայրենիքը ազատ ու շին»²¹:

Թիֆլիսում հայ հասարակության համար Սենկևիչի հիշատակին տրված առաջին հոգեհանգիստը կատարվում է «Գրական-գեղարվեստական Սալոնում», որին ներկա էին և «Լեհական տան» ներկայացուցիչները²²: Սգո հանդեսը դամբանական ճառով բաց է անում Տիգրան Նազարյանը և «Գրական Սալոնի» կողմից խորին վշտակցության զգացում-

²⁰ «Մշակ», 1916, դեկտեմբերի 22:

²¹ Տե՛ս «Տարազ», 1916, № 11, էջ 101:

²² Նույն տեղում, էջ 102:

ներ հայտնում լեհ ժողովրդին: Լեհական կազմակերպության ղեկավարների ներկայացուցիչը հայտնելով իր շնորհակալությունը՝ արտահայտված հարգանքի և վշտակցության համար, նաղարյանին խնդրում է Սենկևիչի հայերեն հրատարակություններից և նրա մասին հրապարակված հոդվածներից երկուական օրինակ նվիրել իրենց կազմակերպությանը, Կրակովի սենկևիչյան գրադարանին հանձնելու համար:

Սակայն Սենկևիչի հիշատակին նվիրված ամենամեծ միջոցառումը, որ կազմակերպել էր Թիֆլիսի լեհական գաղութը, «Արախտական ընկերության» թատրոնի ղազլիճում կայացած գրական-գեղարվեստական հանդեսն էր²³: Հանդեսին, լեհական գաղութի անդամներից բացի, լեհ գրողի հիշատակին իրենց հարգանքի վերջին տուրքը մատուցելու էին եկել ուսու, հայ, վրացի գրական, մշակութային բոլոր հաստատությունների ներկայացուցիչները: Դամբանական ճառեր են ասում նախ լեհերը՝ Վիսրովսկին ու Կորբովսկին, վրացական կազմակերպությունների անունից՝ Մաչավարիանին, հայ կազմակերպությունների անունից՝ Ալ. Շիրվանզադեն: «Խորին հուզմունքով է, որ հս մերձենում հմ լեհական մեծ վիպասան և մեծ հայրենասեր Սենկևիչի հիշատակին,—ասում է Շիրվանզադեն:

—...Իբրև հայ գրող, խոնարհվում հմ հանճարեղ վիպասանի անմահ հիշատակի առջև, իբրև հայ մարդ, բերում հմ տառապանքների մեջ հեծծող հայ ժողովրդի խորին վշտակցությունը և ջերմ համակրության արտահայտությունները հույն տառապանքները կրող լեհ ժողովրդին:

Մենք հայերս միայն մի ցանկություն ունենք այսօր լեհերի համար: Թող շուտով դա այն երջանիկ օրը, երբ Սենկևիչի հպարտ հոգին հավիտենականության մեջ կհրճվի լուսապայծառ Լեհաստանի կատարյալ ազատությամբ»²⁴:

Այնուհետև հայ գրողների ընկերության նախագահ Հովհ. Թումանյանը, դափնեպսակ դնելով Սենկևիչի կիսանդրու պատվանդանին, ասում է. «Անմահ հոգի, որ Հենրիկ Սենկևիչ անունով մարմին առար բազմատանջ լեհ ազգի կյանքում՝ նրա տանջանքները փարատելու համար ընդունիր աշ-

²³ Տե՛ս «Մշակ», 1916, դեկտեմբերի 24:

²⁴ Նույն տեղում:

խարհքի ամենատանջված ժողովուրդներից մեկի՝ հայ ժողովրդի գրական գերդաստանի սերն ու հիացումը: Դո՛ւ, որ ազատ, լավագույն օրերի արշալույսը վառեցիր քո ցեղի մեջ և արդեն նրա առաջին ցուքերն ընկնում են թարմ շիրիմիդ վրա, փառաբանում է քեզ միշտ արշալույսի ձգտող հայ ժողովրդի գրականությունը: Դո՛ւ, որ ընդհանուր հղբայրության ազնիվ կապերով շաղկապեցիր ազգերն ու ազգի մարդիկ ու հղբայրորեն համախմբեցիր դադաղիդ ու հիշատակիդ շուրջը, օրհնում են քեզ հղբայրության ու սիրո էնքան կարոտ հայ ժողովրդի գրողն ու ընթերցողը: Եվ դու, որ համաշխարհային գեղեցիկ գրականության հավերժական տաճարում ճշմարտության, բարության ու գեղեցկության մեծ քուրմերից մինը հղար, քո վսեմ հաղթանակի համար դափնի սրսակ ենք ձոնում քո հիշատակին աշխարհի հնագույն գրականություններից մեկի՝ հայ գրականության անունից»²⁵:

Այդ օրերին մի շարք հայկական կազմակերպություններ հեռագրեր են ուղարկում Ժնև և Շվեյցարիայի Վիվեյ քաղաքի (որտեղ վախճանվել էր լեհ գրողը) «Լեհական գլխավոր կոմիտեին», իրենց ցավակցությունը հայտնելով հայ ժողովրդի սիրված գրող Սենկևիչի մահվան առթիվ:

Հայ գրողների ընկերության վարչության կողմից ուղարկված հեռագրի մեջ ասվում էր. «Հայ գրողների Ընկերությունը հայտնում է իր խորին ցավակցությունը լեհական գրական գերդաստանին և լեհ ժողովրդին, իրենց մեծ վավակի՝ Հենրիկ Սենկևիչի մահվան առթիվ, որի տաղանդավոր երկերը վաղուց ջերմագին սիրված են հայ ժողովրդի մեջ: Թող միշտ բարգավաճի լեհական պանծալի գրականությունը և Միցկևիչի ու Սենկևիչի գերհղմանների վրա ծնի ու զորացնի նորանոր մեծ կրողներ ու պատգամախոսներ լեհական ոգու»²⁶:

Մոսկվայում հրապարակվող «Армянский вестник»-ի կողմից Ժնևի լեհական կոմիտեին ուղարկված հեռագրում ամսագրի խմբագրությունը խնդրում է ընդունելու իրենց հղբայրական ցավակցությունը այն ծանր կորստի համար, որ

²⁵ «Թումանյանը քննադատ», Նրևան, 1939, էջ 383:

²⁶ Նույն տեղում, էջ 384:

կրեց լեհ ժողովուրդը ի դեմս մեծ գրողի և մեծ քաղաքացու՝ Հենրիկ Սենկևիչի: «Այն ծանր րոպեին,—ասվում է այնուհետև հեռագրում,—երբ որոշվում է լեհ և հայ ժողովուրդների ապագան, հայ ազգն ավելի, քան մեկ այլ ուրիշը հասկանում է լեհական ազգային վշտի ծանրությունը և հարգալից իր գլուխն է խոնարհում Մեծ գերեզմանի առջև»²⁷:

«Մշակի» խմբագրությունը նույնպես ցավակցական հեռագիր է ուղարկում Վեվեյ²⁸: Մոսկվայի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող հայ ուսանողները ևս հեռագրում են Ժնևի Լեհական կոմիտեին, խոր ցավակցություն հայտնելով լեհ ժողովրդի երիտասարդությանը՝ ազգի մեծ հայրենասեր Հենրիկ Սենկևիչի մահվան առթիվ, և իրենց հույսն են հայտնում, որ մոտ է այն ժամը, երբ կիրագործվեն լեհ ժողովրդի իդեալները, որն ազդարարել էր նշանավոր գրողը²⁹:

Սենկևիչի ստեղծագործությունների թարգմանությունները, ինչպես առանձին հրատարակությամբ, այնպես էլ հայ մամուլի էջերում, թեև հրեացել են դեռևս XIX դարի 80-ական թվականներից, այնուամենայնիվ, մինչև այժմ չի հետադառվել ու ամփոփվել, թե հայ գրական միտքը ինչպես է ընկալել ու դնահատել «Յո հրթաս» և «Առանց դավանանքի» վեպերի հեղինակի ստեղծագործություններն ու արծարծած գաղափարները:

Քանի որ հայ գրականության հետ Սենկևիչի ունեցած առնչություններն ընդհանրապես չեն ուսումնասիրվել, ապա մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն հարցերը, թե XIX դարի վերջում և XX դարասկզբին Սենկևիչի ստեղծագործությունները ինչպիսի՞ նշանակություն են ունեցել հայ իրականության, հասարակական մտքի ու գեղագիտական ըմբռնումների համար, ինչպիսի՞ ազդեցություն են թողել հայ գրականության զարգացման վրա և հատկապես նրա «Եռերգությունը» ի՞նչ տիպաբանական ընդհանրություններ ունի հայ պաշտամովեպի, մասնավորապես՝ Սուրաքանի «Գեվորգ Մարզպետունու» հետ:

²⁷ «Армянский вестник», 1916, № 44.

²⁸ Տե՛ս «Մշակ», 1916, նոյեմբերի 13:

²⁹ Տե՛ս «Армянский вестник», 1916, № 44.

Հ. ՍԵՆԿԵՎԻՉԻ ՆՈՎԵԼՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բացառիկ մեծ է Հենրիկ Սենկևիչի դերը հայ-լեհական գրական կապերի պատմության մեջ: Ժամանակին հվ-րուպական ոչ մի վիպասանի երկերից այնքան շատ չեն թարգմանվել հայերեն, որքան Սենկևիչի գործերից:

Ռոմանտիզմի շրջանում հանդես եկած Ա. Միցկևիչից ու Յու. Սլովակուց հետո հատկապես Սենկևիչն էր, որն իր տաղանդավոր գործերով (Իհարկե է. Օժեկովայի, Բ. Պրուսի, Մ. Կոնոպնիցկայի հետ միաժամանակ) «հարկադրեց» համաշխարհային հասարակայնությանը ուշադրությունը սեռել լեհ գրականության վրա: Նրա ստեղծագործությունը Լեհաստանի համար, ինչպես համընդհանուր կուլտուրայի, այնպես էլ քաղաքական իրադրության առումով, հսկայական նշանակություն ուներ, քանի որ երկիրը մասնատված լինելով երեք տերությունների՝ Պրուսիայի, Ավստրիայի և ցարական Ռուսաստանի միջև, ապրում էր իր մեծ ողբերգություններից մեկը: Դարավերջի լեհ գրողներից թերևս առավել Սենկևիչն էր, որն իր ազդի անկախության համար մղած պայքարում, լինի դա գեղարվեստական ստեղծագործություններում, թե հրապարակախոսության ու հասարակական գործունեության մեջ, իր բողոքի ձայնն է հնչեցնում հանուն ճնշված հայրենիքի ճակատագրի:

Սկսած 1879 թ., Սենկևիչին եռանդալին թարգմանում են աշխարհի տարբեր լեզուներով: «Յո երթասի» հեղինակը ամենաշատ կարգացվող և մեծ ժողովրդայնություն վայելող գրողներից էր ոչ միայն Լեհաստանում, այլև շատ ու շատ երկրներում: Դրա լավագույն վկայություններից են պե-

տերբուրգյան «Kraj» լեհական թերթի 1900 թ. հրապարակած «Կուրսկի գրադարանի» կատարած վիճակագրության արդյունքները, որոնց համաձայն «Յո երթասի» հեղինակը Ռուսաստանում ունեցած իր ընթերցողների քանակով գրավում էր երրորդ տեղը՝ Տոլստոյից և Զոլաշից հետո:

Ճիշտ է, հայ ընթերցողների շրջանում ժամանակին վիճակագրական նման հաշվառումներ չեն կատարվել, սակայն լեհ վիպասանի համարյա բոլոր ստեղծագործությունների հայերեն թարգմանությունները, ինչպես նաև մամուլի էջերում պարբերաբար հրապարակված գրախոսականներն ու տեղեկությունները՝ վիպասանի թե՛ ստեղծագործությունների, թե՛ հրապարակախոսության և թե՛ անձնական կյանքի վերաբերյալ, վկայում են հայ հասարակայնության մեջ Սենկևիչի լայն ճանաչում գտնելու մասին:

Պատահական չէ այն փաստը, որ հայ մամուլը՝ բարձր գնահատելով Սենկևիչին, նրա անունը դրել է դարի խոշորագույն գրողների՝ Իբսենի, Տոլստոյի, Մերկդիտի, Զոլաշի կողքին, գրելով հետևյալը. «...ահա անուններ, որոնք ժամանակակից բեկտրիստիկայի փառքն ու պսակն են կաղմում: Նորվեգիա, Ռուսիա, Անգլիա, Ֆրանսիա, Լեհաստան—ահա և նրանց հայրենի երկրները, որոնք հիրավի պարծինալու մեծ տեղ ունեն իրենց հեղինակավոր զավակներով. հեղինակություն, մեծ հռչակ ու պատիվ, ինչպիսին մի ժամանակ վայելում էին Գյոթեի, Շիլլերի և Հյուգոյի պես գրողները»¹:

Այն բացառիկ հետաքրքրությունը, որ ունեցել են հայերը Սենկևիչի նկատմամբ, առաջին հերթին բացատրվում են նրա նովելների ու վեպերի հիմքում դրված վսեմ գաղափարներով ու հայրենիքի նկատմամբ ունեցած սիրով: Շիրվանզադեն խոստովանել է, որ սլավոնական ազգերի գրողներից (անշուշտ, բացի Տոլստոյից) բոլորից վեր է դասում Սենկևիչին և գտնում, որ «այդ միլիոնանոց ժողովուրդների մեջ նրա տաղանդին հավասար մեկը չկա»²: Շիրվանզադեն Սենկևիչին հայրենասիրական զգացումների արթնացման վարպետ է

¹ «Նոր-դար», 1898, մարտի 26:

² ԳԱԹ, Յու. Վեսելովսկու ֆոնդ, № 342:

համարում և առկա ավելացնում. «...Կա մի փայլուն գոհար ևս այդ հանճարեղ ստեղծագործողի գործերի մեջ, որ առանձնապես հրապուրիչ է մեզ՝ հայերիս համար: Դա ազգային պատվարժանության և անհատական հպարտության սթանդելիզացումն է, որով տոգորված են նրա բոլոր երկերը: Եվ այդ տեսակետից՝ Սինկեիշը ներկայանում է իբրև մեկը մեր լավագույն ուսուցիչներից»³:

Լեհ մեծանուն գրողի ստեղծագործության դադափարական կողմն էր, որ առաջին հերթին հսկայական հտաբրբրություն է առաջ բերում հայ իրականության, ընդ որում՝ ամենատարբեր շրջաններում: Տարբեր հոսանքների պատկանող թերթերն ու ամսագրերը, հատկապես «Մուրճը», «Մշակը», «Արձագանքը», ինչպես նաև «Նոր-դարը», «Տարազն» ու «Լուծան» սկսում են հռանդուն տպագրել Սինկեիշի ստեղծագործությունները: Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ նշված թերթերն ու ամսագրերը, որքան էլ հայացքների ու գեղագիտական սկզբունքների հարցերում ունեին տարաձայնություններ, իսկ ազգային-ազատագրական խընդիրների կապակցությամբ՝ տարբեր հայեցողություն, այնուամենայնիվ բոլորին միավորում էր համազգային հարցը: Նրանց ոգեշնչում էին հայրենասիրությամբ ու անձնազոհությամբ տոգորված այն բարձրարժեք գեղարվեստական ստեղծագործությունները, որոնք համահնչուն էին հայ իրականության տվյալ ժամանակաշրջանի իրադարձություններին և առավել կամ պակաս՝ ուսանելի հայերի համար:

Հայ իրականության մեջ «Մուրճ» ամսագիրը առաջինն է, որն իր էջերը տրամադրում է Սինկեիշի ստեղծագործություններին: Նշելով արտասահմանյան գրականությունը պրոպագանդելու անհրաժեշտությունը, ամսագիրը գրում է. «Ձբաղվել միայն հայկական գրականությամբ և հաշիվ տալ միայն ընթացիկ հայկական դրբերի մասին, այդ կնշանակեր չափազանց նեղ հասկացողություն ունենալ հայ ինտելիգենտ ընթերցողների մտավոր պահանջների մասին: Հարկավոր է, որ հայ ընթերցողի աչքի առջև մի պատուհան բացվեր, որ-

³ «Մշակ», 1916, գեկտեմբերի 24:

տեղից նա կարողանար իր տեսողությունը տարածել նաև օտար, մեղնից շատ և շատ ավելի լուսավոր և առաջադեմ ազգերի մտքի ու ոգու արդյունքների վրա»⁴։

Մինչ «Մուրճի» հանդես գալը, «Հյուսիսափայլի», «Փորձի» և այլ թերթերի ու ամսագրերի էջերում արդեն հանդիպում ենք արևմտաեվրոպական ու ռուսական գրողներից կատարված թարգմանությունների ու եվրոպական մտքի մի շարք կարևոր հարցերի ուսումնասիրությունների։ Արասխանյանցի «Մուրճը» այս առումով լրացնում է իր նախորդների բռնած ճանապարհը, ձգտելով հայ ազգի «թմրած, դարերի փոշով ծածկված միտքը» դուրս բերել առանձնությունից, շփել նրան ընդհանուրի հետ, և դրանով իսկ ցույց տալ «նրա համեմատական ուժը՝ ընդհանուր մարդկությունը ծառայելու և մարդկությանը իրեն ծառայեցնելուն»⁵։

Եվրոպական մտքի հետ հայ իրականությանը ծանոթացնելու նրա ծրագիրն իրագործվում է ամսագրի հիմնադրման առաջին իսկ օրերից։ «Մուրճը» հանդես է գալիս բաղմաթիվ տեսական հոդվածներով՝ գիտություն, գրականության, փիլիսոփայություն, պատմության հարցերի շուրջը և մեծ ճաշակ ցուցաբերում թարգմանական գրականության հարցում, տպագրելով ընտիր էջեր համաշխարհային գրականությունից։ Ուշագրավ է այն փաստը, որ թարգմանական գրականությունը չնայած միշտ էլ մեծ տեղ էր բռնում ամսագրում, այնուամենայնիվ, հիմնադրման առաջին հրեք տարիներին եվրոպական գրականությունից տպագրում է փոքր պատմըվածքներ, և միայն 1892 թվականից է սկսում տպագրել մեծ ծավալի գործեր, որոնցից առաջինը Սենկևիչի «Առանց դավանանքի» վեպն էր։

Չնայած դարավերջին «Յո երթասի» հեղինակն իր պատմավեպերով էր նվաճել հայ ընթերցողի սիրտը, այնուամենայնիվ հավասարաշափ թարգմանվում էին նաև նրա առաջին շրջանի նովելները։ Իհարկե, լեհերի (ինչպես և հայերի) «ոգու ամրապնդման» համար խոշոր նշանակություն է ունե-

⁴ «Մուրճ», 1889, № 7, էջ 889։

⁵ Տե՛ս նույն տեղում։

նում Սենկևիչի «Եռերգությունը» («Տրիլոգիան»), սակայն գրողի փոքրածավալ գործերը ևս մեծ արձագանք են ունենում:

Վաղ շրջանի նովելներում Սենկևիչն աշխատում էր իրագործել այն խնդիրները, որոնք ինքն էր դնում գրականության առջև: «Գեղարվեստական գրականությունը, հատկապես պատմվածքը,—գրում է Սենկևիչը,—եթե ցանկանում է նշանակություն ունենալ, պահպանել իր կենսունակությունը, ներգործել, եթե ցանկանում է լինել զգացմունքային, ապա պետք է արձագանք հարուցի, որի մեջ անպատճառ պետք է լինի սրտից ու գիտակցությունից բխող բոլոր ձրգտումները, պետք է կենդանի հարցերի պատասխանը լինի, իրական, ներկա և անցյալ կյանքի բացատրությունը առաջ, նրա լուսավոր ու ստվերոտ կողմերը բացահայտի և ամենից առաջ լինի ճշմարտացի»⁶:

Դեռևս 1898 թ. Ստ. Լիսիցյանը «Յո երթաս» վեպի հայերեն թարգմանության առաջաբանում վերլուծելով Սենկևիչի ստեղծագործությունները, բարձր գնահատական է տալիս լեհ հեղինակի նովելներին, գրելով հետևյալը. «...ստեղծագործական անաշառություն—օբյեկտիվիզմ, նկարագրության ռեալական եղանակ, վառ երևակայություն և խոր ըմբռնողություն: Այս գծերը կենսական երևույթների զեղարվեստական վերարտադրության, հոգեբանական վերլուծության ճշտության և մարդասիրական անկեղծ զգացմունքի հետ միասին՝ ինքնուրույն բնավորություն են տալիս Սենկևիչի գրական գործունեության առաջին շրջանի բոլոր արտագրություններին, որոնցից լավագույններն են «Հանյա», «Պատկերներ ածուխով», «Յանկո երաժիշտ», «Հացի համար», «Պողնանի ուսուցչի հիշատակարանից» և մի քանի ուրիշները»⁷:

Սենկևիչի նովելներին բարձր գնահատական է տվել նաև գրականագետ Զ. Տեր-Գրիգորյանը: «Սենկևիչ-վիպասանի պատմական էպոպեաների հսկայական կտավներից դուրս,—

⁶ Henryk Sienkiewicz, Nowele wybrane, Warszawa, 1969, s. 332

⁷ Հենրիկոս Սենկևիչ, Յո երթաս, Թիֆլիս, 1898, էջ Դ:

գրում է նա,— առանձին տեղ են բռնում նրա գեղեցիկ նովիլները իրենց քնքուշ գեղանկարչությամբ: Նրանցում է առաջին անգամ արտահայտվել այդ մեծ գրողի տաղանդը, նրանք մինչև հիմա էլ չեն կորցրել իրենց ուժը և բանաստեղծական հմայքը»⁸:

Շատ կարևոր է նշել, որ Սենկևիչի նովելներից ու պատմելվածքներից հայերեն են թարգմանվել մեծ մասամբ հայրենասիրական հնչեղություն ունեցող գործերը: Առաջին շրջանում գրված այն ստեղծագործությունները, որոնցում հեղինակը պատկերել է հատեֆորմյան ժամանակաշրջանի ստորին ու միջին դասակարգերի կյանքը, փաստորեն դարավերջին արձագանք չեն գտել հայ իրականության մեջ: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ ստեղծված պատմական պայմաններում հայ ժողովրդի համար ազատագրության հարցը առաջին պլանի վրա էր դրված:

Սենկևիչի հետ հայ ընթերցողը ծանոթանում է 1881 թ., երբ առաջին անգամ հայերեն, առանձին գրքով լույս է տեսնում լեհ գրողի «Պողնանի ուսուցչի օրագրից» խորագիրը կրող նովելը: Այս գործը, որ լույս է տեսել Շուշիում, փաստորեն 80-ական թվաձյաններին Սենկևիչից թարգմանված միակ գործն է (առաջժամ թե՛ մամուլի էջերում, թե՛ առանձին գրքով չենք հանդիպել հեղինակի մեկ այլ գործի թարգմանության): Նովելը, որտեղ բացորոշ երևում է, թե ինչ վիճակում էր գտնվում լեհ դպրոցական սիստեմը ցարական Ռուսաստանի և Պրուսիայի տիրապետության օրոք, տպագրվում է նույն իրավիճակում գտնվող Շուշիում, որտեղ ցարիզմի կողմից հայկական դպրոցները փակելու, մշակութային օջախների նկատմամբ հալածանք սկսելու հանգամանքը բորբոքել էր հայերի դժգոհությունը ցարական կառավարությունից:

Տիրբան Նազարյանի թարգմանությամբ և հրատարակությամբ, Միրզաջան Մահտեսի Հակոբյանի տպարանում է լույս տեսնում Լիտվոսի (Սենկևիչը ստեղծագործական կյանքի առաջին շրջանում հանդես էր գալիս այդ կեղծանվան

⁸ «Տարազ», 1915, № 8—9, էջ 106:

տակ) «Պողնանի ուսուցչի օրագրից» նովելը, որն ըստ թարգմանչի նախատեսվում էր ծնողների և դաստիարակների համար⁹։ Նաղարյանը պատմվածքը թարգմանում է ռուսերենից, որը տպագրվել էր 1880 թ. մարտ ամսին «Вестник Европы» ամսագրում (լեհերեն հրապարակվել էր 1879 թ. դեկտեմբերին «Kraj» ամսագրում)։

Տիգրան Նաղարյանի անունը մինչև այժմ չի հիշատակվել որպես Սենկևիչի առաջին հայ թարգմանչի, և ավելին՝ նույնիսկ իր ժամանակին ոչ ոք այդ մասին չի հիշատակել։ Եվ երբ, 1916 թ. ամբողջ աշխարհում սգո հանդեսներ էին կատարվում Սենկևիչի մահվան կապակցությամբ, և հայ մամուլը նույնպես տպագրում էր բազմաթիվ հոդվածներ, որտեղ հիշատակվում էին Սենկևիչից կատարված հայերեն թարգմանությունները, Տ. Նաղարյանը գրում է, որ իր կյանքի արշալույսին է նշմարել գրական հորիզոնի վրա երևացող Սենկևիչին, որը «ջերմացնում էր դիտողին ավելի, քան փարթամ արեգի նույնիսկ մայիսյան կենարար ճառագայթները»։ «Հեղ, հաղիվ պեծին տվող Litwos-ի գրական կամարի վրա,—շարունակում է Նաղարյանը,—այս աստղը սիրեցի ամբողջ իմ էությանմբ և նրա բորբոքված սրտից անպաճույճ «Պողնանի ուսուցչի օրագրից» պատմվածքը հղավ իմ անդրանիկ թարգմանությունը յոթանասունական թվականների վերջը»¹⁰։ Թարգմանիչը գրում է, որ մի քանի տասնամյակ հետո միայն ուրիշները կրկին թարգմանում են այդ ստեղծագործությունը, և որ ոչ ոք չգիտի, որ ինքն է առաջինը հայերի մեջ նկատել այդ «պսպղին տվող, անհայտ՝ վերջը համաշխարհային փայլուն ու պայծառ աստղ-արեգը»։

Նաղարյանը «Պողնանի ուսուցչի օրագրից» գրքի «Աղդ»

⁹ Շուշիի «Հրատարակչական գրասենյակի» տնօրեն, հետագայում՝ «Աղբյուր», «Տարազ» ամսագրերի խմբագիր Տ. Նաղարյանը նախօրոհ հայտարարություն է տալիս «Մշակին» (1881, № 70)՝ խոսելով իր «Հրատարակչական գրասենյակի» կողմից առաջիկայում հրատարակվելիք վեց գրքերի մասին, որտեղ ինքնուրույն ու թարգմանական գործերով հարուստ «Քնար խոսնակի» և Ալֆոնս Դոդի պատմվածքի հետ միաժամանակ պետք է լույս տեսներ Լիսիոսի «Պողնանի ուսուցչի օրագրից» նովելը։

¹⁰ «Տարազ», 1916, № 11, էջ 101։

նախաբանում տեղեկություններ է տալիս լեհ երիտասարդ գրողի մասին և այդ ունակության գործը համարում Սենկևիչի հետագա փառքի նախադրյալը: Ճիշտ կանխորոշելով սկսնակ գրողի ապագան ու նկատելով նրա գրական ուղղությունը, Նաղարյանը գրում է. «Երիտասարդ հեղինակը նոր է անուն հանել յուր ազգային գրականության մեջ և խոստանում է լինել մինը ժամանակակից հոգվույն համաձայն գրող արդյունաշատ տաղանդներից և այդ հրեում է նրանից, որ նա ներկայանում է մեզ պարզապես՝ հետևող այն շարժման, որ նկատվում է լեհական մատենագրության մեջ, այն է՝ անցումը ռոմանական (ռոմանտիկական—Բ. Բ.) գրական ոճից դեպի ավելի իրական դպրոցը, որի աղբյուրը բացառապես չէ ֆանտազիան, այլ նկարագրությունն և մեղ շրջապատող իրական կյանքի ուսումնասիրությունը, որի համար ֆանտազիան է մի օգնական գրական շենքը կառուցանելու համար»¹¹:

Հետաքրքիր է, որ Նաղարյանը, քաջ գիտակցելով զերբում շոշափված ժամանակի կարևոր պրոբլեմների նշանակությունը հայ հասարակության համար, որպես բնաբան վերցնում է Սպինոզայի «Ոչ լալ, ոչ խնդալ, այլ հասկանալ» խոսքերը:

Սենկևիչից հայերեն կատարված այս առաջին թարգմանությունը արժեքավոր է և նրանով, որ ցույց է տալիս, թե լեհ հեղինակի վաղ շրջանում գրած այդ հոդվելը որքան արագ է արձագանք գտնում հայ հասարակայնության մեջ:

Հոգեբանական այս նովելի թեման, որտեղ նրբորեն նկարագրվում է լեհ ժողովրդի ողբերգությունը հրեք նվաճող պետությունների տիրապետության տակ, այնքան համահնչուն էր տվյալ ժամանակաշրջանում նույն ճակատագիրն ունեցող հայ ժողովրդի համար, որ հետագայում նովելի թարգմանությունը ձեռնարկում են ևս երկու թարգմանիչներ: 1894 թ. Ք. Նարթամյանցի թարգմանությամբ «Պողնանի ուսուցչի հիշատակարանից» նովելը լույս է տեսնում «Արձա-

¹¹ «Լիտվոսի պատմած, Պեդնանի ուսուցչի օրագրից», Շուշի, 1881, էջ 3:

դանքում», իսկ 1901 թ. տպագրվում է «Մուրճում» Ստ. Լիսիցյանի թարգմանությամբ¹²:

Այս գործը, որ լեհ գրողը գրել էր Վենետիկում և սկզբնական շրջանում կրում էր «Ռեպետիտորի հիշատակարանից» խորագիրը, ուղղված էր լեհական Բազալտորուձյան մեջ ցարիզմի ազդային քաղաքականության դեմ, սակայն երկյուղելով գրաքննությունից, Սենկևիչը նովելում կատարվող դեպքերը Վարշավայից տեղափոխում է Պոլնան (Պոլնանը գտնվում էր Պրուսիայի տիրապետության տակ), որտեղ երևիսների կրթության իրավիճակը նույնն էր, ինչ վարշավյան դպրոցներում¹³: Պատմվածքի հիմքում զբաղված երկու հիմնական պրոբլեմներից առաջինը կապված էր հիշատակարանը գրող ուսուցչի և աշակերտի հոգեբանության հետ: Ընդ որում աշակերտի հոգեբանությանը առաջին անգամ ուշադրություն է դարձրել անգլիական պոլիտիվիզմի ներկայացուցիչ Հերբերթ Սպենսերը: Հետագայում Սպենսերին է հետևել նորվեգացի գրող Ալեքսանդր Բիլանդը, գրելով Նվրոպայում հուշակ ձևը բերած իր «Բուլն» պատմվածքը: Նրանց հաջորդել է Սենկևիչը իր վերահիշյալ նովելով:

¹² Սովետական շրջանում նովելը լույս է տեսել 1944 թ., Երևանում, Վ. Միքայելյանի թարգմանությամբ:

¹³ Հարկ ենք համարում հիշատակել, որ իր ամբողջ ստեղծագործական կյանքին զուգահեռ Սենկևիչը եղել է հասարակական-քաղաքական մեծ գործիչ, բաղմամբով հոգվածներ է գրել ժամանակի լեհաստանի քաղաքական իրադրության մասին՝ հրավիրելով աշխարհի լայն հասարակայնության ուշադրությունը: Այդ հոգվածները տպագրել է լեհ և օտար մամուլի էջերում, որոնք, իրոք մեծ արձագանք են հարուցել ամենուրեք: Հայ մամուլը նույնպես մեծ տեղ է տվել Սենկևիչի հրապարակախոսական հոդվածներին: Հայտնի է նրա «Փայլիցիայի իրավիճակի մասին» բաց նամակը, ուղղված Պրուսիայի թագավոր և Գերմանիայի կայսր Վիլհելմ II-ին, որը հեղինակը տպագրել է Փարիզի «Echo de Paris» տմսագրում: Այս նամակը թարգմանվելով հայերեն, տպագրվել է «Մշակում» 1907-ին: Դեռևս 1906 թ. նույն թիվը թարգմանելով «Dziennik Poznański» լրագրից վերցրած «Լեհական Բազալտորուձյան դրուձյան մասին» Սենկևիչի հոդվածը, տպագրել է իր նույնմերկյան համարում: Սենկևիչի գրչի տակից դուրս եկած քաղաքական այլ հոդվածներ ևս, որտեղ արծարծվում էին հատկապես Պրուսիայի և Ավստրիայի տիրապետության տակ գտնվող լեհերի ծանր դրության հարցերը, տպագրվել են «Մշակում» 1906, 1907, 1916 թթ., իսկ «Լուսավում»՝ 1904-ին:

Ինչ խոսք, ուսուցման ասպարեզում գոյություն ունեցող անբարենպաստ պայմանները բնորոշ էին ինչպես անդլիական, լեհական, ռուսական, այնպես էլ հայկական և այլազգի գաղութական սխառեմներին, հետևաբար դարավերջի դեմոկրատացման պայմաններում, այդ հարցի լուծմամբ շահագրգռված էին բոլոր երկրների առաջավոր շրջանները:

Սակայն հայերին առավել կարող էր հուզել պատմըվածքի հիմքում դրված երկրորդ պրոբլեմը, որը թեև համընդհանուր բնույթ չունի, այլ ավելի տեղային էր՝ լեհական, բայց տվյալ դեպքում կարելի է համարել նաև «հայկական»: Խոսքը, ինչպես վերը նշեցինք, վերաբերում է ազգային լեզվի և մշակույթի դեմ տարվող սահմանափակումներին, որոնք աղետալի բնույթ էին կրում թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում, իսկ սուլթանի վարած քաղաքականության հետևանքով ոչ միայն փակվում էին հայկական գաղութները, այլև հայերի բնաջնջման նոր պլաններ էին նախագծվում:

Նովելի ազդեցությունը առավել ուժեղանում է այն պատճառով, որ գաղութի այդ անհոգի ներկայացուցիչներից ոչ մեկը կոնկրետորեն չի ներկայացվում, նրանց մասին խոսվում է անուղղակիորեն, և դա վերաբերում էր որքան ռուսական, պրուսական, այնքան էլ ավստրիական, թուրքական կամ այլ գաղութատիրական քաղաքականություն վարող երկրի պաշտոնյաներին: Այս հանգամանքը բավական նպաստում էր, որպեսզի ազգային ճնշման նույնանման պայմաններում գտնվող ժողովուրդները իրենց կյանքի համար տիպիկ այդ երևույթն ընկալեին այնպես, ինչպես՝ լեհերը:

Սենկևիչի ստեղծագործությունների ամենահիմնական հատկանիշը հայրենասիրական պաթոսն է, որն առաջին պլան է մղված լեհ հեղինակի բացարձակապես բոլոր նովելներում: «Ամերիկյան նովելներ» շարքը Սենկևիչի ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ ունի: Այդ նովելների հրապարակումով է, որ սկսվում է նրա գրական փառքը, երբ Ամերիկայից նոր վերադարձած (ԱՄՆ էր մեկնել «Gazeta Polska» թերթի հանձնարարությամբ) ժուռնալիստ-

գրողի գործերը չորս հատորյակով տպագրում են Վարշավայի հրատարակչությունները:

«Ամերիկյան նովելներ» շարքում հատուկ տեղ է գրավում նրա փոքրածավալ ղլուխգործոցներից մեկը՝ «Փարոսի վրա» նովելը, որն օրինակ է ծառայել մի շարք գրողների՝ այդ թեմայով ստեղծելու նմանատիպ գործեր: Սենկևիչն իր նովելներում բազմիցս անդրադարձել է լեհ դաղթականների թափառական կյանքին, հայրենիքից օտարված մարդկանց ողբերգական կացությանն ու հայրենաբաղձությանը: Նովելի հերոսի՝ փարոսի պահապան, դաղթական Սկավինսկու ճակատագիրը նման է բազում լեհերի ճակատագրին: Սկավինսկին մասնակցել է 1836 թ. լեհական ապստամբությանը, կռվել է Իսպանիայում, Ալժիրում, մասնակցել է 1848 թ. հունգարական ապստամբությանը, այնուհետև նեգրերի ազատագրման համար կռվել է Ամերիկայում:

Իրոք, այդպիսի հարուստ ու փոթորկոտ անցյալ ունեցող Սկավինսկին արժանի էր ծերությունը խաղաղ անցկացնել եթե ոչ հայրենիքում, ապա գոնե որևէ խաղաղ անկյունում, ինչպիսին էր Նոր-Գրենադայի Ասպինվալ կղզին: Խաղաղ հանգրվան գտնելը ծերության վերջին օրերում Սկավինսկու երազանքն էր: Սակայն տառապանքներով լի կյանքը դաղթականների ուղեկիցն էր մինչև մահ: Եվ Սկավինսկին բացառություն չի կազմում: Նրա երազանքը ջարդուփշուր է լինում հայրենիքի նկատմամբ ունեցած անդիմադրելի սիրու առջև: Հայրենասիրությունը, որ լեհերի բնավորության ամենավեհ ու միաժամանակ ողբերգական կողմն էր, նրան նորից է նետում անհայտության գիրկը: Ադամ Միցկևիչի «Պան Տադեուշ» պոեմն է պատճառ դառնում, որպեսզի Սկավինսկին ծերության օրերում նորից ձեռքը վերցնի դաղթականի ցուպը:

«Փարոսի վրա» նովելի հայերեն թարգմանությունը (լույս է տեսել 1892 թ., առանձին գրքով Մոսկվայում, Մ. Բարխուդադյանի տպարանում, թարգմանչի անունը հիշատակված չէ)¹⁴ ինքնին ուշագրավ երևույթ էր, սակայն տե-

¹⁴ Նովելը երկրորդ անգամ Հ. Սուրխաթյանի թարգմանությամբ հրատարակվել է «Մշակում» 1894 թ. և առանձին գրքով լույս տեսել 1904-ին:

զինն է նշել, որ այն զերծ չէր թերություններից, որոնք գալիս էին ուսական տարբերակից կատարված թարգմանությունից:

Այստեղ հարկ ենք համարում մատնանշել մի հիմնական թերություն, որը խանգարել է նովելի հոգեբանական կողմը ճիշտ բնկալելուն: Խոսքը նովելում Միգելիչի «Պան Տագետուշ» պոեմից մեջբերված հատվածների մասին է, որոնք հայ թարգմանիչը խուսափել է թարգմանել իր բանաստեղծական ձևի մեջ, պատճառաբանելով, թե ուս թարգմանիչ Ն. Վ. Բերգը լեհերենից ուսերեն թարգմանելով, այն արդեն աղավաղել էր: Սակայն բացի այն, որ պոեմի արձանի թարգմանությունը նույնիսկ իր իմաստով բավական հեռու է բնագրից, պոեմից մեջբերված տասնհինգ տողի փոխարեն, որոնք, ցրված լինելով տարբեր տեղերում, մտնում էին նովելի կոմպոզիցիոն կառուցվածքի մեջ, թարգմանված է յոթը: Այս երևույթը առկա է նաև Ատոմ Շահենի և Հ. Հարությունյանի թարգմանություններում: Ատոմ Շահենը «Պան Տագետուշի» հատվածները հայերեն թարգմանել է արձակ, պահպանելով միայն հեռավոր իմաստը, իսկ Հ. Հարությունյանը թարգմանել է վեց տող, բաց թողնելով հատվածների ամենահիմնական մասը (ինը տող), մինչդեռ դա իր ասոցիացիաներով ծերունու վերհուշն էր արթնացնում հայրենիքի նկատմամբ:

Նկատենք, որ պոեմի հայրենասիրական ջերմ տողերը շատ էական դեր են խաղում նովելում: Ծերունի Սկավինսկին հենց այս պոեմի ընթերցմամբ տարված, ալիկոծվում է հայրենիքի նկատմամբ ունեցած կարոտից, և ծերունազառ գլուխը թաղելով ավազների մեջ, դառն հեկեկալով, մտովի վերադառնում է իր սիրելի հայրենիքի գիրկը՝ մոռանալով վառել լապտերը, որն էլ ողբերգության պատճառ է դառ-

Ատոմ Շահենի թարգմանությամբ նովելը «Աստիճակի փարոսի պահպանը» խորագրով լույս է տեսել «Մուրճում»՝ 1905-ին: Սովետական շրջանում հրատարակվել է 1954 թ. «Փարոսի պահակը» վերնագրով, Սենկևիչի «Ամերիկյան նովելներ» ժողովածուում՝ Հ. Հարությունյանի թարգմանությամբ:

նում: Անշուշտ, պոեմի այդ տողերը կարգալուց հետո միայն կարելի է հասկանալ ծերունու տվյալանքների ամբողջ գրամատիզմը:

Նովելի միանգամայն ինքնատիպ կոմպոզիցիան, որ հարուստ է ասոցիացիաներով, ծերունու կերպարը «Պան Տադեուշի» միջոցով կապում է հայրենիքի հետ, ընթերցողին հարկադրելով (ինչպես լեհ գրականագետ Յուլիուշ Կլեյներն է ասում)՝ «տեսնելու և՛ այդ համբերատար ծերունուն, և՛ միայնակ փարոսը, կղզուն խփվող ալիքները, և՛ այն երազանք-հիշողությունները, որ անդարձ տարիների միջից իր հեռավոր, բայց միաժամանակ մոտ հայրենիքից գալիս էր այցի ապստամբ-պահապանին, զայթակղելով նրան մից-կելիշյան թախծոտ պոեմով»¹⁵:

Եվ, այնուամենայնիվ, «Փարոսի վրա» նովելի հայրենասիրական ոգին շատ հարազատ է եղել հայ ընթերցողին և մեծ ազդեցություն է թողել նրա վրա: Այս առումով, հատկանշական է այն փաստը, որ Ստ. Զորյանը, սրն ընդհանրապես Սենկևիչի ստեղծագործությունները շատ բարձր էր գնահատում, անտարբեր չմնալով լեհ ժողովրդի ողբերգական ճակատագրի հանդեպ, 1915 թ. վերոհիշյալ նովելի ազդեցությամբ գրում է «Պան Պրժևիցկի» պատմվածքը, որտեղ նկարագրված են Կովկասի զորաբանակի պաշտոնաթող զինվորական լեհ Կադիմիր Պրժևիցկու հայրենասիրական զգացումները:

Պրժևիցկին այնպիսի խոր սիրով էր կապված հայրենիքին, որ իր օրվա մեծ մասը նվիրում էր Միցկևիչի, Սլովացկու, Սենկևիչի երկերը կարդալուն և թերթերից լեհաստանի մասին տեղեկությունների քաղելուն: Սակայն առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց հետո, երբ գերմանացիները լեհական նոր հողեր են գրավում, լեհ հայրենասերը մի ամբողջ ողբերգություն է ապրում:

Հետևելով Սենկևիչի «Փարոսի վրա» նովելին, Զորյանը Միցկևիչի «Պան Տադեուշը» դարձնում է իր պատմվածքի

¹⁵ St. u. Alina Ladyka., Henryk Stenkiewicz, Warszawa, 1965, s. 128.

լեյտմոտիվը: Ուշագրավ է, որ Միցկևիչի հայրենասիրական մեծ պաթոսով գրված պոեմը Զորյանի պատմվածքի համար նույնպես սիմվոլիկ նշանակություն է ստանում. եթե Սկավինսկին կղզուց արտաքսվելուց հետո, «Պան Տադեուշը» կրծքին սեղմած ծերության հասակում նորից է անհայտ կյանքի ճանապարհը բռնում և ժամանակ առ ժամանակ շոշափում կրծքի վրա պահած անգին գիրքը, կարծես երկյուղելով, որ գոնե այդ գանձը չկորցնի, ապա Պրժեկցկին, մերժում ստանալով մասնակցելու Լեհաստանում սկսված պատերազմին, հայրենիքի ճակատագրի համար ապրած ողբերգությունից ու հուսահատությունից անկողին բնկնելով՝ մահանում է Միցկևիչի «Պան Տադեուշ» գիրքը կրծքին սեղմած:

Պանդխտության թեմայով է գրված նաև Սենկևիչի «Հացի համար»¹⁶ պատմվածքը, որտեղ գրողը ռեալիստական մեծ ուժով է պատկերում լեհ գաղթականների թշվառ կյանքը Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Պատմվածքում արտահայտված «հայրենիքից հեռու կյանքն ավելի վատթար է» գաղափարը գտնում ենք նաև XIX դարի երկրորդ կեսի հայ գրողների՝ գաղթականության թեմայով գրված ստեղծագործություններում:

Վրթ. Փափազյանի «Երկրի ձայնը» պատմվածքը, որտեղ հեղինակը նկարագրում է հայ գյուղացու համար շարիք դարձած պանդխտությունը, շոշափման շատ եզրեր ունի Սենկևիչի «Հացի համար» նովելի հետ: Պանդխտ Ակոն, որ գնացել էր օտար երկիր հաց վաստակելու, հասկանում է, որ

¹⁶ Հայերեն թարգմանությունը լույս է տեսել 1892 թ., առանձին գրքով: Պատմվածքը երկրորդ անգամ թարգմանելու հարցում մտահոգված է եղել Թիֆլիսի հայ գրքերի «Հրատարակչական ընկերությունը»: «Ընկերության» 1896 թ. կայացած ժողովներից մեկում Շիրվանզադեն առաջարկում է թարգմանել Սենկևիչի «Հացի համար», «Երաժիշտ Յանկոն» և «Էսթրիգներ ածուխով» գործերը: Հանձնաժողովը հավանություն տալով առաջարկին, հանձնարարում է Ստ. Լիսիցյանին (որն արդեն սկսել էր «Յո երթափ» թարգմանությունը) բնագրից թարգմանել վերոհիշյալ գործերը: Առաջիկա չի հաջողվել պարզել, թե արդյոք Լիսիցյանը կատարել է այդ թարգմանությունները: Սովետական շրջանում պատմվածքը հրատարակվել է 1954 թ., Սենկևիչի «Ամերիկյան նովելներ» ժողովածուում՝ Հ. Հարությունյանի թարգմանությամբ:

օտար հոգում պանդուխտին սովից ու տանջանքից բացի, ոչինչ չի սպասում: Նման շարքաշ կյանքն ավելի տաժանակիր էր դարձնում հայրենիքի հանդեպ ունեցած կարոտը, որը հանգստություն չէր տալիս և՛ Փափաղյանի Ակոյին, և՛ Սենկևիչի Վավժոն Տոպորեկին:

Հետաքրքիր է, որ հայրենիքի հանդեպ ունեցած սերը երկուսի մոտ էլ միատեսակ զգացումներ է առաջացնում: Ահա այն նկարագրությունները, որ տալիս է լեհ հեղինակը Տոպորեկի, իսկ Փափաղյանը՝ Ակոյի՝ հայրենի երկրի նկատմամբ ունեցած տանջող ցավի մասին: «Կարոտը գիշեր-ցերեկ տանջում էր նրան (Տոպորեկին—Բ. Բ.),—գրում է Սենկևիչը,—և այդ տանջանքը ավելի անտանելի էր դառնում նրանից, որ նա չգիտեր թե ի՞նչն է պատճառը, ի՞նչ է հարկավոր իրեն, ո՞ւր է ձգտում իր գյուղացիական հոգին, ինչո՞ւ է թռչնում տանջանքից: Այնինչ նրան հարկավոր էր սոճու անտառը, դաշտերը, ծղոտածածկ խրճիթները, ծանոթ դեմքերը և այն ամենը, ինչի վրա կապույտին է տալիս հայրենի երկինքը, որին սիրտն այնպես է կապված, որ պոկ գալ չի կարող, իսկ երբ պոկ եկավ, ապա արյուն կծորա»¹⁷:

Փափաղյանը այդ նույն զգացման մասին գրում է. «Մի ձայն, մի խոր, հոգու լարերը հնչեցնող, աղիքները զալարող, սիրտը արյունոտող ձայն կանչում է նրան: Երկիրը կանչում էր, երկրի ձայնը անընդհատ հնչում էր ականջին: Ծովը, քամին, ծառը, բույսը, նույնիսկ սև փոշին բերում էր այդ ձայնը, մղում նրան հոգու ջղերի մեջ...»¹⁸:

Հայրենասիրական թեմայով գրված «Փարոսի վրա» և «Հացի համար» գործերը, որոնք իրենց հոգեբանական նուրբ անցումներով հաղորդիկ են լեհ ժողովրդի դրամատիկ վիճակն ու ասպրած ողբերգությունը, մեծ ճանաչում են գտել Հայաստանում: Եվ եթե նկատի ունենանք, որ գաղթականությունը դարեր շարունակ եղել է հայ ժողովրդի ճակա-

17 Զ. Սենկևիչ, Ամերիկյան նովելներ («Հացի համար»), թրգմ. Զ. Հարությունյանի, Երևան, 1954, էջ 48:

18 Վրբ. Փափաղյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1958, էջ 359:

ատորի անբաժան ուղեկիցը, իսկ գաղթականության, պանդրխտության թեման դարձել է հայ գրականության գլխավոր մոտիվներից մեկը սկսած XIII դարից, ապա շատ ավելի հասկանալի կլինի, թե այս գործերը ինչպիսի ջերմությամբ ու հուզականությամբ պետք է ընդունեն հայ ընթերցողը, և որքան արդիական կարող էր հնչել այդ պրոբլեմը հատկապես 1896 թ. հայկական ջարդերից հետո, երբ հայերը թողնելով հայրենիքը, նորից էին բռնել գաղթի ճանապարհը:

Սենկեկի լի փոքրածավալ գործերում ամերիկյան թեման գրողի համար ծառայել է որպես միջոց լեհական ազգային հարցի բարձրացման համար: Հումանիստ գրողը հայրենիքի թեման այս անգամ արծարծել է «Սախեմ» նովելում, որտեղ հեղինակը խոր թախծով պատմում է ամերիկյան քաղաքակրթված գաղութարարների ղոհը դարձած հնդկիների ճակատադրի մասին: Ինչպես «Պողնանի ուսուցչի հիշատակարանից» նովելում, այնպես էլ «Սախեմում» Սենկեկը բարձրացնում է նվաճողական քաղաքականություն վարող պետությունների, ներկա դեպքում ամերիկացիների կողմից փոքր ժողովուրդներին ճնշման ենթարկելու հարցը: Իկյա նովելը (հիմնականում այն ուղղված է ամերիկյան գաղութարարների դեմ, հակապրոեսականը բացահայտվում է ենթատեքստում) Սենկեկի հակապրոեսական երկրորդ ստեղծագործությունն է («Պողնանի ուսուցչի հիշատակարանից» նովելից հետո), այդ բնագավառի նրա երկարատև ու բազմակողմանի գործունեության մեջ, որտեղ նրա հանրահայտ «Խաչակիրները» հետադաշում դառնում է այդ թեմայով զրված նրա ստեղծագործությունների կվինտ-էսենցիան:

Գրողն այս նովելում կերտել է հնդիկ Սախեմի կերպարը, որը խղել էր հոգեկան կապը իր ցեղից: Նվաստության մեջ նա հարուցում է ոչ այնքան խղճահարություն, որքան արհամարհանք: Իսկ քանի որ XIX դարի ընթերցողը ժամանակաշրջանի պայմաններին հարմարվելով, սովոր էր հասկանալ գրականության եղովպոսյան լեզուն, ապա պետք է որ ճիշտ ընկալեն Սենկեկի պատմվածքի ենթատեքստը:

Տիրքան Հովհաննիսյանը հայերեն է թարգմանում այս նովելը (լույս է տեսնում 1899 թ. «Մշակում») զգալով, որ

հայ ընթերցողը ծանոթանալով այս գործին, իր ազդի ճակատագրի համար նույնպես կանի համապատասխան եզրահանգումներ:

Երկրորդ անգամ նովելը հրատարակվել է սովետական տարիներին: Այդ թարգմանությունը կատարել է Աթաբեկ Խնկոյանը և «Հնդիկների առաջնորդը» խորագրով տպագրել է 1928 թ. Մոսկվայում, առանձին նկարազարդ գրքով¹⁹: Մատչելի, պարզ ոճով կատարված այս թարգմանությունը Խնկոյանը կցել է մի վերջաբան, որտեղ տեղեկություններ է տվել ամերիկյան հնդիկների քանակի, երկրի քաղաքական դրություն մասին:

Պրուսական քաղաքականության դեմ էր ուղղված նաև «Բարտեկ հաղթողը» պատմվածքը, որտեղ Բարտեկին թախծով ու կիսահեղինորեն անվանելով «հաղթող», նկարագրելով նրա կատարած ակամա հերոսությունները, Սենկևիչը ցույց է տվել միամիտ և խաբված լեհ գյուղացու մասնակցությունը ֆրանս-պրուսական պատերազմին, մի սլաոն-բաղմ, որը ոչ մի կապ չունի լեհաստանի ազատագրության հետ: Այս պատմվածքի նշանակության մասին Ջ. Տեր-Գրիգորյանը դարասկզբին գրել է. «Սենկևիչի այդ վառ ու գունագեղ պատմվածքը ժամանակակից նշանակություն ունի, որովհետև Պոլնանում ոչինչ չի փոխվել համարյա, և այժմ էլ, ինչպես բառասուն տարի սրանից առաջ, Պոլնանի խավար ու սգեռ բարտեկները երբեմն կռվում են յուրայինների դեմ ի օգուտ գերմանացիների: Սակայն ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա Պոլնանից ո՛չ թե օրհնության, այլ զսպված անեծք է ուղեկցում գերմանական հաղթական զորքերին: Նրանց հաղթությունը մեծ վիշտ է պատճառում գիտակից լեհերին: Այդ բանը ներկայումս ըմբռնում են նույնիսկ անհեռատես ու խավար բարտեկները»²⁰:

Այս պատմվածքում Սենկևիչն առաջ է քաշել ոչ միայն այն հիմնական հարցը, թե Պոլնանի լեհերը պրուսական

¹⁹ Նովելի երրորդ թարգմանությունը, որ կատարել է Հ. Հարությունյանը, լույս է տեսել Սենկևիչի «Ամերիկյան նովելներ» ժողովածուում՝ 1954 թ.:

²⁰ «Տարազ», 1915, № 8—9, էջ 106:

իշխանութիւններից ինչպիսի ճնշման էին ենթարկւում, այլև պրոբլեմները դիտելով սոցիալական տեսանկյունից, սարկաստիկ բնութագրութեան է ենթարկել և՛ գերմանական շովինիստներին, և՛ լեհական պաներին:

Սկսած XIX դարի 80-ական թվականներից մինչև մեր օրերը պատմվածքը բաղմիցս թարգմանվել է տարբեր լեզուներով: Հայերեն առաջին անգամ լույս է տեսնում 1893 թ. Ք. Նարթամյանցի թարգմանութեամբ՝ «Արձագանքում»: Երկրորդ անգամ առանձին գրքով հրատարակվում է Հայրենական պատերազմի օրերին²¹, երբ լեհերը սովետական ժողովրդի հետ պայքարում էին գերմանական ֆաշիզմի դեմ:

Սենկևիչի այդ ժանրի գործերից հայերեն է թարգմանվել նաև հանրահայտ «Յանկո երաժիշտ» քնարական պատմվածքը: Դա մի պատմություն է երաժշտական բացառիկ ունակւթյուններով օժտված փոքրիկ Յանկոյի ողբերգական ճակատագրի մասին: Այդ ցնցող պատմվածքում ռեալիստորեն պատկերված է լեհ բատրակ գյուղացիների աղքատ կյանքը, նրանց անօգնական վիճակը և այն անտարբերութիւնը, որ ուներ հարուստ դասը իր ազգակիցների ճակատագրի հանդեպ: Ցնցոտիների մեջ կորած, սովից փորն ուռած Յանկոն, որն անտառի թռչունների երգը կամ էլ որևէ մեղեդի լսելիս մոռանում էր աշխարհը, այդպես էլ չդիտակցելով, որ բնութիւնը իրեն պարզեւել է ամենամեծ շնորհը, — մեռնում է դաժան ծեծից, միայն այն բանի համար, որ համարձակվել էր ձեռք տալ կալվածատիրոջ տան պատից կախված ջութակին:

Ինչ խոսք, բուրժուական հասարակարգում, տաղանդով օժտված հասարակ մարդիկ (ինչպես Յանկոն) չէին կարող իրականացնել իրենց իղձերը, հովանավորութիւն գտնել հարուստ դասի կողմից, որոնք հիանալով օտարերկրյա արվեստագետներով, ցավում էին, որ իրենց ազգի մեջ չկան այդպիսիք, առանց խորհելու, որ իրենց հայրենիքում էլ հեշտու-

²¹ Պատմվածքը հրատարակվում է 1944 թ. Երևանում, Վ. Միքայելյանի թարգմանութեամբ, ապա վերահրատարակվում է 1949 թ.: 1955 թ. Ս. Պայազատի թարգմանութեամբ լույս է տեսնում Սենկևիչի «Լեհական նովելներ» ժողովածուում:

թյամբ կարող են պահպանել, օգնել չբավորության մեջ ծընվող այն տաղանդներին, որոնք բախվելով դաժան իրականությանը, կորչում էին անհայտության մեջ:

Այս պատմվածքը մեծ ժողովրդականություն է գտել հայ հասարակայնության մեջ, որի թեման հայ դասական գրողների ստեղծագործություններում նույնպես արծարծվել է: Ալ. Շիրվանզադեն և Մուրացանը բարձրացնելով այդ սլոգանը, ձգտում էին վրդովմունք առաջացնել այն դասինկատամբ, որն անտարբեր էր իր հայրենիքի, ժողովրդի, նրա մշակույթի հանդեպ: Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» և Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքների հերոսներ Գևորգն ու Լևոնը օժտված լինելով տաղանդով, փոքրիկ Յանկոյի նման դառնում են տիրող դասի անտարբերության զոհ, երբ խորտակվում են նրանց պատրանքները:

«Յանկո հրաժիշտը» առաջին անգամ հայերեն հրատարակվում է «Արձագանքում» 1894 թ., Բ. Նարթամյանցի թարգմանությամբ, երկրորդ անգամ առանձին զրբով՝ Տ. Հովհաննիսյանի թարգմանությամբ լույս է տեսնում Թիֆլիսում 1905 թ., ապա սովետական տարիներին՝ 1925 թ. հրատարակվում է Ստ. Զորյանի թարգմանությամբ, վերահրատարակվում՝ 1955 և 1975 թվականներին:

Կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանը, որի ամենաոխրած գործերից մեկը Սենկեիշի այս հուզիչ պատմվածքն էր, ժամանակին իր խորհուրդներով, դիտողություններով մասնակցություն է բերել Ստ. Զորյանի կատարած թարգմանությանը: «Յանկո հրաժիշտը», որ ժողովրդական երգերից վերջրած ութմիկ արտահայտություններով ավելի մեծ վաղպետություն էր պահանջում թարգմանության զգացմունքային կողմը պահելու, քնարական կերպարի հետ ներդաշնակություն ստեղծելու համար, Մելիքյանին անտարբեր չի թողնում յայդ հմայիչ «հրաժշտական բովանդակություն» ունեցող ստեղծագործության հայերեն թարգմանությունը նույնքան հրաժշտական դարձնելու գործում²²:

Սենկեիշի պատմական վեպերին միշտ ուղեկցել են

²² Ստ. Զորյան, Հուշերի գիրք (Ռոմանոս), Երևան, 1958, էջ 313:

մանր պատմվածքներ, նովելներ, էսքիզներ, որոնք իրենց քնարականության, նրբության, փխրոտփայական ընդհանրացումների ու գեղարվեստական խոսքի թողած ուժեղ տպավորության շնորհիվ գրավել են ընթերցողների ուշադրությունը: Այդ կարգի գործերից հայերեն են թարգմանվել «Աղբյուրի մոտ», «Երազ», «Անհոգություն», «Բանաստեղծի սիրտը», «Դեպի Աթենք», «Օլիմպիոսի բարձունքը», «Երկու մարգագետիններ», «Օրհնյալ լինես» նովելները²³:

Եթե նշված առաջին շորս նովելները գեղարվեստականության տեսակետից մեծ նորություն չեն հղել լեհ գրականության համար և հետաքրքրություն են ներկայացրել որպես ժամանակակից կյանքի մասին գրված փխրոտփայական էություններ, իսկ հաջորդ երկուսը վկայում են անտիկ շրջանի թեմաների հանդեպ գրողի նախասիրության մասին, ապա՝ խոհափխրոտփայական «Օրհնյալ լինես» և «Երկու

²³ «Աղբյուրի մոտ» նովելը Հ. Կարապետյանի թարգմանությամբ լույս է տեսել «Տարազում»՝ 1893 թ.:

«Երազը» հրապարակվել է 1901 թ. «Տարազում»՝ Գ. Հովնանյանի թարգմանությամբ:

«Անհոգություն» նովելը հրապարակվել է «Լույս» օրացույց-հանդեսում, 1904 թ. (թարգմանչի անունը նշված չէ):

«Բանաստեղծի սիրտը» նովել-լեզենդը Զիֆիկ Սարաֆի թարգմանությամբ լույս է տեսել «Մասիսում»՝ 1904 թ.:

«Դեպի Աթենք» Գյուտ Աղանյանցի թարգմանությամբ առաջին անգամ հրապարակվել է «Լուսավորում»՝ 1896 թ., ապա առանձին՝ գրքով վերահրատարակվել է նույն տարում, իսկ երկրորդ անգամ՝ 1902 թ.:

«Օլիմպիոսի բարձունքը» հրապարակվել է «Նոր-դարում»՝ 1900 թ., Գր. Բեդերյանի, ապա Ա. Ղազիկյանի թարգմանությամբ «Բազմավեպում»՝ 1903 թ.:

«Երկու մարգագետիններ» լույս է տեսել 1903 թ. «Մշակում»՝ Տիրոսյանի թարգմանությամբ, այնուհետև՝ 1915 թ. «Տարազում», Զ. Տեր-Գրիգորյանի թարգմանությամբ:

«Օրհնյալ լինես» նովելը 1893 թ. «Տարազում» հրապարակվել է Ավ. Իսահակյանի թարգմանությամբ, երկրորդ անգամ՝ 1894 թ. «Մուրճում», Ա. Ազեկյանի թարգմանությամբ, ապա 1897-ին ռմբ տիկին Մ-ի (Բեկյարադից) թարգմանությամբ լույս է տեսել «Մշակում»: Ա. Խաչատրյանի թարգմանությամբ 1902 թ. հրապարակվել է «Տարազում», իսկ 1903 թ. նվ. Աղանյանցի թարգմանությամբ՝ «Լուսավորում»: Առանձին գրքով լույս է տեսել 1904 թ. Թիֆլիսում, Քար-Վանի թարգմանությամբ:

մարդագետիններ» նովելներն արդեն մեծ աշխուժություն են առաջացրել ինչպես լեհ, այնպես էլ այլազգի, տվյալ դեպքում և հայ հասարակայնության մեջ:

Ինչպես դարավերջի շատ գրողներ, այնպես էլ Սենկևիչիչը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել տարբեր ազգերի լեզուներին նկատմամբ: Վերոհիշյալ վերջին երկու նովելներն էլ գրված են հնդկական լեզուների հիման վրա, որոնցից առաջինում բարձրացված է կյանքի ու մահվան բախման հավերժ շոշափելի խնդիրը, երկրորդը՝ փիլիսոփայական գործ է՝ մարդուն է՛լ ավելի կատարյալ դարձնելու ցանկության մասին:

XIX դարի վերջում հայ գրականության մեջ ևս մեծ հետաքրքրություն է առաջանում լեզուների նկատմամբ: Ավ. Խաչակյանը, որն իր ստեղծագործական կյանքի առաջին շրջանում արդեն նախասիրություն էր հանդես բերում արևմելյան ժողովուրդների լեզուների, առասպելների նկատմամբ, ուշագրություն է դարձնում Սենկևիչի «Օրհնյալ լինես» նովելին և այն թարգմանում հայերեն «Եղիբ օրհնված» խորագրով:

Լեհ հեղինակի այս նովելը, որտեղ իմաստուն Կրիշնան իր աստվածային կամքով ձգտում է՝ մարդուն ևս դարձնել կատարյալ, ինչպիսին լուտոսն էր ծաղիկների մեջ, գրավում է Խաչակյանին իր փիլիսոփայական խոհով:

Սենկևիչի փոքրածավալ գործերի կապակցությամբ հետաքրքիր կարծիք է հայտնել Յուլիան Կժիժանովսկին. «Գրողը (Սենկևիչը—Բ. Բ.) ստեղծագործությունների ավարտից հետո, որոնք երկար տարիների աշխատանք էին պահանջում, ստեղծել էր իր յուրաքանչյուր սիստեմը: Որպեսզի երեւակայությանը հանգիստ տար, թղթին էր նետում որեւէ մանրուք»²⁴: Եվ այդ, ինչպես Կժիժանովսկին է արտահայտվում՝ «մանրուքները», մեծ հետաքրքրություն առաջ բերելով, նույնպես թարգմանվում են տարբեր լեզուներով և դառնում տարբեր ազգերի ընթերցասեր հասարակայնության սեփականությունը: Այդպիսի մի գործ է «Գնանք նրա հոտից» նովելը:

²⁴ Julian Krzyżanowski, Twórczość Henryka Sienkiewicza, Warszawa, 1970, s. 323.

Նովելը, որտեղ նկարագրվում են Քրիստոսի խաչելության հետ կապված դեպքերը, հեղինակը գրել է «Յո երթաս» վեպի նյութերի ուսումնասիրությունը վերջացնելուց անմիջապես հետո: Այս նովելի նկատմամբ հետաքրքրությունը մեծ է եղել այն պատճառով, որ գրողը, նկարագրելով Քրիստոսի խաչելությունը, ցույց է տվել հավատի այն մեծ ուժը, որն, այնուամենայնիվ, մարդկանց տարել է այդ նոր վարդապետության հոսանքից:

Սենեկեիչն իր այս փոքրածավալ նովելը, ինչպես նաև «Յո երթաս» պատմավեպը, գրել է Լեհաստանի ճգնաժամային այն տարիներին, երբ լեհ ժողովուրդը գտնվում էր հուսահատ և անհլանելի վիճակում: Այդ ժանր գրությունից դուրս գալու այլ ելք չգտնելով, լեհ ժողովուրդը ազդի պահպանման միջոցը գտնում էր կրոնին, եկեղեցուն ապավինելու մեջ: Նվբանի որ լեհերը իրենց դավանության համար բողոքական Դրոսիայի և ուղղափառ Ռուսաստանի կողմից երկար ժամանակ ենթարկվում էին հալածանքի, ապա դա այն հետևվանքն է ունենում, որ լեհ ժողովրդի գիտակցության մեջ կաթոլիկության պաշտպանությունը դառնում է ազգային ինքնությունը պահպանելու միջոցներից մեկը:

Ի դեպ նշենք, որ XIX դարի լեհ գրականության մեծահամբավ գործիչներից շատերի վերաբերմունքը կրոնի հանդեպ եղել է բարդ և հաճախ հակասական: Տարանջատվելով պաշտոնական եկեղեցուց և միության մեջ մտնելով Լեհաստանը ճնշողների հետ, մեղադրելով ազգային-ազատագրական պայքարը, նրանք կամ ձգտում էին ստեղծել իրենց կրոնամիստիկական աշխարհայացքային սիստեմը, որն ըստ իրենց՝ պետք է վերածներ «ճշմարիտ» քրիստոնեությունը, կամ էլ՝ չկարելով կապը կաթոլիկությանից (ինչպես Զ. Կրասնիսկին, Յ. Նորվիդը), յուրավի էին մեկնաբանում այն, ձգտելով այդ ուղու վրա ձեռք բերել ժողովրդի բարոյափոխության հիմքը:

Սենեկեիչը այս նովելի հիմքում նույնպես դրել է քրիստոնեական վարդապետությանն ապավինելու գաղափարը,

որը հետագայում, արդեն մեկ այլ տեսանկյունով, արժարծել է «Յո երթաս» պատմավեսպում:

Թե ինչպիսի զգացում էր ոգևորում Սենկևիչին գրելու «Յո երթաս» և «Գնանք նրա հտեից» գործերը, ասում են Կոնստանդին Գուրսկուն գրած՝ գրողի հետևյալ տողերը. «Դուք, երիտասարդ սերնդին պատկանողներդ, հավանորեն հաշիվ չեք տալիս ձեզ, թե ինչ էր կատարվում Վարշավայում պոլիտիվիստական երանելի ժամանակներում, երբ Աստվածը գրվում էր փոքր «ա»-ով, երբ ռաջիոնալիզմը բանականության հոմանիշն էր դարձել, և երբ նույնիսկ ավելի համարձակ բնավորության տեր կրոնասեր մարդիկ ինչ որ ամաչելով էին պաշտպանում իդեալներն ու կրոնը: Ես այդ տրամադրությունների հետ ուղղակիորեն բանավեճի մեջ չէի մտնում, ինքս էլ պտտվում էի պոլիտիվիստական այդ ծաղկեփնջում, սակայն դա ինձ համար sans le savoir էր, զգվելի հատկապես իմ գեղագիտական զգացումներին... Հետո հայտնվեց «Առանց դավանանքին», «Գնանք նրա հտեիցը», մեկը՝ հոռետեսության կործանարարության նկարագիրն է, երկրորդը՝ ուղղակիորեն դրա հաստատումը»²⁵:

Նովելի մեծ արձագանքը հայ իրականության մեջ բացատրվում է նրանով, որ 90-ական թվականների թուրքական ջարդերից հետո, և մանավանդ Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի խոստումների ապարդյուն սպասումներից հուսախաբ, հասարակությունը ապրում էր նախկին բարոյական արժեքների ճգնաժամի շրջան և հայ ազգային-պահպանողականները ևս ազգի փրկությունը տեսնում էին միայն եկեղեցու մեջ:

Ձեռնարկելով Սենկևիչի «Հետեներ նրան»²⁶ նովելի թարգմանությունը, Հակոբ Ադամյանը 1898 թ. Բաբվում առանձին հրատարակած այս գրքի առաջաբանում (վերահրա-

²⁵ S. Papee, Sienkiewicz wielki czy mały, Kraków, 1948, s. 59—60

²⁶ Առաջին անգամ նովելը «Երթանք նրա հտեից» խորագրով լույս է տեսել 1894 թ.՝ «Արձագանքում», Քար-Վանի թարգմանությամբ: Ապա՝ «Գնանք նրա հտեից» առանձին գրքով լույս է տեսել 1896 թ.՝ Ախլը-ցըխայում, Տ. Վարդանյանի թարգմանությամբ:

տարակվել է նույն թվականին Թիֆլիսում, ապա՝ 1900 թ. իր ստեղծագործության՝ «Աղատ ժամերի» հետ միասին, Թիֆլիսում) պրոպագանդում է քրիստոնեական գաղափարախոսությունը, որպես համապարփակ (ըստ իր կարծիքի) ճշմարտության և երջանկության ապաստան։ Նա այն համոզմունքն է հայտնում, որ մարդիկ, եթե ուզում են երջանիկ լինել, իրենց կյանքում որպես առաջնորդ պետք է ունենան քրիստոնեական հավատը։

Աղամյանը այս նովելի կապակցությամբ գրում է. «...Մեծ և շատ խրատական դաս է թաքնված այս վրույցի մեջ։ Յիննայի ու Անտեայի կյանքը աչքի առաջ ունեցեք։ Նյութական ու մտավոր հարստությանց աված ամենատեսակ բարիքները դեռևս շատ քիչ են մարդուս երջանկացնելու համար։

Իսկական երջանկության ճանապարհը ցույց է տալիս Գողգոթայի նահատակը։

Սիրեցե՛ք նրան։ Հետևեցե՛ք նրան։

Նվ միշտ երջանիկ կլինեք։

Այս է իմ՝ Ձեզ ավանդած կտակը»²⁷։

Նովելը պարզ պատճառներով հետաքրքրել է նաև Վենետիկի Մխիթարյան միաբանությանը, որն առհասարակ Սենկևիչի ստեղծագործությունների նկատմամբ առանձնահատուկ նախասիրություն ուներ։ Միաբանության անդամ Ալեքսիս Հովսեփյանի թարգմանությամբ նովելը «Անոր երթանք» խորագրով լույս է տեսել ս. Ղազար կղզում, 1913 թ.։ Հովսեփյանը այս նովելի հայերեն թարգմանության առաջաբանում բարձր գնահատելով Սենկևիչին, որը «համաշխարհիկ ընթերցողների» կողմից արդեն վարձատրված էր, «ախորժելի ու օգտակար» է համարում լեհ գրողի այս նովելը։ «Բազմավեպի» գրախոսը (ազգանունը նշված չէ) մի քիչ ավելի ուշ, անդրադառնալով այս նովելի թարգմանությանը և բնութագրական հոգված տպագրելով այդ «զգայալից մանրավեպի» մասին, հատկապես նշում է Նալովրեցու

²⁷ 2. Սենկևիչ, Հետևե՛ք նրան, Բաբու, 1898 (Առաջարան)։

նկատմամբ ունեցած այն մեծ հավատի նշանակությունը, որի ազդեցությամբ տկար Անթեան հավատալից ափնարկ ուղղելով դեպի խաչելության զնացող փրկիչը, մոռանում է իր տառապանքները և մի տեսիլ տեսնում. «—Լույսը կը մոտենա... Նազովրեցին է... զիս իրեն կկանչի Կայոս»,—բացականչում է ողևորված Անթեան և լսում Կայոսի պատասխանը, «Անոր երթանք»։ «Հավատքն էր, որուն կղիմեն անոնք»,—մեկնաբանում է «Բազմավեպի» գրախոսը, տեսնելով այս «տպավորիչ ու գեղեցիկ» մանրավեպում «շատ խորաթափանց ու խմաստասիրական բացատրություններ»²⁸։

Դեռևս 1905 թ. Ս. Երեմյանը «Բազմավեպում» հանդես է գալիս Գի գր Ավելինի «Դեպի լույսը» վեպի գրախոսականով և զուգահեռ է անցկացնում վեպի և Սենկևիչի «Հետևենք անորի» միջև։ Եվ քանի որ գրախոսի կարծիքով երկու գործերն էլ պարզաբանում են «դեպի Գողգոթա դիմող, խաչելության վրա բարձրացող Աստծու հրաշահյուն կյանքը», նա մեծ հիացմունքով է խոսում այդ երկու ստեղծագործություններում աբժարժվող կրոնական գաղափարների՝ Նազովրեցու դերբնական ուժով ստեղծած այն նոր կրոնի մասին, որի ուժի ազդեցությամբ հավիտենապես պետք է փլչեին հպարտ կայսրերի վիլլաներն ու հեթանոսական տաճարները։ Այս դեպքում արդեն, «Բազմավեպի» գրախոսը ավելին է տեսել, քան Սենկևիչի մանրավեպում արծարծված գաղափարներն են։ Հռոմի ստրկատիրական հասարակարգում քրիստոնյաների օպոզիցիան՝ իշխող դասակարգի դեպուտիվմի նկատմամբ և կայսրերի անխուսափելի կործանման գաղափարը Սենկևիչը առաջ է քաշել ոչ թե այս մանրավեպում, այլ «Յո երթաս» պատմավեպում։

Հետաքրքիր է նաև Ստ. Լիսիցյանի կարծիքը նովելի մասին։ Լինելով առաջադիմ մտածող, նա, այնուամենայնիվ, պաշտպանում էր այն տեսակետը, թե ժամանակակից հասարակությանը իր վարանմունքներից կարելի է իլք ցույց տալ քրիստոնեական հաշտեցնող սկզբունքի մեջ²⁹, այսինքն այն, ինչ արծարծել էր Սենկևիչն իր նովելում։

²⁸ «Բազմավեպ», 1916, № 12, էջ 278։

²⁹ Տե՛ս Հենրիկոս Սենկևիչ, Յո երթաս, էջ 2։

Անշուշտ ճիշտ չէր լինի պնդել, թե հայ հասարակա-
նության, մասնավորապես՝ մտավորականության մեջ համ-
ընդհանուր ճանաչում գտած այս նվերը բացարձակապես
ընկալվել է քրիստոնեական հավատին ապավինելու տեսան-
կյունով: 90-ական թվականներին, երբ հայ հասարակական
կյանքում սոցիալ-դեմոկրատական գաղափարներով տոգոր-
ված էին հայ հասարակության առաջագիմ ներկայացուցիչ-
ները, բացառվում էր նրանց կողմից կրոնի մեջ ելք փնտրե-
լու մտայնությունը:

Այս առումով ուշադրության է արժանի Ստ. Շահումյա-
նի կարծիքը նովելի վերաբերյալ: 1896 թ. կարդալով «Գը-
նանք նրա հտեից» նովելի ռուսերեն թարգմանությունը,
Շահումյանը, որն արդեն ծանոթ էր Սենկևիչի «Առանց դա-
վանանքի» վեպին և բարձր էր գնահատում այն, քննադա-
տաբար է մոտենում այս նովելում առաջ քաշված գաղա-
փարներին: Ապագա կնոջը՝ Ք. Տեր-Գրիգորյանին գրած նա-
մակից իմանում ենք, որ նա պատրաստվում է գրախոսական
գրել այդ նովելի մասին, ապա ավելացնում, որ մեկ երես
արդեն գրած ունի, բայց որովհետև «կրոնական խնդիրներ
են շոշափվում այնտեղ», վճռել է «առանձին շարադրու-
թյուն» գրել և այն էլ «շուտ»³⁰: Ցավոք, առայժմ չի հաջողվել
հայտնաբերել «Գնանք նրա հտեից» մանրավեպի մասին
Շահումյանի գրած հոդվածը, բայց եթե նրա այդ գիտողու-
թյանն էլ ծանոթ չլինեինք, պարզ է, որ Շահումյանը, ինչ-
պես նաև հասարակության առաջագիմ մասը չէին կարող
ժողովրդի ապագայի նկատմամբ ունեցած իրենց լավագույն
հույսերը կապել քրիստոնեական հավատի հետ:

Սենկևիչի հանրահայտ փոքրածավալ գործերից հեղի-
նակի կենդանության օրոք հայերեն չեն թարգմանվել վաղ
շրջանում գրված «Էսքիզներ ածուխով», «Հումորեսկներ
Վորոշիլյայի պայուսակից» պատմվածքները, «Փոքր հոեր-
դությունը»³¹ և մի քանի այլ գործեր: Սակայն այն տասնյակ

³⁰ Ստ. Շահումյան, Գրականության մասին, Երևան, 1948, էջ 182:

³¹ «Փոքր հոերդությունից»՝ «Մեր ծառայողը» և «Հանյա» պատ-
մվածքները հայերեն հրատարակվել են 1955 և 1960 թթ., Ս. Պայա-
զատի և Ա. Ղուկասյանի թարգմանությամբ:

նովեւներն ու պատմվածքները, որոնք դեռևս XIX դարի վերջում են թարգմանվել հայերեն, վկայում են, որ հայ հասարակութունը բացառիկ հետաքրքրութուն էր ցուցաբերում Սենկևիչի ոչ միայն պատմավեպերի, այլև փոքրածավալ գործերի նկատմամբ, որոնց բնորոշ հատկանիշը լինելով ողբերգական աշխարհընկալումն ու հայրենասիրական պաթոսը, հոգեհարազատորեն էր ընկալվում դարավերջի հաջ ընթերցողի կողմից:

Գ Լ ՈՒՆ Ե Ր Կ Ր ՈՐ Գ

Հ. ՍԵՆԿԵՎԻՉԻ ՎԵՊԵՐԸ ՀԱՅ ԳՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

XIX դարի երկրորդ կեսի լիճ պատմավեպի խոշոր նվաճումները կապված են այդ ժանրի փայլուն ներկայացուցիչ Հենրիկ Սենկևիչի անվան հետ: Ճանաչված նովելիստի տաղանդը իր ամբողջ խորությամբ ի հայտ է եկել պատմական էպիկայում: «Եռերգություն», «Յո՛ւ երթաս», «Խաչակիրներ»՝ ահա Սենկևիչի այն պատմավեպերը, որոնք մտել են ոչ միայն ազգային, այլև համաշխարհային դասական գրականության գանձարանը: Պատմական թեմայով են գրված նաև «Լեգիոներներ» և անավարտ «Փառքի դաշտում» վեպերը:

Քանի որ ժամանակին հայ գրականության մեջ մեծ ճանաչում են գտել վերը նշված առաջին երկու պատմավեպերը («Խաչակիրներ» հայերեն է թարգմանվել սովետական շրջանում)¹, իսկ ժամանակակից թեմայով գրված վեպերից՝ «Առանց դավանանքին» («Պոլոնեցկիների ընտանիքը» ընդհանրապես չի թարգմանվել հայերեն), ապա մեր նպատակն է պարզել, թե այդ վեպերը ժամանակին ինչպե՞ս են ընկալվել ու գնահատվել հայ հասարակության կողմից: Եվ հիմնականում ինչպե՞ս են գրականագետների ուշագրություն կենտրոնում, իսկ դրանց շուրջը գնացող բանավեճերը ոչ միայն սպառիչ պատասխան չեն տալիս, այլև միշտ չէ, որ

¹ Լույս է տեսել 1957 թ., Երևանում, Հ. Հարությունյանի թարգմանությամբ:

ճիշտ են ընկալվում, ապա հայ հասարակության կողմից վերոհիշյալ վեպերի արժեքավորմամբ նպատակ ենք հետապնդում լրացնել այլազգի՝ ավյալ դեպքում հայ ընթերցողի գնահատման ու ընկալման պրոբլեմին վերաբերող բացը:

Բանավիճում են Սենկևիչի պատմական թեմայով գրված առաջին գործի՝ «Հրով և սրով» վեպի (1884) շուրջը, որը քիչ ավելի ուշ գրված «Զրհեղեղի» (1886) և «Պան Վոլդ-դըյովսկու» (1888) հետ միասին կազմում են լեհ գրողի հայտնի «Եռերգությունը»: Քանի որ «Եռերգության» բերած փառքի պատճառները կհաստատանում այլ էր, իսկ բուն երկրից դուրս այլ, ապա գրականագիտությանը առաջին հերթին հետաքրքրում էր այն հարցը, թե արտասահմանում ու լեհ հեղինակի հայրենիքում այդ պատմավեպերի հաջողության համար ի՞նչն էր գրավական եղել: Հարցն այն է, որ այլազգի ընթերցողը ծանոթ չլինելով կհաստատնի պատմությանը, անկարող էր նկատել «Եռերգության» (պատմականությունները վերաբերող) այն թերությունները, որոնք ակնհայտ էին Սենկևիչի հայրենակիցների ու ուկրաինացիների համար: Եվ, այնուամենայնիվ, հակառակ «Եռերգության» հանդեպ լեհ քննադատների բացասական դիրքորոշման, պատմավեպերի այդ շարքը ընթերցողների լայն շրջանում մեծ ընդունելության է արժանանում:

Սենկևիչն իր «Հրով և սրով» վեպը գրում է այն շրջանում, երբ ցարական Ռուսաստանի և Գերմանիայի կողմից ուժեղացել էր ճնշումը լեհ ազգի նկատմամբ: 1863 թ. լեհական ապստամբության պարտությունից հետո, լեհ ժողովուրդը գտնվելով հուսալքման մեջ (թեև արդեն աշխուժանում էին սոցիալ-դեմոկրատական տրամադրությունները), առանձնապես սուր կարիք էր զգում բաջալերական խոսք լսելու: Այս հանգամանքն է, որ ստիպում է Սենկևիչին լեհ ժողովրդի «ոգու ամրապնդման» (pokrzepienia serc) համար գիմել Ռեչ-Պոսպոլիտայի անկախ թագավորության ժամանակաշրջանի պատմությանը: Թեև Սենկևիչը գիմում է XVII դարի Ռեչ-Պոսպոլիտայի համար խառնակ ժամանակաշրջանին, երբ լեհ-ուկրաինական հարաբերությունների պատմությունը գրանցել էր իր ամենամոռայլ էջերը, այնու-

ամենայնիվ «Նռերգության» հեղինակը, շրջանցելով պատմության որոշ իրադարձություններ, վեպի համար հիմք է բնորոշում ոչ թե այդ ժամանակաշրջանի պատմությունը լայն ծավալով, այլ (իհարկե ըստ հեղինակի) հերոսական անհատների ճակատագիրը, քանի որ իր նպատակը ոչ թե էպոսայի ամբողջական պատկերումն ու վերլուծությունն էր կամ էլ լեհական թագավորության անկման պատճառների բացահայտումը, այլ լեհ ժողովրդի «ոգու ամրապնդման» գաղափարի հաստատումը:

Եվ որովհետև Սենկևիչը «Հրով և սրով» վեպում չի պատկերում դարաշրջանի լայն իրադարձությունները, այլ XVII դարի պատմությունից վերցնում է միայն այն փոքր հատվածը, երբ շվաբստայի մի մասը դեռևս հերոսությունների էր կատարում, իդեալականացնում է նրանց կատարած դերը լեհ-ուկրաինական պատերազմի ժամանակ, ապա մի շարք քննադատներ մեղադրում էին «Նռերգության» հեղինակին պատմականությունից հեռանալու մեջ: Նշենք, որ «Ջրհեղեղ» և «Պան Վոլոդըյովսկի» վեպերը քննադատների սուր հարձակումներին չեն ենթարկվել, քանի որ, եթե «Հրով և սրով» վեպում Ռեչ-Պոսպոլիտայի թագավորության անկման պատճառը դիտվում էր ուկրաինացիների (որոնց հեղինակը չէր առանձնացնում լեհ ժողովրդից)՝ Լեհաստանի հանդեպ ունեցած դավաճանությունը (Սենկևիչը գտնում էր, որ Խմելնիցկին կարող էր վատ օրինակ ծառայել մյուսների համար), ապա նշված առաջին երկու վեպերում, թուրքերի, թաթարների, շվեդների դեմ մղած պատերազմներում նույնի պատճառը դիտվում էին լեհ ֆեոդալները: Եվ եթե «Հրով և սրով» վեպում գրողի միտումը ռեակցիոն էր, իսկ «Ջրհեղեղի» դեպքում՝ ոչ, ապա ոչ թե այն բանի համար, որ բացակայում էր «Նռերգության» գաղափարական միասնությունը, այլ այն պատճառով (ինչպես Ի. Գորսկին է ճիշտ նկատում), որ անցնելով մեկ առարկայի պատկերումից մյուսին, փոխվում էին «ոգու ամրապնդման» նույն գաղափարի հաստատման օբյեկտիվ հնարավորությունները²:

² См. и М. Горский, Исторический роман Сенкевича, М., 1966, стр. 87.

Ի դեպ, Լեհաստանի հասարակական մտայնության տարբեր շրջաններում «Նոերգությունը» ընկալվել է ուրույն տեսանկյուններիով: Եթե կղերա-արիստոկրատական շրջանների ներկայացուցիչները (Ս. Տարնովսկի, Ի. Սկրոխովսկի, Յու. Լապիցկի) հանդերձ Սենկևիչի տեսնում էին ֆեոդալական Ռեչ-Պոսպոլիտայի ռազմական ոգու ու կաթոլիկության ջատագովին, ապա վարչավյան պոլիտիվիստները (հատկապես Բ. Պրուսը), թեև լեհ հեղինակին նույնպես համարում էին քրիստոնեական վարդապետության ջատագով ու հիացմունքով էին խոսում նրա գեղարվեստական փայլուն վարպետության մասին, այնուամենայնիվ նրան մեղադրում էին պատմական իրողությունը խեղաթյուրելու, կազակների հանդեպ Լեհաստանի մագնատական քաղաքականությունը խղեալականացնելու մեջ: Եթե նկատի առնենք նաև Զ. Կաչկովսկու, Վ. Բ. Անտոնովիչի (Ուկրաինայից), Ա. Ն. Պրպինի (Ռուսաստանից) ծայրահեղ ելույթները Սենկևիչի «Նոերգության» կապակցությամբ, ինչպես և բաղմամբով այլ տեսակետներ, ապա պարզ կդառնա, որ խոսքը մի շատ ինքնատիպ ազգային ստեղծագործության մասին է, որը տարբեր երկրներում, տարբեր շրջանների կողմից ամենատարբեր գնահատականների էր արժանանում:

Հայ իրականության մեջ «Նոերգության» գնահատման համար օբյեկտիվորեն գոյություն ունեին այլ չափանիշներ: Զիշտ է, «Նոերգությունը» թեև 90-ական թվականներին հայերեն չի թարգմանվում, այնուամենայնիվ, հայ հասարակայնությունը հնարավորություն է ունենում ծանոթանալու այդ պատմավեպերի հետ ուսերին թարգմանությունների միջոցով:

Հայ հասարակայնությունը Սենկևիչի պատմավեպերի այդ շարքի հայերեն թարգմանություններին ծանոթանում է սկսած 1906 թ., երբ «Նոերգության» առաջին գիրքը՝ «Հրով և սրով» վեպը Անանիա Գունտաքճյանի թարգմանությամբ լույս է տեսնում Վիննոտիկում³: «Ջրհեղեղը» նույնի թարգ-

³ Մինչ հրատարակումը, «Բաղմավեպը» նույն թվականին «Հրով և սրով» վեպից մի քանի գլուխ հրապարակում է, ցանկանալով ընթերցողներին նախապես ծանոթացնել պատմավեպի հետ:

մանությամբ լույս է տեսնում 1913 թ.⁴, իսկ «Պան Վոլոդը-յովսկին»՝ 1914-ին:

Իհարկե, XIX դարի հայ գրականության մեջ հերոսական տրամադրությամբ հագեցած պատմավեպեր են գրում Մե-րենցը, Բաֆֆին, Մուրացանը, որոնք հետապնդում էին այն նույն նպատակը, ինչ Սենկևիչը, և այնուամենայնիվ, թարգմանական գրականության՝ հատկապես նման հայրենասիրական վեպերի անհրաժեշտությունը դեռևս շատ սուր էր զգացվում: Հենց այս հանգամանքը նկատի ունի «Բաղմավեպի» գրախոս Ս. Երեմյանը, երբ առաջ էր քաշում «օգտակար վեպերը մշակելու» (թարգմանելու) խնդիրը: Մեծ տեղ տալով «Ինքնուրույն» վեպերի նշանակությանը, քանի որ «միջազգային կյանքը վիպասաններու մոգական գրչով կհուզվի և նույն գրչով հարստահարյալ դասակարգ-րու դատը կպաշտպանի», Երեմյանը ցավով է գրում, որ թեև «Ինքնագիր և թարգմանված վիպասանություններ ունինք, սակայն թարգմանությանց մեջ ընտրությունը կպակսի»⁵: Գրախոսը շատ կարևոր է համարում այն խնդիրը, որ հայ իրականության մեջ վիպասանական թարգմանության նկատմամբ լուրջ վերաբերմունք չի ցուցաբերվում, որ պա-կատարվում է կուրորեն, առանց հաշվի առնելու հայ ժողովրդի ժամանակի պահանջները: Այս առումով ուշագրավ է այն փաստը, որ Երեմյանը «Յո երթաս» և «Նուիրություն» պատմավեպերի ընտրության մեջ առավելությունը տալիս է վերջինիս: Եթե նկատի ունենանք, որ Մխիթարյան միաբանու-թյանը, որի անդամներից էր Երեմյանը, շատ ավելի մոտ պետք է լիներ «Յո երթաս» վեպը, քանի որ տվյալ ժամա-նակաշրջանում այն հովանավորում էին հատկապես կղերա-արիստոկրատական շրջանները, գտնելով, թե վեպը ջատա-գովում է կաթոլիկական եկեղեցին, ապա պարզ կդառնա, թե ազգային, հայրենասիրական ինչպիսի՝ բարձր զգացում-ներով էին առաջնորդվում մխիթարյանները, երբ գրում էին թե՛ շատ հրապուրիչ է, որ ուսսահայ մամուլում թարգման-

⁴ «Բաղմավեպ» 1912—1914 թթ. ամբողջությամբ հրապարակում է «Զրհեղեղը»:

⁵ Տե՛ս «Բաղմավեպ», 1905, № 1, էջ 3:

վել է «Յո երթաւ» վեպը, «Բայց մեր հայկական երակներուն ավելի կազդուրիչ էին իր մյուս երեք վեպերը «Խաչակիրները», «Սրով և հրովը» և «Ջրհեղեղը»⁶։ Ժամանակաշրջանը նկատի ունենալով, իհարկե, պետք է դատել, որ այս տողերը գրելիս, գրախոսը առավել նկատի ունեւ Արեւմտյան Հայաստանի վիճակը։

Տաս տարի անց «Բազմավեպը» նորից է անդրադառնում «Եւերգութեանը», դառնելով, որ «հայրենասիր Սենկեիշի այս գործերը շատ օգտավետ կրնան ըլլալ նաեւ մեր ազգագիրներուն, գիտնալու համար, թե ինչպե՞ս պետք են միանալ, ինչպե՞ս պաշտպանել հայրենիքը, և պատրաստել անոր ապագա սերունդներուն երջանկութեան»⁷։ Գրախոսը (հավանորեն Ա. Գունտաքճեանը) ճիշտ է ըմբռնում հեղինակային այն միտումը, ըստ որի՝ պատմավիպասանը ձգտում էր համոզել իր հայրենակիցներին, որ արատքին ճնշողների դեմ պայքարելու համար հարկավոր է հասնել ազգային միասնութեան։

Որքան էլ «Եւերգութեան» գնահատման հարցում մխիթարեանների համար չափանիշ էր հանդիսանում հայրենասիրութեանը, անձնագոհութեանը, հայրենիքի անկախութեան համար մղած հերոսական պայքարը, այնուհանդերձ, վեպի պատմականութեան գնահատման հարցում, նրանք որոշ չափով կանգնած էին կղերա-արիստոկրատական շրջանների հայեցակետի վրա, որոնք իդեալականացնում էին ֆեոդալական անցյալը, ինչպիսին էլ այն լինեւ Մխիթարեանները, լեհ քննադատներ՝ Ս. Տարնովսկու, Ի. Սկրիսովլըսկու, Յու. Լապիցկու նման, արդարացնում էին լեհական շլախտայի՝ ուկրաինական ժողովրդի ազատագրական պատերազմների դեմ մղած պայքարը, հանուն Ռեչ-Պոսպոլիտայի թագավորութեան ամրապնդման։

Իհարկե, Սենկեիշի մտահղացման մեջ այդ միտումը գոյութեան ունեւ։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ վիպասանը պատմական դեպքերը լուսաբանում էր տվյալ ժա-

⁶ Նույն տեղում, էջ 4։

⁷ «Բազմավեպ», 1916, № 12, էջ 277։

մանակաշրջանի (XVII դարի) ֆեոդալական շլյախտայի մտածողության դիրքերից, որոնք միայն ուկրաինական ազատագրական շարժումը կարող էին ընդունել սրպես սանձարձակ խռովություն՝ Ռեչ-Պոսպոլիտայի հանդեպ: Հակառակ դեպքում, գրում է Ի. Գորսկին, եթե պատմության կոպիտ խեղաթյուրումը լիներ բացարձակ ու միայն հեղինակային սուբյեկտիվ վերաբերմունքի արդյունք, ինչպես կարծում են Անտոնովիչն ու մյուս ծայրահեղ քննադատները, եթե վերստին չլիներ ոչ մի ճշմարտություն, ապա այն կլիներ ոչ միայն պատմականորեն կեղծ, այլ նույնիսկ՝ հակադեղարվեստական ստեղծագործություն⁸:

Ի դեպ, Սենկևիչի այդ միտումի նկատմամբ ճիշտ մոտեցում է հանդես բերել Ստ. Լիսիցյանը: Անդրադառնալով «Հրով և սրով» վեպում նկարագրված դեպքերին, նա գտնում է, որ թեև «հեռավոր անցյալը իր վայրենությունը հանդերձ, վարանում չգիտեր, այլ կոտորած, ավեր ու մահ, այնուհանդերձ ջղերին սարսափելի աշխատանք տալով՝ ծառայում էր ոչ թե անհատական բարօրությանը, անհատական երջանկությանը, այլ արդարության գաղափարին, որպես արդարությունն այն ժամանակ էր հասկացվում...»⁹ (ընդգծումը մերն է—Բ. Բ.):

Մինչդեռ Միխիթարյան միաբանության անդամ Ա. Գունտաբճյանը, խոսելով «...դարերով Լեհաստանի հպատակ դադախներու (կազակների—Բ. Բ.) մեծ ապստամբության» մասին, սուբյեկտիվ մոտեցում է հանդես բերում ուկրաինական ժողովրդի ազատագրական ձգտումների նկատմամբ, պատմությանը նայում է ոչ թե պատմականորեն, դարի հոգեբանությանը համապատասխան, այլ՝ կաթոլիկ կղերականությանը բնորոշ միտումով: «Այս ահավոր և արյունահեղ ապստամբության գլուխ,—գրում է Գունտաբճյանը,—կը կենա Պոկտան Խմելնիցքի՝ Ղազախ մեծ զորավարը, բուն մարդ՝ որ, ատելությամբ լեցված, Ղազախ անկախությունը ձեռք բերելու համար, ուրիշ միջոց չի ճանշնար, եթե ոչ փո-

⁸ См. И. Горский, *Узл. узл.*, т. 2, 104.

⁹ «Մուրճ», 1901, № 1, էջ 105:

դոտել, ջարդել, այրել ինչ-որ լեհ-լատին է»¹⁰։ Եվ նույնիսկ ավելին. թարգմանիչ-գրախոսը նույնացնում է ուկրաինացիների, թաթարների, թուրքերի դեմ մղվող պատերազմների նպատակները, բարբարոս ու կռվասիր է համարում օրթոդոքս (ուղղափառ) կաղակներին, միայն այն բանի համար, թե նրանց «ատելի էին մեր քաղաքականությունն ու կրթոնքը»։

«Եռերգությունը» գնահատելու հարցում որոշ հայ քննադատներ ավելի մոտ էին կանգնած վարչավչան պողիտիվիստների տեսակետին։ Ինչպես լեհ քննադատության մեջ Բ. Պրուսը, այնպես էլ Հայաստանում Ստ. Լիսիցյանը, Տ. Նաղարյանը, թեև շատ բարձր էին գնահատում Սենկևիչի գեղարվեստական վարպետությունը, այնուամենայնիվ, մեղադրում էին գրողին պատմական իրականությունը ճշմարտացի չպատկերելու մեջ։

Պրուսը, Սենկևիչին մեղադրելով հանդերձ լեհ-ուկրաինական հարաբերություններում առկա սոցիալական կոնֆլիկտը անտեսելու, Ուկրաինայում լեհ մագնատների վարած քաղաքականությունը իդեալականացնելու համար, այնուամենայնիվ, իր հիացմունքն էր արտահայտում «Եռերգության» գեղարվեստական կառուցվածքի հանդեպ և գտնում, որ իրենք՝ գրողները, Սենկևիչից կարող են սովորել գրելու արվեստը¹¹։

Տիգրան Նաղարյանը Սենկևիչին նվիրված իր հոդվածում, անդրադառնալով «Եռերգությանը», այն համարում է «փայլուն, ոգևորիչ, խրատական, գեղանկար, պիեճ պոեմ», սակայն գտնում է, որ «իդեալականացրած են հերոսները, շեղված պատմական ճշտությունից»¹²։ Ըստ Մինաս Բիրբեշյանի, այդ «վերին աստիճանի գեղարվեստական նկարագրություններով, հետաքրքիր պատմվածքով նուրբ հոգե-

¹⁰ Հենրիկոս Սիենկևիվիչ, Սրով ու հրով, Վենետիկ, ս. Դազաբ, 1906, էջ 2—է։

¹¹ Sk'w B. Prus, Ogniem i mieczem, powieść z dawnych lat Henryka Sienkiewicza, „Kraj“, 1884, № 30, s. 7.

¹² Sk'w «Տարազ», 1916, № 1, էջ 101։

բոնք միայն կարող էին օրինակ ծառայել ժամանակակից ան-
զորացած սերնդի համար: Լիսիցյանը այս դեպքում ևս ճիշտ
է ըմբռնում վեպի հայրենասիրական միտումը, նկատելով, թե
«արյունաշաղախ դարը» չէր, որ հիացնում էր, թե «XIX դարու
կրթուած մարդու հրեակայությունը» չէր կարող բավականու-
թյուն գտնել այն նկարագրվող դեպքերի մեջ, որտեղ «լսվում
էին վիրավորների հառաչանքը, ջախջախված ոսկորների
ճշունն ու գետին տապալվող թշնամու դրմփոցը, որտեղ
գլուխները թռչում են, լեզուն փրփրով է ծածկվում, շրթուն-
քից ցայտում է արյան ալիքը»: Նա գրում է, որ թե՛ ըն-
թերցողներին և թե՛ մանավանդ, հեղինակին այս տեսարան-
ները չէին, որ հիացնում էին: Ուղղակի Սենկևիչը ներկա-
յում չէր գտնում մի այնպիսի գործ, որի մեջ «անհատական
հոգին ձուլվիս լիներ ընդհանրական հոգու հետ», իսկ հե-
ռավոր անցյալը ծառայում էր ընդհանուր բարօրությանը,
հայրենասիրությանը, բոլոր գործիչների զգացմունքները ի
մի էր ձուլում, զրդում էր մի ընդհանուր աշխատանքի, հա-
փըշտակում էր, ոգևորում էր մինչև հերոսություն: «Ահա,
Սենկևիչին գրավում էր այն ժամանակվա մարդկանց այս
անգրգվելի հաշտուր դեպի իրանց գործի սրբությունը, հա-
վատը, որ շունի ժամանակակից հասարակությունը», — գրում
է Լիսիցյանը¹⁵:

Պատմավեպերի այս շարքում ջատագոված հայրենա-
սիրությամբ կարող էր ոգեշնչվել և հայ ընթերցողը, որը
պատմական ճակատագրի ընդհանրության պատճառով ու-
ներ ազգային-քաղաքական նույն ձգտումները, լուսավոր ա-
պագայի նկատմամբ՝ նույն հույսերն ու հավատը: Ահա այս
հանգամանքն է, որ թույլ է տալիս չհամաձայնվելու գրա-
կանագիտության մեջ գոյություն ունեցող այն տեսակետին,
ըստ որի՝ «Ներդրության» փառքի տարածման պատճառը
բոլոր երկրներում, բացի Սենկևիչի հայրենիքից, հանդիսա-
նում է այդ պատմավեպերի գեղարվեստական արժեքը:
Յու. Կժիժանովսկին այն կարծիքն է հայտնում, թե բացի
լեհաստանից, մնացած բոլոր երկրներում «ոգու ամրապընդ-

¹⁵ «Մուրճ», 1901, № 1, էջ 105:

ման» քաղաքական պրոբլեմն ընդհանրապես զոյուծյուն չի ունեցել կամ ավելի ճիշտ՝ այդ հասկացությունը նրանց համար հղել է օտար: Եվ, որ այլապես ընթերցողները, ինչպես «Եռերգությունը», այնպես էլ Սենկևիչի մյուս պատմավեպերը գնահատել են և այժմ էլ գնահատում են միմիայն գեղարվեստական արժեքի համար¹⁶: Ի. Գորսկին նույնպես հակված է պաշտպանելու այն տեսակետը, ըստ որի՝ «Եռերգությունը» միայն լեհերի հայրենասիրական ղեկավարներին է դիպել ու իր ժամանակին աճակցվել նրա հոգեկան ապրումներին¹⁷:

Այս տեսակետը մասամբ է միայն իրավացի: Երբ խոսքը վերաբերում է արևմտակլրոպական, ամերիկյան կամ էլ ռուս ընթերցողների գնահատմանը, ապա առաջին հերթին պետք է նկատի ունենալ ազգային ավանդույթների տարբերությունները: Վերոհիշյալ երկրների ընթերցողների համար Սենկևիչի ամենահետաքրքիր ստեղծագործությունը, մինչև այժմ էլ մնում է «Յո երթաս» պատմավեպը: Չպետք է անտեսել և այն հանգամանքը, որ քաղաքական ինքնուրույնության պրոբլեմը տվյալ երկրներում ընդհանրապես առկա չի հղել, ուստի և այդ պատմավեպերում չատագուված բարոյահայրենասիրական գաղափարները չէին, որ առաջին հերթին կարող էին գրավել նրանց ուշադրությունը, այլ՝ արկածային ֆաբուլան, որը հանդիսանում է «Եռերգության» սյուժետային հիմքը, ինչպես նաև այն գրավիչ ձևը, որով մատուցվում է երկը: Իսկ իր պատմավեպերի ձևի ու կառուցվածքի շատ էլեմենտներ Սենկևիչը ներբերել էր և վրոպական գրականությունից, որը և ղյուրացրել էր օտարազգի ընթերցողի համար հարազատ ու սովորական դարձած գրական ձևի միջոցով ավելի հեշտությամբ ընկալել օտար ազգային բովանդակությունը: Ինչ վերաբերում է հայ իրականությանը, ապա պետք է ասել, որ «ոգու ամրապնդման» պրոբլեմը ոչ միայն օտար չէր նրան, այլև հասկանալի էր ու անհրաժեշտ: Սակայն դա չի նշանակում, թե հայ հասարա-

¹⁶ Տե՛ս Julian Krzyżanowski, Twórczość Henryka Sienkiewicza, Warszawa, 1970, s. 162.

¹⁷ Տե՛ս И. Горский, *и др.*, т. 2, с. 305.

կայնությանը «Եռերգությունը» հետաքրքրել էր միմիայն իր գաղափարական կողմով։ Անկախ այն բանից, թե հայ գրականագետները «Եռերգության» պատմականության նկատմամբ ինչպիսի վերաբերմունք են ունեցել, այդ պատմավեպերի հայրենասիրական բարձր զգացման հետ միասին արկածային հետաքրքրաշարժ ֆաբուլան, ինչպես նաև գեղարվեստական արժեքը ևս չափանիշ են հանդիսացել «Եռերգության» հանդեպ ցուցաբերած հետաքրքրության ու գնահատման հարցում։

Դեռևս դարամուտին նշված հայ քննադատների կողմից բարձրացվել են «Եռերգության» լեզվի, գեղարվեստական վարպետության, էպիկական կառուցվածքի հարցերը, որոնք այժմ գրականագիտության մեջ ուսումնասիրվում են ողջ խորությամբ։

«Բազմավեպը» հատկապես նշել է Սենկևիչի «գրության թարմության», «ընտիր լեզվի» մասին, որի շնորհիվ «Եռերգության» հեղինակը դառնում է նորարար, ստեղծելով այնպիսի գրավոր լեզու, որի մասին լեհ մեծանուն գրող Ս. Ժերոմսկին գրել է. «Նրան (Սենկևիչին—Բ. Բ.) է հարկավոր տալ առաջնության դափնիները, դրելու արվեստի մեջ վարպետ լինելու և լեհ գրավոր լեզուն ճարտար ձևով արտահայտելու համար։ Նա մեր առջև բացեց XVII դարի գանձարանը և լեհ գրականությանը տվեց հրաշակերտ ոճ. մենք սեփական ականջներով լսեցինք մեր նախնիների լեզուն»¹⁸։ «Բազմավեպի» գրախոսը (հավանական է՝ Գունտաքճյանը) իր հոգվածում կանգ է առել նաև գեղարվեստական մեծ ուժով, կենդանի գույներով նկարագրված «կյանքով լեցուն պատկերներու» վրա և հիացմունք հայտնել «Եռերգության» նկատմամբ, «ուր ընթերցողը խորասուզված դրվագներուն մեջ, կը մոռանա ժամերու սահիլը, շի կրնար թողուլ գիրքը՝ առանց ցավ մը զգալու... Այնքան հետաքրքրաշարժ և ձգիչ է այս վիպասանությունը»¹⁹։

Ինչպես վերը նշեցինք, «Եռերգության» գեղարվեստա-

¹⁸ S. Żeromski, Elegie i inne pisma, Warszawa, 1928, s. 168.

¹⁹ «Բազմավեպ», 1916, № 12, էջ 276։

կան պատկերների վարպետ ստեղծման մասին են գրել նաև Ստ. Լիսիցյանը, Տ. Նավարյանը, Մ. Բերբերյանը: Ստ. Զորյանը սքանչելի է համարել գեղարվեստական այն նկարագրությունները, որոնք առկա էին «Նոերգության» ամեն մի էջում: Նա հիացած էր հատկապես Զազլոբայի կերպարով, որը համաշխարհային գրականության մեջ եղած ամենատպալմորիչ և ինքնատիպ կերպարներից մեկն էր: Ժամանակին, ինչպես ռուս քննադատության մեջ Կ. Խրանկիչն է ճիշտ բնորոշել՝ Զազլոբայի կերպարը, գտնելով, որ «այդ տիպական կերպարը ներկայացված է այնքան ճշմարտացի, դժագրված է այնպիսի դունագեղությամբ և այնպիսի զարմանալի ամբողջականությամբ, որ չես դադարում նրանով հիանալ»²⁰, այնպես էլ Ստ. Զորյանն է իր հիացմունքը հայտնել այդ «կենդանի դժված կերպարների հանդեպ, ինչպիսին պան Զազլոբան էր, որն այնքան հմտորեն է պատկերված, որ թվում է, թե այդ ծեր շլյախտիչը կենդանի դրված է կտորի վրա»²¹:

Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ Ա. Գունտաքճյանը դեռևս 1906 թ. բնորոշել է «Նոերգության» էպիկական բնույթը, որը ժամանակակից գրականագիտությունը լիովին ընդունում է: Խոսելով Սինկևիչի «Ճոխ երևակայության», «պատերազմների հիանալի նկարագիրների» մասին, Գունտաքճյանը գրել է, որ «այս ամենը գրությունը դյուցազնական բարձրության մը կը հասցնե, այնպիսի թռիչ մը կու տայ անոր՝ զոր միայն ուրիշ այս տեսակ վիպերու մեջ կարելի է տեսնել»²²: Պարզ է, որ «ուրիշ տեսակ վիպեր» ասելով, Գունտաքճյանը նկատի ունի էպիկական կառուցվածքի գործերը: Այն, որ «Նոերգությունը» հասցված է էպիկական բարձրության, ցույց են տալիս այդ պատմավեպում ի հայտ եկած այն մոտիվները, որոնք բնորոշ էին այդ կարգի գործերին: «Նոերգության» հերոսները՝ Կմիչիցը, Պողբիպենտան, Վոլոդյոյովսկին տասնյակ անգամ հանդիպում են մահվան և, էպոսին բնո-

²⁰ „Новый журнал иностранной литературы, искусства и науки“, 1901, № 1, стр 142.

²¹ «Մշակ», 1916, նոյեմբերի 6:

²² Հեճրիկոս Սիեճիեվիչ, Սրով ու հրով, էջ Ա:

րոշ հերոսների նման, միշտ դուրս են գալիս կենդանի: Այդ հերոսների դյուցազնական հատկութիւնների մասին է ակնարկել նաև Զ. Տեր-Գրիգորյանը, գտնելով, որ նրանք «կարծես մարդիկ չլինեն, այլ առաքինի ուրվականներ կամ գերմարդիկ, որոնց համար ամեն բան կարելի է»²³:

Յու. Կժիժանովսկին նշում է, որ «Եռերգութիւնը» իր էպիկական բնույթով, անտարակույս, հենվում է ինչպես անտիկ շրջանի հունա-հռոմեական էպիկական ավանդութիւնների, միջնադարյան (հատկապես ֆրանսիական) էպիկական գործերի, այնպես էլ արևելյան ժողովրդական էպոսի ավանդութիւնների վրա, որոնք դարերի ընթացքում սնել են բոլոր գրողների հրեակայութիւնը²⁴: Եվ հենց «Եռերգութիւնում» հանդես եկած էպիկական մոտիվներն էլ, լինեն դրանք պայքար, հերոսութիւն, մարդկային վիշտ ու տանջանք, թե լավագույն ապագայի նկատմամբ ունեցած իդեալներ, որոնք հատկանշական են եղել բոլոր ժամանակների էպիկական գործերին, պայմանավորել են այդ պատմավեպերի ժողովրդականութիւնը:

* * *

Թեև «Եռերգութիւնից» հետո Սենկևիչը գրում է ժամանակակից կյանքին նվիրված «Առանց դավանանքի» և «Պոլտնեցկիների ընտանիքը» վեպերը, այնուամենայնիվ, 1894 թ. նորից է անդրադառնում իր սիրած պատմական ժանրին, բայց այս անգամ դիմում է ոչ թե հայրենիքի, այլ Ներոնի ու վաղ քրիստոնեութիւնի շրջանի պատմութեանը, որի թեման XIX դարում տարածված էր հվրոպական դրականութեան մեջ:

«Յո երթաս» վեպի մտահղացումը ծնվում է 1893 թ. Հոտմում, երբ իր բարեկամի՝ նկարիչ Գ. Սեմիրադսկու հետ Սենկևիչը դիտում է հին Հռոմի հուշարձանները, ուսումնասիրում Կայսս Տակիտուսի «Անալները» (Տարեգրութիւնը),

²³ «Տարազ», 1915, № 8—9, էջ 106:

²⁴ Տե՛ս J. Krzyżanowski, Twórczość Henryka Sienkiewicza, s. 370.

որն ի միջի ալլոց, նրա ամենասիրած պատմիչներից մեկն էր, և վերջապես տեսնում ս. Պետրոսի «Quo vadis Domine?» անունը կրող մատուռը, որն իր իսկ խոստովանությամբ՝ վեպը սկսելու համար բանալի է դառնում:

Այս փաստերը կապված են վեպը գրելու պատմության միայն արտաքին կողմի հետ. բուն շարժառիթը՝ Լեհաստան թափանցած հվրոպական դեկադանսի դեմ մղվող պայքարի նպատակն էր, գաղութատիրական երկրների կողմից լեհերին հալածելու պատճառը, և ըստ հեղինակի խոստովանության՝ հռոմեական վարչարարական մեքենան տնօրինող այն հզոր պայքարը հոգևոր ուժի դեմ (իսկ դա ժամանակակից հնչեղություն ուներ), որի պատմությունը պատկերված էր Տակիտոսի «Անալներում»: Վեպը գրելու շարժառիթի կապակցությամբ, ֆրանսիացի քննադատ Բոյեր դը Ագենի հարցումին հեղինակը հետևյալ պատասխանն է տվել. «Որպես պատմաբան, ինձ ավելի գրավում է Տակիտոսը: Կարդալով «Անալները», բազմիցս զգում էի, որ ինձ գայթակղում է այդ երկու աշխարհների գեղարվեստական հակադրությունը տալու գաղափարը: ...Այդ միտքը, ինձ՝ որպես լեհի, գրավում էր նյութականի հանդեպ հոգևոր ուժի տարած հաղթանակի գաղափարով, որպես գեղագետի՝ դուր էր գալիս այն հիասքանչ ձևը, որով միայն հին աշխարհը կարող էր արտահայտվել»²⁵:

«Յո երթասը» լույս տեսնելով 1896 թ., շուտով թարգմանվում է բազմաթիվ լեզուներով, և Սենկևիչի համբավը տարածում աշխարհով մեկ: «Յո երթասի» թարգմանությունների կապակցությամբ Բոյեր դը Ագենին ուղղված նույն նամակում Սենկևիչը գրում է. «Ինչ վերաբերում է «Quo vadis»-ի թարգմանություններին, ապա հնարավոր է, որ նրա քանակը գերազանցում է մյուս բոլոր վեպերին: Որովհետև, բացի ամենատարածված լեզուներով հրատարակված թարգմանություններից, ինչպիսիք են անգլերենը, ֆրանսերենը, գերմաներենը, իսպաներենը, իտալերենը և

²⁵ H. Sienkiewicz, Dzieła, wydanie zbiorowe pod red. J. Krzyżanowskiego, t. 40, Warszawa, 1948—1955, s. 137—138.

նույնիսկ ուսանողները, տեղյակ եմ շվեդերեն, դանիերեն, սլովեներեն, պորտուգալերեն, նոր հունարեն, հայերեն, ֆիններեն, լիտվերեն, ճապոներեն, արաբերեն և բազմաթիվ այլ լեզուներով կատարված թարգմանություններին»²⁶:

Ինչպես Եվրոպայում, այնպես էլ հայ իրականության մեջ «Յո երթասի» արձագանքները հիացական էին: Հայ հասարակայնությունը Սենկեիչի պատմավեպին առաջին անգամ մայրենի լեզվով ծանոթանում է 1898 թ., երբ Ստ. Լիսիցյանի թարգմանությամբ այն լույս է տեսնում Թիֆլիսում: Վեպը վերահրատարակվում է 1912 թ. Թիֆլիսում և 1961 թ.՝ Նրևանում: Ալ. Սիրունյանի թարգմանությամբ վեպը նախ 1912 թ. հրապարակվում է «Շող» հանդեսում²⁷, այնուհետև, նույն թվականին՝ Կ. Պոլսում, ապա երկու հատորով լույս է տեսնում Բեյրութում՝ 1952 թ.:

Ի դեպ, Սենկեիչի հանրահայտ պատմավեպի հայ առաջին թարգմանչի՝ Ստ. Լիսիցյանի (1865—1947) երախտիքը լեհ գրականությունը պրոպագանդելու գործում մեծ է եղել: 1883 թ. ավարտելով Թիֆլիսի գիմնազիան, նա 1884 թ. ընդունվում է Օդեսայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը, իսկ երկու տարի անց (1886) կընթությունը շարունակում Վարշավայի համալսարանի նույն ֆակուլտետում: 1889 թ. Լիսիցյանը ստանում է թեկնածուի աստիճան և մերժելով վարշավյան համալսարանում պրոֆեսորության պատրաստվելու առաջարկը, վերադառնում է հայրենիք՝ իր ժողովրդին ծառայելու: Լինելով մի քանի լեզուների գիտակ, նա բացարձակապես տիրապետում էր և լեհերենին: Թարգմանելով «Յո երթասի», Լիսիցյանը հայ ընթերցողին է նվիրում մի այնպիսի գործ, որի թարգմանական արժեքը մինչև այժմ էլ պահպանվում է²⁸:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Գրադարաններում սույն հանդեսի բացակայության պատճառով հնարավոր չեղավ պարզել, թե վեպը ո՞ր համարներում և արդյոք ամբողջությամբ է տպագրվել:

²⁸ Ստ. Լիսիցյանի «Յո երթասի» թարգմանության մասին «Նոր-դարում» (1901, № 55) տպագրվում է մի հոդված (Մ. Յ. ստորագրությամբ), որտեղ գրախոսը ոչ միայն կասկածի տակ է դնում վեպը լե-

կեւիշի վկայում առկա էր ժամանակակից հասարակությանը քրիստոնեական հաշտեցնող դավանանքը ներարկելու միտումը, որի մասին գրել է Լիսիցյանը: Սակայն այլ էր սլատմավկայում առաջ քաշված ամենահիմնական պրոբլեմը. ցույց տալով Հռոմեական կայսրության ներկայացուցիչներ, որն ընթերցողին հիշեցնում էր և լեհ հասարակության ժամանակակից վիճակը, դրողը ձգտում էր ապացուցել ուժի և բռնության վրա հիմնված իշխանության անխուսափելի անկումը: Եվ թեև Սենկևիչն իր վկայում առաջին սլանի վրա էր դնում Ներոնի դեսպոտիզմի անխուսափելի կործանման գաղափարը, այնուամենայնիվ, գտնում էր, որ լեհ ժողովրդի ազգային ճնշման ուժեղացման և դասային հակասութունների սրման պայմաններում, հայրենիքի շահերը պաշտպանելու ու ապագան ապահովելու համար պոպուլյուն ունեւ մեկ միջոց՝ սեփական անձը պահպանել բարոյական անկումից, այսինքն ունենալ բարոյական բարձր հատկանիշներ և նախնիների նման ապավինել քրիստոնեական կրոնին ու նրանում գտնել հույս ու սփոփանք:

Եվ եթե Լիսիցյանը չէր նկատում անարդարության ու բռնության վրա հիմնված վարչակարգի սլատմականորեն անխուսափելի կործանման հիմնական գաղափարը, որը դրված էր վկայում, ապա դրա փոխարեն «Յո երթասի» հեղինակի նման, նա ևս ժամանակի բուրժուական հասարակական կյանքի հակասութուններից դուրս գալու ելքը տեսնում էր դասային հաշտեցման նախապայմանը հանդիսացող՝ քրիստոնեական դավանանքի և բուրժուական հումանիզմի ըուկրդբունքները պաշտպանելու մեջ:

Այսպիս, երբ երկու տարի անց, Սենկևիչին նվիրված հոդվածով Լիսիցյանը հանդես է գալիս «Մուրճում», նորից է անդրադառնում «Յո երթասին» և խոսելով ժամանակակից հասարակության բարոյական ապաքինման մասին, որի համար անհրաժեշտ էր, որպեսզի «անհատական կյանքը ձուլվեր հասարակական կյանքին», վկայը համարում էր «հանրամարդկային սիրո մի փառաբանութուն» և գտնում, որ ժամանակակից մարդու անձնական ու հասարակական կյանքը կարող է վերանորոգվել միայն քրիստոնեական

ճշմարտացիութեան ու սիրո պատվիրանների համաձայն: «Անկասկած,—գրում է նա,—քրիստոնեական սիրո վարդապետութիւնը այժմյան հանդամանքների մեջ ամենաանհրաժեշտն է «քաղաքակիրթ» աշխարհի համար»³¹:

Իհարկե, չի բացառւում, որ Լիսիցյանը այս տողերը գրել է ենթատեքստով: Նա կանգ է առնում նաև մի շատ կարևոր հարցի՝ Լեհաստան թափանցած դեկադենտական ուղղութեան վրա, որը, ինչպես նշվեց, Սենկևիչի համար եղել էր հիմնական պատճառներից մեկը «Յո երթաս» վեպը գրելու համար: Լիսիցյանը նկատի ունենալով եվրոպական դեկադանսի ազդեցութիւնը լեհ որոշ մտավորականների վրա, գրում է. «Առհասարակ լեհական ներկա հեղինակների մեծագույն մասի մեջ նկատւում է այն հիասթափմունքը, թե հսականութեամբ և բռնի ուժով կարելի է հասնել երջանկութեան»: Նա շեշտում է, որ հենց այդ իրադրութեան մեջ է, որ լսւում է «ընդհանրական սիրո քարոզչութիւնը», այսինքն, ճիշտ է նկատում, որ «Յո երթասի» կրօնական միտումը պայմանավորւած էր հոռետեսութեան տարածման ու մարդկային հոգու ապականման աղբյուր հանդիսացող դեկադանսի դեմ Սենկևիչի մղած պայքարով:

«Յո երթաս» պատմավեպի գնահատման հարցում լեհ աջ սոցիալիստների կարծիքին որոշ չափով մոտ էր կանգնած Մինաս Բերբերյանը: 1900 թ. «Նոր-դարում» հրապարակած իր հոդվածում, խոսելով Սենկևիչի «Պոլոնեցկիների ընտանիքը» վեպի մասին, որտեղ լեհ հեղինակը ցույց էր տվել ժամանակակից հասարակութեան նեղ, հասարակական ձգտումները, Բերբերյանը զուգահեռ է անցկացնում «Յո երթաս» վեպի հետ, գտնելով, որ եթե առաջինում պատկերված են Պոլոնեցկիների նման բուրժուաները, որոնք, ձեռք բերելով ընտանիքի ապահովութիւնն ու անձնական երջանկութիւն, իրենց բավարարված էին զգում, ապա «Յո երթասում» արտահայտված են այնպիսի գաղափարներ, որոնք ընդհանուր մարդկութեանն են ծառայում: «Այդպիսի վսեմ և բարձր գաղափարները,—գրում է Բերբերյանը,—միայն

³¹ «Մուրճ», 1901, № 1, էջ 108:

կարող են վերածնել մեր ընկած, ծերացած հասարակությանը: Այդպիսի մի գաղափարական գործ կարող է ողևորել մինչև իսկ Պլոշոկսկու («Առանց դավանանքի» վեպի հերոսի—Բ. Բ.) նման հոռետեսներին, նրանց կյանք և եռանդ ներշնչել, գործելու ասպարեզ ցույց տալ»³²:

Բերբերյանը քրիստոնեական վարդապետությանն ապավինելու Սենկեիշի հումանիստական տենդենցին նայում է ոչ թե որպես հաշտեցնող մի սկզբունքի, այլ հնի նկատմամբ՝ նորի տարած հաղթանակի գաղափարի: Նա հեթանոսությանը, որի հավատը հիմնվում էր անձնական հրջանկության վրա, հակադրում է նոր վարդապետությունը իր ատրուիզմի քարոզով, որն իր բարոյական բարձր հատկանիշներով օրինաչափորեն պետք է հաղթող հանդիսանար: «Հենրիկ Սենկեիշն իր այդ հիանալի վեպի մեջ,—գրում է Բերբերյանը,—գեղարվեստագետի և պատմաբանի բոլոր հատկություններով օժտված, պատկերացնում է մեր առաջ մարդկային պատմության այդ ճգնաժամը: Մի կողմից՝ Ներոնի, հեթանոսության ներկայացուցչի ահռելի տիպարը և նրան շրջապատողները, մյուս կողմից՝ առաջին քրիստոնյաների համեստ, եղբայրական խմբերը և կենցաղավարությունը»³³:

Նվ եթե լեհ սոցիալ-դեմոկրատները (օրինակ՝ խոշոր տեսաբան Կելլես Կրաուլը) նույնպես հաճույքով էին կարդում վեպը և պաշտպանում այն տեսակետը, թե վեպում պատկերված վաղ քրիստոնյաները հանդիսանում են իսկական հեղափոխականներ, որոնք պայքարում էին հռոմեական դեսպոտիզմի դեմ հանուն նոր՝ ավելի առաջադեմ գաղափարների հաղթանակի, սույա Բերբերյանը, թեև քրիստոնյաներին ուղղակի հեղափոխականներ չի անվանում, սակայն այդ միտքն արտահայտում է հետևյալ կերպ. վեպում «երկու աշխարհայեցողություն ճակատ ճակատի են տալիս և նոր, ավելի բարձր գաղափարը հաղթող է հանդիսանում»³⁴:

³² «Նոր-դար», 1900, դեկտեմբերի 14:

³³ Նույն տեղում:

³⁴ Նույն տեղում:

«Յո երթասի» փառքի ամենահոռն շրջանում քննադատության ուշադրությունը սեռված էր վեպի կրոնական գաղափարախոսության վրա: Ուշագրավ է, որ հենց այդ շրջանում վեպի ամենամեծ հովանավորողները կղերա-արիստոկրատական շրջաններն էին, որոնք այն բացարձակապես ընդունում էին և՛ կաթոլիկ Լեհաստանում ու Իտալիայում, և՛ բողոքական Ամերիկայում, Անգլիայում, Գերմանիայում, և՛ ուղղափառ Ռուսաստանում ու լուսավորչական Հայաստանում:

Պարզ է, որ հայ կաթոլիկ միջավայրը ևս, հանձին՝ Մխիթարյան միաբանության, նույնպիսի հիացմունքով պետք է ընդուներ վեպը: Միաբանության անդամ Ս. Նրեմյանը, որ «Բաղմավեպում» բաղմիցս հանդես էր գալիս լեհ գրողների, մասնավորապես Սենկևիչի ստեղծագործությունների նվիրված դրախտականներով, 1900 թ. հիշյալ տմասագրում հատուկ հոգված է տպագրում «Յո երթասի» մասին: Բարձր դնահատելով վեպը, Նրեմյանը գտնում է, որ «Յո երթաս իր ետն պիտի թողու շատ մը մեծ վիպասաններ, այն իր արվեստագիտական և բարոյական արժանյոք դրականության մեջ դարագլուխ պիտի կազմի»:

Խոսելով լեհ վիպասանի «մեծ տաղանդի, մտավորական կորովի, խոշոր հրեակայության, ինքնատիպ և բազմակողմանի հմտության» մասին, նա հատկապես շեշտում է հեթանոս աշխարհի հիասքանչ նկարագրված պատկերները, որի շնորհիվ ընթերցողը լիովին գաղափար է կազմում «ներոնի ժամանակակից հոովմեացոց քաղաքականության, շռայլության, զազանության, ցոփության, անգթության մասին»³⁵: Իսկ դա նշանակում էր, որ Նրեմյանը, թեև ձգտում էր վեպում տեսնել միայն կաթոլիկության ջատագովումը, այնուամենայնիվ, ի տարբերություն կղերական շրջանների, չէր ժխտում հին, նեխած աշխարհի բռնությունն ու անարդարությունը՝ նրա կործանման գաղափարի առկայությունը վեպում, մի բան, որ աշխատում էր չնկատել կղերա-արիս-

³⁵ «Բաղմավեպ», 1900, № 12, էջ 563:

տոկրատական շրջանների քննադատ Տարնովսկին: Երեմյանը, թեև գնահատում էր վեպում ներկայացված վաղ բրիստոնյաների արիության, ինքնազոհության, հանուն իրենց նոր հավատի ցուցաբերած հոգու ամբողջյան գաղափարները, այնուհանդերձ, հասկանալի պատճառով նրան չէր գտնացնում բրիստոնական աշխարհի, հատկապես ս. Պողոս և Պետրոս առաքյալների նահատակության «հապճեպով, համառոտ նկարագրությունը և Quo vadis Domine? ավանդական դեպքին ոչ այնքան ուշագրավ պատկերելին»: «Աստիճակով, — գրում է նա, — գուցե մի քիչ ստվեր թողուն «Quo vadis»-ի ամենահաջող և հրաշալի վիպասանության շողշողուն համբավուն վրա»³⁶:

Ի դեպ, կղերական շրջաններում Երեմյանը միակ բըննադատը չէր, որ վեպում պատկերված բրիստոնիության մոտքը Հռոմեական կայսրություն թույլ էր համարում: Տարնովսկուն նույնպես չէր գտնացնում այն, որ ս. Պետրոսի մահապատժի նկարագրությունից հետո է Սենկեիշը տալիս Պետրոսի ինքնասպանության և ապա՝ Ներոնի մահվան տեսարանները: Այսինքն, Տարնովսկին «ցանկանում էր հեռացնել այն ամենը, ինչ թուլացնում էր կրոնական էքստազի տպավորությունը»³⁷:

Երեմյանին էլ խանգարում էր Ներոնի խնջույքների «ծայրահեղ առասպելական փարթամությունը» և «Ուրսուսի ուժո շատ չափազանցուցնելն»: Այդ ամենը նա համարում է վեպի թուլությունը, որովհետև նախ՝ չէր նկատում, որ հեթանոսական աշխարհի իրական պատկերը նկարագրելով միայն Սենկեիշը կարող էր բրիստոնյաներին ներկայացնել այնպես, ինչպես տրված են վեպում, և ապա՝ չէր կռահում, որ Ուրսուսը իր ահռելի ուժի շնորհիվ փրկելով բրիստոնյա Լիգիային, դրանով իսկ փրկում էր Սենկեիշի «եկեղեցական դավանանքները» (Ի. Գորսկի):

Հայ քննադատներն արժարժեք են նաև «Յո երթասի» պատմականության հարցերը: Ստ. Զորյանը Սենկեիշին

³⁶ Նույն տեղում:

³⁷ И. Горский, №24. т.2, էջ 159.

նվիրված հոգվածում նշում է հատկապես հեղինակի՝ «Յո երթասում» ի հայտ եկած խոշոր տաղանդը և վեպի գլխավոր արժանիքներից է համարում այն, որ պատմավիպասանը պահպանել էր պատմական կոլորիտը, կարողացել էր հաշորդել նկարագրվող դարաշրջանի մթնոլորտը: «Այստեղ,—գրում է Զորյանը,—նա ցույց է տալիս, թե որքան ծանոթ է Հոռմի անցյալի ամենափոքրիկ անցքերին, հիշատակարաններին, դեմքերին և տիրոջների ու ստրուկների հոգեբանությանը»³⁸: Ապա, նա խոսում է հեղինակի նուրբ վրձնի, զարմանալի վարպետության մասին, որի շնորհիվ Սենկևիչը կարողացել էր վերարտադրել Ներոնի սոսկալի ժամանակները, քրիստոնեական կրոնի մուտքը Հռոմ և այդ կրոնի հալածանքը Ներոնի կողմից:

Քննադատ Զ. Տեր-Գրիգորյանը անդրադառնալով այդ հաբցին, գրում է. «Թափանցելով անտիկ Հռոմի կյանքը (Սենկևիչը—Ք. Ք.)՝ վերստեղծում է թե՛ հռոմեական խայտաբղետ ամբոխը և թե՛ արյունից, մարմնից և հոգուց գործած պատմական պատկերները»³⁹:

«Յո երթասի» պատմականությանն անդրադարձել է նաև Լեոն Մուրացանի «Ռուզան» գրամայի գրախոսականում: Քննադատելով Մուրացանի գրաման, նա հակված էր պաշտպանելու այն տեսակետը, թե՛ «պատմական գրվածքում ամենից առաջ և ամենից շատ պետք է լինի պատմական ճշմարտություն»: Այս իմաստով Լեոն օրինակ է բերում Սենկևիչի «Յո երթասը» և գտնում, որ այդ վեպը, որն «այնքան հրճվանք պատճառեց աշխարհի շուրս կողմում», գրավիչ է նրանով, որ «բանաստեղծական խոշոր տաղանդը կարողացել է միանալ պատմական ճշմարտության հետ և պատկերացնել մեր առջև հռոմեական կյանքը»⁴⁰:

Լեոն ճիշտ էր, երբ գտնում էր, թե վեպում «Ներոնը դուրս է բերված ճիշտ այնպես, ինչպես նրան պատկերել են Տակիտոսը, Սվետոնիոսը, Կասիսը և մյուս պատմագիրները», սակայն սխալվում էր, երբ գտնում էր, թե Պետրո-

³⁸ «Մշակ», 1910, նոյեմբերի 6:

³⁹ «Տարազ», 1915, № 8—9, էջ 106:

⁴⁰ Տե՛ս «Մուրճ», 1901, № 7, էջ 262:

նիուսը «կատարելապես պատմական անձնավորություն է»։ Վերջնելով Պետրոնիուսի կենսագրությանը վերաբերող փաստերը, լեհ գրողը այն հարստացրել է նույն էսոթիայում ապրող մարդկանց մասին եղած այլ փաստերով։ Պետրոնիուսի ինքնասպանության տեսարանն, օրինակ, Սենկևիչը նկարագրել է ըստ Տակիտոսի հիշատակության, սակայն ավելացրել է էվնիկայի հետ կապված միջադեպը, որի համար որպես փաստ ծառայել է նույն Տակիտոսից վերցրած, բայց Սենկևային վերաբերող այն հիշատակությունը, երբ նրա ինքնասպանության ժամանակ կինը որոշում է հետևել ամուսնու օրինակին, իսկ վերջինս չի առարկում։ Սենկևիչը Պետրոնիուսի կերպարի ստեղծման համար Տակիտոսից վերցրել էր միայն «կմախքը», իսկ մնացյալը լրացրել էր այլ անձանց վերաբերող փաստերով ու դրանից բխող տրամաբանական հետևություններով։ Ուստի, Պետրոնիուսի կերպարը չի տեղավորվում այն պատմականության շրջանակներում, որը նկատի ունի, և որպես ռեալիզմի ջատագով՝ հասկանում էր կոն։

«Յո երթասի» ժողովրդայնության ամենաաշխույժ շրջանում բանավեճեր էին գնում այն հարցի շուրջը, թե Սենկևիչն իր այդ պատմավեպը գրելիս ինչ աղբյուրներից էր օգտվել, որքանով էր ազդվել նույն թեմատիկայով պատմավեպեր գրած ժամանակակից հեղինակներից և, վերջապես, ինչպիսի տեղ է գրավում իր վեպով այդ գրողների շարքում։

Արևմտահվրոսպական երկրներում նման բանավեճերը հասնում էին այնպիսի ծայրահեղության, որ լեհ գրողին նույնիսկ մեղադրում էին գրագողության մեջ։ Վերոհիշյալ հարցը, թերևս, այժմ շոշափեինք, եթե այդ լուրերի արձագանքները տեղ չգտնեին հայ մամուլի էջերում։

«Նոր-դարը» հրապարակում է մի հոդված, սրտեղ պրախոսը (աղգանունը նշված չէ) հենվելով «Journal des Debats» ամսագրի քննադատ Մորիս Մյուրիի հոդվածի վրա, հայ ընթերցողին ծանոթացնում է արևմտահվրոսպական մամուլում տարածված կարծիքներից մեկի հետ, ըստ որի՝ Սենկևիչը իր պատմավեպը գրելիս օգտվել է անգլիացի գրող

Բուլվեր Լիտտոնի «Պոմպիի վերջին օրերը» վեպից⁴¹։ Հոգվածագիրը բազմաթիվ օրինակներ է բերում երկու վեպերից և բանի որ ինքն էլ հակված էր հավատալ այդ լուրերին, աշխատում է ապացուցել Լիտտոնի և Սենկեիշի վեպերի նմանությունը։

Իհարկե, այդօրինակ մեղադրանքները բոլորովին անհիմն էին։ Մինչ «Յո երթաս» վեպի երևան գալը, գրականության մեջ արդեն գոյություն ուներ Ներոնի դարաշրջանին նվիրված շուրջ հարյուր անուն ստեղծագործություն, որոնց հեղինակները օգտվել էին վաղ շրջանի նույն աղբյուրներից, և թերևս, որոշ չափով ազդել միմյանց վրա։ Այս հարցը լուսաբանելու համար լեհ գրականագետ Ալֆոնս Բրոնարսկին 1926 թ. գրում է «Quo vadis»-ի կապը հռոմեական գրականության հետ»⁴² աշխատությունը, որտեղ ապացուցում է, որ Սենկեիշը չէր օգտվել ո՛չ Լիտտոնից (ինչպես դառնում էին իտալացի քննադատները) և ո՛չ էլ Շատոբրիանից, Ռենանից (ինչպես ֆրանսիացի քննադատներն էին պնդում)։ Լեհ քննադատ Ալինա Լադյկան իր «Հենրիկ Սենկեիշ» աշխատությունում գրում է, որ Սենկեիշին «մեծամասամբ մեղադրում էին այն հեղինակներից օգտվելու մեջ, որոնց ստեղծագործություններին լեհ գրողն ընդհանրապես ծանոթ չէր»⁴³։

Այդ շրջանում քննադատները, ղուգահեռներ անցկացնելով Սենկեիշի և վերը հիշատակված գրողների միջև, առավելությունը մերթ տալիս էին «Յո երթասի» հեղինակին, մերթ՝ Ֆլոբերին, Լիտտոնին կամ էլ մեկ այլ վիպասանի։ Տարնովսկին, օրինակ, քրիստոնեական թեմայով պատմավեպեր գրելու սկզբունքին դեմ լինելով հանդերձ, Սենկեիշի «Յո երթասը» շատ ավելի բարձր էր գնահատում անգլիացի կարդինալ, գրող Ն. Ուայլմենի «Ֆարիոլայից»։ Տարնովսկուն հակառակ, Ս. Նրեմյանը, թեև բարձրարժեք գործ էր համարում «աստվածաբան ծիրանավորի» (Ուայլմենի) վե-

⁴¹ «Նոր-դար», 1901, ապրիլի 7։

⁴² *Alfons Bronarski*, Stosunek „Quo vadis” do literatury romańskich, Poznań, 1926.

⁴³ *Alina Ladyka*, Henryk Sienkiewicz, Warszawa, 1965, s. 260.

սլը, բայց ընդհանրապես դեմ էր վեպերը համեմատությամբ գնահատելու սկզբունքին: Առարկելով իտալացի քննադատ Թինո Մանթովանիին, որը, համեմատելով Ֆլոբերի «Սալամբոն» և Սենկեիշի «Quo vadis»-ը, առավելությունը տվել էր առաջինին, Երեմյանը գրում է. «Շատ հանդուգն դատաստան և քննադատություն է «Սալանպոն» և «Գուլո վատիսը» իրարու հետ բաղդատել և գնահատել հեղինակներուն Սենկեիշի և Ֆլոպիերի իրարմե ունեցած առավելությունը»⁴⁴:

Ըստ Երեմյանի՝ վեպերը իրար հետ չի կարելի համեմատել այն պատճառով, որ «վիպասանական նյութերը համանման չեն»: «Հնախոսական որևէ վեպ իրարու հետ հրե կը բաղդատենք, կը սիրենք նկատողության առնել վեպին նյութը,—գրում է Երեմյանը,—«Սալանպո», «Պեն հիր», «Հետկինք Անոր», «Պոմպեի վերջին օրերը», «Գուլո վատիս», «Անտինա», «Օմո սում» և «Փաբիուլա» ասոնք ամենն ալ հին դարերու մեջ իրական կյանքի վիպասանական տեսարաններու գեղեցիկ պատկերներ են, սակայն չենք կրնար ըսել, որ հեղինակները այդ հին կյանքը, ճարտարապետությունը, բարքերը, հանգեսները նկարագրած ատեն՝ համանման հաջողություն, կորով և հմտություն ցոյց տված ըլլան. տաղանդներու մեջ կը դնենք կարողության խորություն, բայց միշտ պիտը է նկատի ունենալ վիպասանական առարկային հանգամանքները»⁴⁵:

Եթե Երեմյանը, Սենկեիշի պատմավեպը բարձր գնահատելով հանգերձ, խուսափում է այն որևէ վեպի հետ համեմատել, ինչպես անում էին շատ քննադատներ, ապա Ստ. Զորյանը ժամանակին համոզված գրել է. «Մինչև «Յո երթասի» երևան գալը՝ պատմական լավագույն վեպեր համարվում էին Գ. էբերսի վեպերը և «Պոմպեի վերջին օրերը» վեպը, բայց Սենկեիշի «Յո երթասը» ստվեր ձգեց այդ բոլորի վրա և այժմ իրավամբ համարվում է պատմական միակ արժանավոր և անմրցելի վեպը»⁴⁶:

⁴⁴ «Բաղմավեպ», 1905, № 1, էջ 36:

⁴⁵ Նույն տեղում, էջ 36—37:

⁴⁶ «Մշակ», 1916, նոյեմբերի 6:

եվ իրոք, Սենկեիշի «Յո երթաս» վեպը իր գեղարվեստական գրավչությամբ այնպիսի համընդհանուր ճանաչում է գտնում, որ միլիոնավոր տաքաբանակով տարբեր երկրներում հրատարակվելուց բացի, այն բեմականացվում է Փարիզում և Մոսկվայում: Նիցցայում բեմադրվում է Յ. Նոուգեսի «Quo vadis» օպերան: Ֆրանսիայում և Իտալիայում վեպի հիման վրա ստեղծված սցենարներով նկարահանվել են ֆիլմեր:

Հայ իրականության մեջ՝ «Quo vadis»-ի լայն ճանաչման մասին է վկայում նաև այն փաստը, որ վեպը բեմականացվում է հայ թատրոնում: «Դրամատիկական ընկերության» խումբը տարիներ շարունակ բեմադրում է «Յո երթասը» (պատմավեպը դրամայի էր փոխադրել ռուս գրող Սոբոլշչիկով-Սամարինը, հայերեն թարգմանել՝ Լ. Բաբայանը), որը մեծ և ջերմ ընդունելություն է գտնում հայ հասարակայնության կողմից: Ուշագրավ է այն փաստը, որ գլխավոր դերերում հանդես էին գալիս հայ բեմի տաղանդավոր դերասաններ՝ Վահրամ Փափազյանը (Վինիկիոս), Հասմիկը (կայսրուհի Պոպպեա), ինչպես նաև Սևումյանը (Պետրոնիոս), Միրզոյանը (Ներոն)⁴⁷:

Ավելացնենք նաև, որ շատ նկարիչներ ստեղծելով «Յո երթասի» իլյուստրացիաները, իրենց վրձնով կենդանացրել են վեպում նկարագրված հին Հռոմի կյանքի պատկերները: Հատկապես հայտնի են լեհ տաղանդավոր նկարիչ Յան Ստրկայի ստեղծած պանորամային կտավները, որոնք ոչ միայն ժամանակին ցուցադրվում են Փարիզի, Մոսկվայի, Վարշավայի ցուցասրահներում, այլև օգտագործվում մի շարք հրատարակությունների նկարադարձումների համար: 1903 թ. նոյեմբերին «Մշակում» տպագրվում է Հզորունու (որն անձամբ ներկա էր եղել Մոսկվայում բացված ցուցահանդեսին) հոդվածը, որտեղ մանրամասն նկարագրվում է լեհ նկարչի ստեղծած տասնհինգ կտավների բովանդակությունը, խոսվում է գեղարվեստական այն մեծ ազդեցության մասին, որ թողնում էին դիտողի վրա:

⁴⁷ Տե՛ս «Մշակ», 1916, հոկտեմբերի 27:

Եթե «Եռերգություն» և «Յո հրթառ» պատմավեպերում Սենկևիչը բուրժուական իրականության քննադատությունը արտահայտում է անցյալը ներկային հակադրելով, ապա «Առանց դավանանքի» վեպում գրողը դիմում է ժամանակակից կյանքի անմիջական վերլուծությանը: Սենկևիչի այս վեպը տրամագծորեն հակադրվում է «Եռերգությանը», թեև երկու ստեղծագործություններում էլ հանդես է գալիս մարդկանց ճակատագրի հանդեպ ունեցած միևնույն կոնցեպցիան: «Առանց դավանանքի» հերոսը դառնում է «Եռերգության» հերոսների յուրատիպ անտիթեզը. Եթե նշված պատմավեպերի հերոսները մարմնավորում էին հայրենիքի հանդեպ ունեցած իդեալները, ապա «Առանց դավանանքի» վեպի հերոսի՝ Պլոշովսկու անիմաստ կյանքը պայմանավորվում էր դրանց բացակայությամբ:

XIX դարի վերջում անդամալանք, անսկզբունք մարդկանց կերպարը մտնում է համաշխարհային գրականության մեջ, քանի որ դարի այդ հիվանդությունից զերծ չէր մնացել բուրժուական և ոչ մի երկիր: Դեռևս XIX դարի սկզբի բուրժուական հասարակությունն է, որ ծնունդ է տալիս ժուլիեն Սորելին, որը հետագայում, տարբեր անուններով և, իհարկե, տարբեր որակով հարություն է առնում հվրոպացի, ռուս, հայ և այլազգի գրողների ստեղծագործություններում:

Ֆրանսիական գրականության մեջ այդ երևույթն իր արտահայտությունն է գտնում Ռենանի փիլիսոփայական գործերում, գերմանական գրականության մեջ՝ Մաքս Նորդաուի ստեղծագործություններում: Ռուսաստանը դարակեսին ուներ «դարի հիվանդության» իր տարբերակը, ավելորդ մարդու տիպը՝ «օբլոմովականությունը»: Նման կերպարներ ստեղծել են նաև Գոգոլն ու Զիսովը: Լեհաստանում, մինչև «Առանց դավանանքի» վեպի ի հայտ գալը, դեկադենտի կերպարներ են ստեղծում Ալ. Մանկովսկին, Լ. Բիլմոնտը, Յ. Խոփնսկին, է. Օժեշկովան: «Դարի հիվանդությունից» զերծ չի մնում նաև հայ իրականությունը: Այս տեսակետից հատկապես բնորոշ է Նար-Դոսի ստեղծագործությունը:

Իհարկե, դարի այդ «պսիխոլի» բնույթը, բնորոշ դժնրը, նրա դարդացումը տարբեր ստեղծագործություններում տարբեր ձևով էր ներկայացվում: Դա բխում էր տվյալ երկրի քաղաքական ու հասարակական իրադրությունից, մշակութային վարդապետական մակարդակից, ավանդներից, սովորույթներից, ինչպես նաև ամեն մի գրողի՝ «դարի հիվանդության» նկատմամբ հանդես բերած վերաբերմունքից: Սակայն, ամեն դեպքում, տարբեր երկրներում նրկատվող այդ երևույթը բխում էր միևնույն աղբյուրից. դատարկունք էր բուրժուական բարոյագուրդ միջավայրի, հավատի կորստի և աշխարհի ճակատագրի հանդեպ ունեցած անհանգստության:

Սենկևիչի «Առանց դավանանքի» վեպը, որը լույս է տեսնում 1890 թ., պարզ է, պետք է մեծ հետաքրքրություն առաջացնի այն բոլոր երկրներում, որտեղ անկումային տրամադրությունները շարիք էին դարձել հասարակական կյանքի առաջընթացի համար: Հետաքրքիր է այն փաստը, որ բուն լեհաստանում վեպը գնահատվում էր նեգատիվ կողմով: Ազգային դաստիարակչական տեսանկյունից «Առանց դավանանքի» գիտվում էր որպես երերուն, անհաստատ մի գործ, իսկ Սենկևիչի ստեղծագործության համար՝ որպես պատահականություն կամ զեղարվեստական սխալ⁴⁸:

Ռուսաստանում Սենկևիչի վեպը ընդունվում է մեծ հետաքրքրությամբ: Սենկևիչի հերոսը ռուս ընթերցողին գրավում է ազգային դրականության մեջ ստեղծված՝ Օնեգինի, Պեչորինի, Ռուդինի, Օբլոմովի նման մարդկանց հետ ունեցած որոշ նմանությամբ: Սակայն դարավերջի այդ նոր հերոսը՝ Պլոշովսկին, վերահիշյալ տիպերից որակապես տարբերվում էր արդեն. նա ծնունդ էր հասարակական-քաղաքական նոր պայմանների, նոր ժամանակաշրջանի:

Ռուս գրողներն ու քննադատները «Առանց դավանանքի» վեպը համարում էին գրական խոշոր, ինքնուրույն երե-

⁴⁸ Skł. Bazyli Białkożowicz, Z dziejów wzajemnych polsko-rosyjskich związków literackich w XIX wieku, Warszawa, 1971, s. 229.

վույթ: Լ. Տոլստոյը, որն ընդհանրապես զրվատանքով չէր խոսում Սենկևիչի պատմավեպերի մասին (լեհ գրողի կրոնական արագիցիոն տենդենցը չէր համընկնում նրա՝ էթիկական կատեգորիայի հասցրած կրոնական սկզբունքին), շատ բարձր էր գնահատում «Առանց դավանանքի» վեպը, հատկապես Անեկվայի կերպարը, որը նատաշա Ռոստովայի, Դոլիի նման, իր իդեալին համապատասխանող, բարոյական կնոջ բարձր կերպար էր:

Ան. Չեխովը Սենկևիչի վեպը համարում էր «հետաքրքիր ու խելոք», իր ամբողջականության մեջ՝ «գեղեցիկ, ջերմ, գեղանկար» մի գործ:

Հայ հասարակայնությունը շատ վաղ է ծանոթանում «Առանց դավանանքի» վեպին: Դա լեհ գրողից թարգմանված առաջին խոշոր գործն է, որը 1891—1892 թթ. հրապարակվում է «Մուրճի» էջերում, ապա՝ 1892 թ. լույս տեսնում առանձին գրքով:

Ժամանակի ճանաչված թարգմանիչ Տիգրան Հովհաննիսյանը վեպը թարգմանում է Վ. Լավրովի ռուսերեն թարգմանությունից, որը 1890 թ. հրապարակվել էր «Русская Мысль» ամսագրում: Վեպը հրկրորդ անգամ վերահրատարակվում է 1911 թ. Թիֆլիսում, իսկ երրորդ՝ ուղղված հրատարակությունը լույս է տեսնում 1925 թ., Կ. Պոլսում, Յ. Ասատրյան օրդինների տպարանում:

Տ. Հովհաննիսյանը վեպը թարգմանում է բարեխղճորեն (համեմատում բնագրի հետ, լրացնում Լավրովի չթարգմանած հատվածները) և այնպիսի բարձր մակարդակով, որ հետագայում ոչ մի թարգմանչի հարկ չի լինում նորից ձեռնարկելու վեպի թարգմանությունը: Վեպի չորրորդ՝ 1961 թ. (Երևան) վերահրատարակությունը, նույնպես Տ. Հովհաննիսյանի 1892 թ. կատարած թարգմանությունն է, իհարկե, որոշ խմբագրական ուղղումներով:

Այն մեծ հետաքրքրությունը, որ ցուցաբերում է հայ հասարակայնությունը լեհ գրողի վեպի նկատմամբ, բացատրվում է նրանով, որ «դարի հիվանդությունը» իր արմատներն էր դրել նաև հայ հասարակական կյանքում: Այդ երկվույթը, որ տիպական էր և հայ բուրժուական հասարակու-

Թյանը, Իհարկե, ինչ-որ չափով տարբերվում էր թե՛ հվրոպականից և թե՛ ուսականից:

Հայ գրականություն մեջ Նար-Դոսն է իր «Մահը» վեպում ստեղծում նոր ժամանակի այդ հերոսի կերպարը: Շահյանը («Մահի» հերոսը), Իհարկե, նման էր Պլոշովսկուն, որն անկումային տրամադրությունները կրող այդ սերնդի վերջին ժառանգն էր:

Տոհմիկ ազնվականության ներկայացուցիչ Պլոշովսկին, որը գեղեցիկ էր արտաքինով, կրթված, ուներ գեղադիտական բարձր զգացում, ճաշակ ու նուրբ միտք, հեղինակի կողմից ներկայացվում է որպես հոռետես, անվերջ կասկածներից իրեն տանջող, բարոյական համոզմունքներից զուրկ, կոսմոպոլիտ և անդամանաք մի անձ: Երաժշտության, նկարչության, քանդակագործության, պոեզիայի հիանալի գիտակ լինելով հանդերձ, Պլոշովսկին փորձ չէր անում ըստեղծագործելու նույնիսկ արվեստի բնագավառում: Իզուր չէ նա խոստովանում, որ եթե ինքը կարողություն չունենար, ապա այդ դեպքում ստիպված կլիներ որևէ գործի կաշել:

Մ. Գորկին գտնում էր, որ «Առանց դավանանքի» վեպը հվրոպական գրականության մեջ խոշոր տեղ է գրավել և ապա ավելացնում էր, որ «Առանց Պլոշովսկու, հվրոպական հերոս-ինդիվիդուալիստների մասին եղած գրական ստեղծագործությունները կլինեն ոչ լրիվ, աղքատիկ»⁴⁹: Գորկին իր կարծիքն է հայտնել նաև Նար-Դոսի «Մահը» վեպի մասին: «Նար-Դոսի վեպը,—գրել է նա,—ցույց է տալիս, որ հայ գրականությունը նույնպես ծանոթ է այդ վհատ տիպին: Վեպի պատմա-գրական նշանակությունը անվիճելի է, թեև վեպը թույլ է՝ թերևս այդպես է թվում վատ թարգմանություն պատճառով»⁵⁰: Վեպն, Իհարկե, անհաջող էր թարգմանվել ուսերեն, սակայն Գորկու համար ավյալ դեպքում դա չէր էականը, այլ այն, որ Նար-Դոսը արձագանքել էր

⁴⁹ М. Горький, Собр. соч. в 30-и томах, т. 15, М., 1950, стр. 364.

⁵⁰ М. Горький, Собр. соч. в 30-и томах, т. 25, М., 1953, стр. 477.

հայ բուրժուական հասարակության որոշ շրջանների բարոյական անկման պրոբլեմներին: Գորկին, իրավամբ, հայ գրողի վնասը համեմատում է հվրոսական ու ռուսական գրականության մեջ «անդավանանք» մարդու մասին գրված ստեղծագործությունների հետ:

Նար-Դոսի Շահյանը իր հոռետեսությամբ, կասկածամբությունամբ, ինքնավերլուծության միտումով, կամքի բացակայությամբ, հասարակությանը օգտակար լինելու անընդունակությամբ, ազգի ճակատագրի նկատմամբ ցուցաբերած անտարբերությամբ հիշեցնում էր Պլոշովսկուն: Ի տարբերություն Սենկևիչի հերոսի, Շահյանը զեղազեղ չէ, կանանց շրջանում շունի հաջողություն, ավելի քան թուլամորթ է ու ալարկոտ, որոնցով (այս դեպքում արդեն) ավելի հիշեցնում է Օբլոմովին:

Եթե Սենկևիչը Պլոշովսկուն է հակադրում գործունյա Կրոմիցկուն և եղբայրներ խվաստովսկիներին, որոնք մեծ եռանդով աշխատում էին կարողություն ձեռք բերել (գրաքննության պատճառով Սենկևիչը ազգային հարցը շոշափում է ենթատեքստում), ապա Նար-Դոսը Շահյանին է հակադրում Արմենակին, որը Արևմտյան Հայաստանում իրեն նվիրել էր ազատագրական գործին, և Մինասյանին, որն աշխատում էր հայ գյուղում լուսավորություն տարածել:

Պատկերելով հայ բուրժուական հասարակության մեջ ապրող ինտելիգենտի այդ տիպը, Նար-Դոսը քննադատության է ենթարկել նեղանձնյա, ոտքի տակ հող շունեցող մարդկանց, որոնք իրենց աննպատակ, անզաղափար կյանքին վերջ էին տալիս ինքնասպանությամբ, փոխանակ հոգ տանելու ազգի, հասարակության բարօրության մասին:

Սենկևիչը նույնպես այդ նույն նպատակն էր հետապնդում իր «Առանց դավանանքի» վեպում: Այդ մասին Յ. Յանչևսկուն ուղղված նամակում նա գրել է. «...վնասը («Առանց դավանանքի»—Բ. Բ.) պետք է լինի և կլինի չափից դուրս նախազգուշական՝ ինչի հանգեցնում է հիմքից զուրկ, առանց դավանանքի կյանքը, հոռետեսական, նրբացած, քրննադատող, առանց պարզության միտքը: Իհարկե, այդ չի

փրկի պլոշովսկիներին, սակայն ուշադրություն կհրավիրի այն պատճառների և ուժի վրա, որոնցից ծնվում են նրանք»⁵¹։

Ուրեմն, խոսքը ոչ թե անձամբ Պլոշովսկու կամ Շահ-յանի նման անհատների մասին է, այլ մի ամբողջ երևույթի։ Իդուր չէ, որ Պլոշովսկին ասում է. «Իմ անունը լեզբոն է»։

«Տարադի» գրախոսը Սենկևիչի «Առանց դավանանքի» վեպի հայերեն թարգմանությունը համարում է «խոշոր երևույթ» և գտնում, որ հայ գրականության մեջ այն «կգրավի առաջնակարգ տեղ, որին արժանի է իր բովանդակությամբ»⁵²։ Եվ իրոք, Սենկևիչի վեպը մեծ ժողովրդայնություն է ձևք բերում հայ հասարակության մեջ, մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ մտավորականությունը կանգնած էր գաղափարական ճգնաժամի առաջ։ Հայ գրողներն ու քննադատները իրենց հոգվածներում աշխատում էին լուսաբանել «Առանց դավանանքի» վեպում առաջ քաշված այն պրոբլեմները, որոնք ոչ միայն խորթ չէին հայ իրականությանը, այլև իրենց լուծմանն էին սպասում։ Նրանց հետաքրքրում էր Պլոշովսկին՝ իր խորհրդածություններով ու հոգեկան ապրումներով, որովհետև նա իրենից ներկայացնում էր ոչ միայն ազգային, այլև համամարդկային ամենալավ ու արտահայտված տիպերից մեկը։

Ուշադրության են արժանի այն գնահատականները, որ տվել են հայ քննադատները Սենկևիչի վեպին։

Այսպես, Ստ. Լիսիցյանը գտնում էր, որ հատկապես այս վեպի մեջ է Սենկևիչի տաղանդը լիովին ցույց տվել իր բոլոր լավագույն հատկությունները։ «Զարմանալի զարգացած գեղարվեստական ճաշակ,—գրում է գրականագետը,— նկարագրության անաչառություն (օբյեկտիվիզմ), իրական կյանքի խորին ըմբռնողություն, ռեալիստն ոգի և նուրբ հոգեբանական դիտողություն»⁵³։

Ս. Հախումյանը այս վեպի կապակցությամբ գրողին անվանում է «մեծ արտիստ»։ Զ. Տեր-Գրիգորյանը, Սենկևիչին համարելով լեհ գրականության պարծանքը, գրել է.

⁵¹ Alina Ladyka, նշվ. աշխ., էջ 228։

⁵² Տե՛ս «Տարադ», 1894, № 9, էջ 137։

⁵³ «Մուրճ», 1901, № 1, էջ 105։

«Ժամանակակից կյանքից վերցրած իր վիպերով Սենկևիչը հանդես է գալիս իբրև նուրբ հոգեբան լեհական հասարակության բոլոր խավերի համար: Նա իր այդ գրվածքներում վարպետորեն վերլուծում է ինտելիգենտի՝ կասկածներից ու հակասություններից «հոգնած» հոգին»⁵⁴:

Սենկևիչի «Առանց դավանանքին» այնպիսի մեծ տպավորություն է թողել Ստեփան Շահումյանի վրա, որ նա վեպը կարդալուց անմիջապես հետո (1896) ձեռնամուխ է եղել իր «Հիշատակարանը» գրելուն: Նամակներից մեկում Շահումյանը այն միտքն է հայտնել, որ եթե ինքը «ազատ ժամանակ» ունենար, ապա կգրեր «ոչ թե պատկերներ ու ոտանավորներ կամ վեպեր, այլ հիշատակարան», որտեղ ամեն օր կարձանագրեր այն բոլորը, ինչ որ զգում ու մտածում էր և դրանով ամենամեծ ծառայությունը կմատուցեր մարդկությանը: Անշուշտ, «Առանց դավանանքի» վիպն է Շահումյանին հանգեցնում այն հղրակացության, որ՝ ինչպես ինքն է խոստովանում, «ոչ մի գրվածք, ոչ մի ոտանավոր կամ վեպ այնքան չեն նպաստի մարդկային կյանքն ուսումնասիրելու գործին, որքան մի մարդու ներքին աշխարհի, այսինքն սրտի ու մտքի անկեղծ պատմությունը, որ կարելի է գտնել հիշատակարանի մեջ»⁵⁵:

Գնահատելով Սենկևիչի վեպի օգտակարությունը ժամանակակիցների համար, Շահումյանը գրում է, որ «Առանց դավանանքի» վեպը գրականության պսակը պետք է համարել»⁵⁶:

Հատկանշական է, որ հայ քննադատները այս վեպի հետ առնչում էին Սենկևիչի առաջին պատմավեպերի շարքը՝ «Եռերգությունը»: Լիսիցյանը ճիշտ էր նկատում, որ լեհ գրողը «Եռերգությունից» անմիջապես հետո ձեռնամուխ է լինում «Առանց դավանանքի» վեպը գրելուն, որպեսզի քնդգծի հին ու նոր մարդկանց հակադրությունը, բանի որ ժամանակակից հասարակությունը ի տարբերություն անցյալ, էպիկա-

⁵⁴ «Տարազ», 1915, № 8—9, էջ 106:

⁵⁵ Ստ. Շահումյան, Կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն, Երևան, 1968, էջ 38:

⁵⁶ Նույն տեղում:

կան ժամանակների, հավատ շուներ դեպի իր գործի սրբությունը:

Տիգրան Նաղարյանը, Պլոշովսկուն համարում է Սեն-կերիշի պատմական նախորդ վեսերի հերոսների հակառակը. եթե առաջինները օժտված էին խանդով, տանջանքներով, բարդ շէին, ունեին ուժեղ կամք, ապա «Առանց դավանանքի» հերոսը խելք ուներ, բայց բացակայում էր կամքը⁵⁷:

Ուշագրավ է, որ հանձին Պլոշովսկու Լիսիցյանը տեսնում էր համաշխարհային նշանակություն ունեցող տիպարի պատկերը, որն առհասարակ բնորոշ էր դարավերջի կրթված հասարակությանը: Նա գտնում էր, որ Պլոշովսկու փիլիսոփայաբար դարգացած միտքը չէր կարողանում ոչ մի գործի, ոչ մի համոզմունքի վրա կանգ առնել, որովհետև վերլուծական ուժով քրքրում էր ամեն ինչ «և՛ փառքը, և՛ սերը, և՛ մահը, և՛ հավիտենականությունը, և՛ ամեն տեսակ հավատալիքները, և ամենը հերքելով՝ հարցնում էր ինքն իրեն՝ որն է ուրեմն ճշմարիտը, ու տարակուսած կանգնում չգիտեմի վրա»⁵⁸:

Ողբերգական այս երկվությունն էր պատճառը, որ Լիսիցյանը Պլոշովսկուն համարում էր XIX դարի Համլետ, բայց այն տարբերությամբ, որ «Համլետը գոնե սիրուն, գոնե ընկերական զգացմունքին է անձնատուր լինում, իսկ նա (Պլոշովսկին—Բ. Բ.) այս էլ չէ կարող, որովհետև այս էլ է ենթարկում իր թերահավատության, ու անվերջ անբախտ է: Անբախտ է նրա համար, որ «չգիտե կամենալ», որ իր կամքի առջև անկարող է մի այնպիսի նպատակ դնել, որ վաղը իր վերլուծությամբ շտապալներ»⁵⁹: Ըստ Լիսիցյանի՝ «այդպիսի մարդիկ չէին կարող օգնական լինել ժողովրդին», որովհետև «նրանք ծծում էին հենց իրենց հյութերը»:

Լեհ ժամանակակից գրականագետ Յու. Կժիժանովսկին Պլոշովսկուն նույնպես համարում է XIX դարի Համլետ և գտնում, որ Սենկեիշի այդ հերոսի բարոկկյան նախահայրը

⁵⁷ Տե՛ս «Տարադ», 1916, № 11, էջ 101:

⁵⁸ «Մուրճ», 1901, № 1, էջ 105—106:

⁵⁹ Նույն տեղում:

այնքան մեծ ազդեցություն է թողել լեհ հեղինակի վրա, որ նույնիսկ նրա հերոսը զարմացած ասում է. «Համլետը մարդկային հոգին է, հղել է, կա, և կլինի: ...Հոմերոսին և Դանթեին հասկանում եմ իրենց էպոխայի ֆոնի վրա, Հասկանում եմ, որ նրանք կարողացան անել այն ամենը, ինչ արեցին, բայց այդ Անգլիացին ինչպես կարողացավ XVII դարում ղդալ այն ամբողջ պսիխոլը, որը դարձավ XIX դարի հատկանիշը»⁶⁰:

Իր ժամանակին, քննադատ Բերբերյանը Պլոշուսկուն նույնպես համեմատում է Համլետի հետ: Սակայն նա Պլոշուսկու կողքին էր դնում ոչ միայն Համլետին, Օնեգինին, այլև Շահազիզի Լեոնին, որն, ինչ խոսք, համեմատության հզոր շուներ վերահիշյալ հերոսների հետ: Շահազիզի Լեոնը չէր կարող տեղ գտնել այն հերոսների շղթայում, որոնք կռվում էին իրենք իրենց հետ, հասարակության հետ, լի էին երկվության մեջ և կասկածներով, անընդունակ՝ որևէ գործունեության: Հակառակ այդ հոռետեսների՝ Լեոնը դարակեսի նոր գաղափարների կրողն էր, դեմոկրատական հայացքների տեր երիտասարդության ներկայացուցիչը, որը լի էր հասարակությանը օգտակար լինելու մեծ ձգտումով:

Սենկևիչի «Առանց դավանանքի» վեպը, սկսած անցյալ դարի 90-ական թվականներից մինչև մեր օրերը, հայ իրականության մեջ լայն ճանաչում է գտել, դարձել ամենատիրված գրքերից մեկը: Այդ են վկայում և բաղմաթիվ այլ փաստեր, որոնք, թերևս, աննշան կարող են թվալ, սակայն թե՛ բուն Հայաստանում ապրող և թե՛ տարբեր երկրներում ցրված հայերի՝ լեհ վիպասանի «Առանց դավանանքի» վեպի հանդեպ ունեցած մեծ հետաքրքրության ու ժողովրդայնության վառ ապացույցներից են: Հիշատակենք դրանցից երկուսը: Անեկլայի կերպարն, օրինակ, որն այդքան հուզում էր Տոլստոյին ու Զեխովին, ոգեշնչման աղբյուր է հանդիսանում անգլահայ բանաստեղծ Յ. Ս. Լեոնյանի համար: «Աղբյուրի երգը» բանաստեղծության մեջ նա սիրած աղջը-

⁶⁰ Ju'ian Krzyżanowski, *Twó:czosć Henryka Sienkiewicza*, s. 291.

կան համեմատում է Անեկկայի հետ, գովերգում նրա գեղեցկությունը, համեստությունը, ամոթխածությունը⁶¹։

Հետաքրքիր է և այն փաստը, որ ֆրանսահայ գրող Վազգեն Շուշանյանը իր հիշողություններում պատմում է Հալեպի հայկական որբանոցներից մեկի մասին, որտեղ եղած իր ընկերների «աղաչանքով» նրանց համար գտնում է Սեն-կերիշի «Առանց դավանանքի» և Տուստոյի «Հարություն» վեպերը։ Շուշանյանը գրում է, որ այդ օրերին իրեն երջանիկ էր զգում, քանի որ այդ գրքերով անշափ ուրախություն էր պատճառել իր ընկերներին⁶²։

⁶¹ Տե՛ս «Հայրենիք», 1927, № 11 (59)։

⁶² Տե՛ս «Հայրենիք», 1925, № 4 (28)։

Հ. ՍԵՆԿԵՎԻՉԻ «ԵՌԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ՄՈՒՐԱՑԱՆԻ «ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻՆ»

Տարբեր ազգերի գրականությունների համեմատական ուսումնասիրությունները, ինչպես նաև որոշակի ժանրի պատկանող առանձին ստեղծագործությունների համեմատական վերլուծությունները նպատակահարմար և նույնիսկ անհրաժեշտ են այն առումով, որ դրանք օգնում են վեր հանելու այդ գրականությունների ինքնատիպ գծերը և ուսումնասիրվող ստեղծագործությունների առանձնահատկությունները:

Եթե նկատի ունենանք, որ նման ուսումնասիրությունները ի հայտ են բերում նաև գրական երևույթների ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք, ինչ խոսք, պայմանավորված են լինում պատմական, քաղաքական ու տնտեսական նախադրյալների ընդհանրություններով ու տարբերություններով և դրա հետևանքով գրողների առջև ծառացած միևնույն խնդիրներով, ապա պարզ կդառնա, թե ինչ նպատակ ենք հետապնդում՝ ուսումնասիրելով հայ և լեհ ազգային պատմավիպի, մասնավորապես՝ Սենկևիչի «Եռերգության» և Մուրացանի «Գեորգ Մարզպետունու» տիպաբանական առանձնահատկությունները:

Իսկ ի՞նչն է թույլ տալիս խոսելու իրարից բավական հեռու գտնվող, տարբեր ազգերի պատկանող այդ գրողների ստեղծագործությունների տիպաբանության մասին: Ամենից առաջ Սենկևիչի «Եռերգությունը» և Մուրացանի «Գեորգ Մարզպետունին» մոտ են թեմատիկայով:

Երկու ստեղծագործություններում էլ գլխավորը՝ հայրենիքի ազատագրության, երկրի արտաքին նվաճողների դեմ

մշած պայքարի և ներքին երկպառակությունների պրոբլեմներն են: Իհարկե, այս գլխավոր պրոբլեմները չեն բացառում մի շարք այլ խնդիրների առկայությունը, նույնատիպ գաղափարների ներդրումը, որոնք նույնպես այս երկու ըստեղծագործությունները բավական մոտեցնում են իրար: Անշուշտ, մեր ուսումնասիրության շրջանակները կարող էինք լայնացնել՝ ընդգրկելով և Րաֆֆու «Սամվել» պատմավեպը, սակայն այդ դեպքում ստիպված կլինեինք բավական հեռանալ մեր որոշակի նպատակադրումից:

Ճիշտ է, Րաֆֆու պատմավեպը ևս գրված է նույն թեմատիկայով, սակայն սվյալ դեպքում, պետք է նկատի ունենալ վերոհիշյալ գրողների պատմահայեցության որոշակի տարբերությունները: Սենկևիչի և Մուրացանի պահպանողական աշխարհայացքը, անցյալը չքննադատելու նրանց միտումը, ինչպես նաև պատմավեպի ուժը, դրական՝ հայրենասեր հերոսներ կերտելու ու հայրենասիրության գաղափարը բարոյականի ջատագովությանը հանգեցնելու նրանց միատեսակ մոտեցումն է հիմք տալիս համեմատելու այդ երկու ստեղծագործությունները:

Սակայն, մինչ արծարծվելիք հարցերի հանգամանալից քննարկմանն անցնելը, հարկ ենք համարում համառոտ խոսել XIX դարի երկրորդ կեսի ժամանակաշրջանի հայ և լեհ գրականությունների զարգացման ընդհանուր կողմերի մոտին, քանի որ նշված երկու գրականությունների զարգացման ընդհանրություններն ու դրանցում ի հայտ եկած քաղաքական, գաղափարական իրար բավական մոտ գտնվող տենդենցները կարող են բանալի տալ ուսումնասիրվող ըստեղծագործությունների տիպաբանական ընդհանրությունների բացահայտմանը:

XIX դարի 70-90-ական թվականներին հայ և լեհ գրականությունների զարգացումը հատկանշվում էր ռոմանտիզմից ռեալիզմին անցնելու տեղաշարժերով: Ռեալիզմը բացահայտում էր գեղարվեստական իր հնարավորությունները, ասպարեզ տալով սոցիալ-կենցաղային ու հոգեբանական այնպիսի վերլուծությունների, ինչպիսիք են Սենկևիչի, Պրուսի, Օժեշկովայի, Պոռչյանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի,

Զոհրապի ստեղծագործությունները: Այդ շրջանում, հայ և լեհ գրողներն ու քննադատները ուսումնասիրում և խորացնում են վեպի ժանրի հետ կապված հարցերը, և իհարկե, օգտագործում արևմտաեվրոպական ու ռուսական գրողների, հատկապես՝ Բալզակի, Դիկկենսի, Պուշկինի, Գոգոլի, Դոստոևսկու գրական փորձը: Այն խնդիրները, որոնք կանգնած էին լեհ գրականության և զեղագիտական մտքի զարգացման առջև, ընդհանուր շատ բան ունեին հայ մշակույթի հետ: Բավական է նշել, որ այդ շրջանում հայ և լեհ գրականության համար սոցիալական կոնցեպցիայի վեպն էր առաջատար ժանրը, որը և գտնվում էր ինչպես լեհ, այնպես էլ հայ քննադատության ու շարժման կենտրոնում:

Եվ մինչ քննադատական ռեալիզմը կհաստատվեր ու կխորանար, լեհ գրականությունը ունենում է այնպիսի առանձնահատկություն, որի մի շարք գծերը բնորոշ էին և հայ գրականությանը: Խոսքը վերաբերում է 60—70-ական թվականներին առաջ քաշած «վարչական պոզիտիվիզմին»:

Երիտասարդ պոզիտիվիստները, սլաժբարեկով ռոմանտիզմի էպիգոնների դեմ, առաջ են քաշում նոր գրականություն ստեղծելու ծրագիրը, որը միայն ըստ նրանց կարող էր ժամանակակից հասարակության պահանջները բավարարել: Հատկապես է. Օժեշկովան, իսկ ավելի ուշ՝ Ա. Սվենտիսովսկին, Պ. Խմելյովսկին իրենց ելույթներում, քննադատելով ռոմանտիկական բուռն ֆանտազիայի նկատմամբ ունեցած պաշտամունքը, առաջադրում են «թեղերով գրված ժամանակակից վեպերի ստեղծման» պահանջը¹:

Նման վեպերի ստեղծման անհրաժեշտության մասին էին խոսում նաև հայ արվեստագետները: Նար-Դոսն, օրինակ, գտնում էր, որ տվյալ ժամանակաշրջանում «Հայ վիպասանությունը պետք է տենդենցիոզ լինի, հայ վիպասանը պետք է իդեալներ տա, որովհետև քաղաքական և սոցիալական հայտնի անբարեբաստիկ սլայմանների մեջ հոգին ու զգացմունքը բրտացած հայր, ավելի քան մի ուրիշ ազգի մարդ, կարող է իդեալների՝ որոշ մտքով առած»²:

¹ Słowo „Historia polskiej literatury“, t. 1, M., 1958, str. 468.

² ԳԱԹ, Յու. Վեսելովսկու ֆոնդ, № 342:

Բաֆֆին ոչ միայն հակված էր նման վեպեր ստեղծելու գաղափարը պաշտպանելուն, այլև առաջինը ինքն էր ըստեղծում այդպիսի վեպեր: Մուրացանի «Թեղերով գրված», այսինքն՝ ծրագրային գործերից հայտնի է «Խորհրդավոր միանձնուհին»:

Սակայն 80-ական թվականներին, երբ քննադատական ռեալիզմը խորանում է, լեհ պոլիտիվիստները ստիպված են լինում վերանայելու «Թեղերով վեպ» ստեղծելու իրենց տեսությունը: Դեռևս 1879 թ. Օժեշկովան հանդես է գալիս նոր հոգվածով՝ «Խ. Թ. Եժի վեպերի և ընդհանրապես վեպի մասին», որտեղ զարգացնում է այն միտքը, թե «ռեալիստական գործում գաղափարը պետք է ցուցադրվի ոչ թե մերկապարանոց, այլ օրգանապես միահյուսվի գեղարվեստական կառուցվածքին ու բխի նրանից»³: Պոլիտիվիստները, խոսելով պատմավեպի ժանրի մասին, այն համարում էին միանգամայն ավելորդ՝ տվյալ ժամանակաշրջանի հասարակության համար և գտնում, որ պատմավեպը չի կարող լուսաբանել ժամանակակից պրոբլեմներ: Բանավեճերը սուր բնույթ են ընդունում հատկապես այն ժամանակ, երբ լույս է տեսնում Սենկևիչի «Հրով և սրով» վեպը, որի գաղափարական-գեղարվեստական փայլուն վերլուծությամբ հանդես է գալիս Բ. Պրուսը և քննադատում ոչ թե պատմավեպի ժանրն ընդհանրապես, ինչպես վարվում էին ժամանակի շատ քննադատներ, այլ՝ ֆեոդալական ոնցյալը, լեհական շլյախտային իդեալականացնելու Սենկևիչի միտումը:

Հայ քննադատությունյան մեջ ռեալիզմի հարցերի մասին սուր բանավեճեր զնում են 80—90-ական թվականներին: Ռեալիստական արվեստի ջատագովներից շատերը, հատկապես Շիրվանդադեն, Զոհրապը իրենց հոգվածներում, անդրադառնալով այդ հարցին, հնացած էին համարում կյանքը վերափոխելու ոռմանտիկական արվեստի առաջադրած ձևերը, «կեղծ ռեալիզմի» սահմանափակ սկզբունքները, և

³ E. Orzeszkowa, O powieściach T. T. Jeża z rzutem oka na powieść w ogóle, Polska krytyka literacka, oprac. J. Kulczycka Saloni i st. Frybes, t. 3. Warszawa, 1959, s. 120.

ձգտում հաստատել նորը՝ քննադատական ուսուցիչներ, որն իր ներքին հարուստ հնարավորություններով ժամանակի միակ ճիշտ ուղղությունը կարող էր լինել:

Ուշագրավ է, որ ուսուցիչական արվեստին անցնելու ճանապարհին, դեռևս չկարողանալով հաղթահարել ուսման տիպի և տեղեկացիող դրականության հետ կապված խոշոր-դոտները, և՛ հայ, և՛ լեհ քննադատությունը դիմում է ֆրանսիական դրականության, հատկապես Զոլայի փորձին: Ինչպես Սենկևիչը, այնպես էլ Շիրվանզադեն, իրենց հոգվածներում քննադատում են այն արվեստագետներին, որոնք նատուրալիզմը նույնացնում էին ուսուցիչին:

Հետագայում ակնհայտ է դառնում, որ Սենկևիչը մտադիր չէ ընթանալու ոչ նորահայտ նատուրալիզմի ճանապարհով, և ոչ էլ՝ շարունակելու ուսուցիչի բռնած իր ուղին: Նա որոնում է նոր ճանապարհ և այնպիսի ուղղություն ու ժանր, որոնք համապատասխանեն սեփական հայացքների դրսևորմանը:

90-ական թվականներին հայ խոշոր գրողները ընթանում են քննադատական ուսուցիչի ճանապարհով, բացառությու-ն է կազմում Մուրացանը, որը Սենկևիչի նման՝ բուռն հայրենասիրությունը արտահայտելու միակ միջոցը տեսնում է լայն ուղուց արդեն դուրս եկած ուսման տիպի մեջ:

Սոցիալ-քաղաքական մի շարք նախադրյալների նմանության հետևանքով, հայ և լեհ գրականությունները իրենց զարգացման պրոցեսում ծնում են գրական այնպիսի ընդհանուր երևույթներ, որոնք այդ երկու ազգերի առանձին, տարբեր ստեղծագործություններում երևան են գալիս իբրև երկվորյակներ: Այստեղ շեշտը ուղում ենք դնել այդ երկու գրականություններին յուրահատուկ մի ընդհանրության վրա, որը ամենակարևոր նախադրյալներից էր Սենկևիչի ու Մուրացանի պատմավիպերի համար:

Եթե նկատի ունենանք, որ լեհ ժողովուրդի մեջ 1863 թ. ապստամբության պարտությունից հետո մի բանի տասնամյակ նկատվում էին հուսալքման տրամադրություններ, իսկ հայ ժողովուրդին նույն իրավիճակի մեջ էին դրել 1862 թ. Զեյթունի ապստամբության պարտությունն ու 1895—96 թթ.

թուրքական կառավարության կազմակերպած հայկական ջարդերը, ապա պարզ կդառնա, որ երկու ժողովուրդների նմանատիպ վիճակն է պատճառ դառնում, որ այդ երկրներում ծնունդ առնի «ազգային պեսիմիզմը» կամքի դիմադրողականությունը հաղթահարելու մտայնությունը:

Այս պարագայում մի կողմից ուսանելի են ներկայանում պատմության դասերը, մյուս կողմից՝ հայրենասիրական այն տրամադրությունները, որ ժամանակին առաջադրում էին ուսմանտիկական դպրոցի գրողները: Տեղի է ունենում ուսմանտիզմի մի ուրույն նորոգություն (ձև տալով գրական այդ ուղղությանը), որ կարելի է անվանել ուշ ուսմանտիզմ:

Ազգային-ազատագրության թեման, որ երկու երկրների համար էլ ժամանակակից էր ու հրատապ, XIX դարի հայ և լեհ գրողների մոտ իր արտահայտությունն է գտնում և՛ ժամանակակից, և՛ պատմական թեմայով գրված ստեղծագործություններում:

* * *

Հետաքրքրությունը դեպի պատմական անցյալը մեծ է եղել XIX դարի աշխարհի շատ գրողների մոտ, որոնք ձգտել են իրենց պատմական վեպերում արժարժված գաղափարներով հնարավորին չափ արձագանքել ժամանակի ամենահուզող հարցերին: Դեռևս XIX դարի սկզբին, ժամանակակից պատմավեպի հայր Վալտեր Սկոտը Անգլիայի և Շոտլանդիայի քաղաքական ու սոցիալական սուր հարցերը շոշափում է իր պատմավեպերում, նա է, որ՝ ինչպես Բելինսկին է ասում, «պատմական ուղղություն է տալիս XIX դարի եվրոպական արվեստին»⁴:

Տարբեր դարաշրջաններից վերցված, տարբեր գրականությունների պատկանող համարյա բոլոր պատմավեպերն էլ գրվել են այնպիսի ժամանակաշրջանում, երբ գրողները պետք է արձագանքեին ու պատասխան տալին ժամանակի հուզող ու հրատապ հարցերին: Իդուր չէ Բելինսկին գրել. «XIX դարի արվեստին տալ պատմական ուղղություն,

⁴ В. Г. Белинский, Полн. собр. соч., т. 6, М., 1955, стр. 278.

նշանակում է տաղանդավոր կերպով հասկանալ ժամանակակից կյանքի գաղտնիքը»⁵։ Իրականության նկատմամբ խորին զժգոհություն արտահայտելու լավագույն միջոցներից մեկը պատմական թեմային դիմելն էր, որը ծանոթացնելով պատմական անցյալի նույնանման իրադարձություններին, հայրենիքի ազատության համար մարտնչող հերոսական կերպարներին, դրանով իսկ սթափեցնում, ոգեշնչում, պայքարի էր կոչում տվյալ ժամանակի հասարակությանը։

Պատմական անցյալը իր փառավոր էջերով գրավել է և ժամանակի հայ գրողներին։ Անցյալի վերապատկերմամբ հայ գրողները կարողանում էին բորբոքել հայ ժողովրդի ազատագրական տրամադրությունները։ Դեռևս Աբովյանը իր «Վերք Հայաստանի» պատմավեպում գովերգելով աղղի վաժակների քաջությունն ու հայրենասիրությունը, հայ հասարակությանը քաջալերելու, սրտապնդելու նպատակ էր հետապնդում։ Բնորոշ է, որ անցյալ դարավերջի երկու տասնամյակում Բաֆֆին ու Մուրացանը, իրենց հայացքը հանելով անցյալին, դարերի խորքից վեր են հանում նախնիների հերոսական կյանքի փայլուն էջերը։

Բաֆֆին, որ հայ պատմավեպի խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է, ստեղծելով «Դավիթ-Բեկ», «Պարույր Հայկազն» և «Սամվել» պատմավեպերը, ջատագովելով հայրենասիրության գաղափարներ, աշխատում է բորբոքել հայ ազատագրական միտքը և ձգտում՝ հավատ ներշնչել ժողովրդի կենսունակ ուժերի նկատմամբ։ Սենկևիչի նման «Սամվելի» հեղինակը ևս գտնում էր, որ ներկա ծանր պայմաններում անցյալը միայն կարող է քաջալերել ու խրախուսել ժամանակակից մարդուն, որ ժողովուրդը այնտեղ միայն կարող է տեսնել «յուր նախնյաց մեծագործությունները» ու «հետևել նրանց առաքինություններին», տեսնելով «նրանց մոլորությունները, հեռու պահել իրեն նրանց կատարած սխալներից»⁶։

Սենկևիչը, որ մինչև վերջին ժամանակաշրջանի դեպքե-

⁵ В. Г. Белинский, Полн. собр. соч., т. 2, М., 1953, стр. 354.

⁶ Տե՛ս Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1963, էջ 81։

րի հասունացումը, հոռետեսորեն էր նայում կյանքին, վերանայելով իր բռնած դիրքը, այն տեսակետն է առաջ քաշում, որ ազգային հալածանքի ուժեղացման պայմաններում անհրաժեշտ է ամեն զնով պահպանել պատմական լավատեսությունը: Այս միտքն էլ մղում է Սենկևիչին, լեհ գրականության մեջ հղած ավանդույթի համաձայն (պատմական անցյալին էին դիմել Նեմցևիչը, Կրաշևսկին, Սլովացկին, Միցկևիչը), հայացքն ուղղել դեպի Լեհաստանի անկախ պետականության ժամանակները: Մասնակցելով պատմավեպի ժանրի վերը նշված բանավեճին, Սենկևիչը այն տեսակետն է հայտնում, որ «պատմավեպը մյուս ժանրերի նման ես, հնթարկվում է արվեստի ընդհանուր օրենքներին, և որ այն նույնքան լավ կարող է օգտակար լինել ու ծառայել իրականությանը ճանաչելուն, որքան ժամանակակից թեմայով գրված ստեղծագործությունները»⁷:

Դիմելով պատմական անցյալին, լեհ պատմավիպասանը նրա լուսավոր էջերը հակադրում է ժամանակակից կյանքին, որտեղ մի կողմից հրեում է նրա քննադատական վերաբերմունքը դեպի բուրժուական հասարակարգը, մյուս կողմից՝ ժամանակակիցներին ոգևորելու, սրտապնդելու մեծ ցանկությունը: Դեռևս «Հրով և սրով» վեպի կապակցությամբ քննադատ Ս. Տարնովսկուն գրած նամակում Սենկևիչը խոստովանում է, որ «ժամանակակից թզուկ հերոսները ձանձրացրել են իրեն, իրենց ամենօրյա հառաչանքներով», այդ պատճառով էլ ներկայում չգտնելով ասպարեզի իդեալներ, հեղինակը դիմում է անցյալին, որտեղ «կատարվում են խոշոր իրադարձություններ, հանդես են գալիս մեծ մարդիկ: Որտեղ կա ինչով և ինչում ոգեշնչվելու հնարավորություն. ուժեղ քնամոլություններ, մեծ հանցագործություններ և մեծ ինքնազոհություններ»⁸: Այսպես հրեան է գալիս «Նահրգությունը»՝ «Հրով և սրով», «Ջրհեղեղ», «Պանվոլոդրյովսկի» պատմավեպերը, որոնցում նկարագրված պա-

⁷ *Տե՛ս* „История польской литературы“, стр. 469.

⁸ *H. Sienkiewicz, Dzieła, t. L., Warszawa, 1950, s. 4.*

տերազմների ժամանակաշրջանը վաղուց էր հրապուրում հեղինակին:

Այն մասին, որ Սենկևիչն իր այդ պատմավեպերի շարքը գրել է լեհ ժողովրդի «ոգու ամրադնդման» համար, իմանում ենք «Պան Վոլոդյովրդի «Վերջաբանի հավելագրի հետևյալ տողերից. «Սրանով վերջանում է գրքերի այն շարքը, որոնք, ոչ քիչ աշխատանք թափելով, գրել եմ մի քանի տարիների ընթացքում՝ ոգու ամրապնդման համար»⁹:

«Գևորգ Մարգարիտունի» պատմավեպը ստեղծելիս նույնպիսի նպատակ է հետապնդել Մուրացանը: Դեռևս պատանեկան տարիներին գրված նրա բանաստեղծությունները, փոքր «վիպասանական» գործերը հեղինակի առաջին փորձերն էին անցյալի դուցազնական կյանքը վերակենդանացնելու գործում: «Ռուզան», «Անդրեաս երեց», «Գևորգ Մարգարիտունի» ստեղծագործություններում Մուրացանը ձգտում է արթնացնել քաղաքական ինքնուրույնությունից զուրկ իր ժողովրդի հայրենասիրական ղգացումները՝ ազգային ինքնություն ձեռք բերելու և պահպանելու համար:

Մուրացանի համար մեծ կարևորություն է ունեցել այն հարցը, թե ժամանակակից հայ հեղինակը «ի՞նչ նպատակ ու ձգտումներ» պետք է ունենար, «ի՞նչ ոգով» պետք է վեպեր ու վրուցներ գրեր իր ժողովրդի համար, որը դարեր շարունակ մաքառում էր դաժան ճակատագրի դեմ: «Զէ՞ որ,— գրում է պատմավիպասանը,— մենք բախտավոր ազգերի թվին չենք պատկանում և բացառիկ բախտի ու պայմանների մեջ չինելով՝ բացառիկ էլ նպատակ ու ձգտումներ պիտի ունենանք...»¹⁰: Իսկ այդպիսի բացառիկ նպատակը Մուրացանի համար անցյալի փառավոր էջերի վերհանումն էր, որոնք միայն, ինչպես գրում է նա, «կսովորեցնեին մեզ դեռ ձգել մեղանից հուսահատությունը և շարունակ մեր անշարժությունը դատապարտող հռետեսությունը և խրախուսվիլ լավագույն մարդկանց փառավոր օրինակներով...»¹¹:

⁹ H. Sienkiewicz, Pan Wołodyjowski, Warszawa, 1969, s. 546.

¹⁰ Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1965, էջ 142:

¹¹ Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1963, էջ 23:

Պատահական չէ, որ ազգային գրականության առջև դրված այդ պրոբլեմներին նույնպիսի հայեցակետով էր մոտենում Սենկևիչը: «Մենք,—գրում է նա,—այլ պայմանների մեջ ենք: Մենք պետք է վեր բարձրանանք և ոչ թե վար իջնենք: Մեր ճանապարհը այլ է, ավելի կարևոր և ավելի խիստ, իսկ դա նշանակում է, որ մեր վեպի առջև այլ խնդիրներ են դրվում...»¹²:

Սենկևիչի մոտ ումանտիկական տարրը ի հայտ է եկել միմիայն պատմական գործերում: Եթե նովելներում ու ժամանակակից վեպերում «Երեքդուսյան» հեղինակը հրապարակ է գալիս որպես ռեալիստ գրող, մերկացնելով ժամանակի բուրժուական հասարակության արատները, ապա այս պատմավեպերում՝ պատմական դեպքերն ու դեմքերը ներկայացնելով ումանտիկ լույսի տակ, հետապնդում է ժամանակակից կյանքի ունշությունը ցույց տալու նույն նպատակը:

«Գեորգ Մարդպիտունու» հեղինակը ումանտիկ էր թե՛ ժամանակակից կյանքը և թե՛ պատմական անցյալը պատկերող իր բոլոր ստեղծագործություններում: Հայկական ուշ ումանտիզմի խոշոր գեղագետը լինելով, Մուրացանը ամենուրեք հավատարիմ է մնում գրական այն նախասիրությանը, որով սկսել էր:

Հարկ է նշել, որ իրենց պատմավեպերում թե՛ Սենկևիչը և թե՛ Մուրացանը հետևել են Վալտեր Սկոտի՝ պատմավեպի ումանտիկական ավանդույթներին, թեև նրանցից յուրաքանչյուրը կարողացել է յուրովի հետևել նրան, շատ բանով ստեղծագործաբար՝ նոր ձևով, գեղարվեստական նոր ուժով դարգացնել նրա տրագիցիաները: Հետաքրքիր է այն փաստը, որ այն խնդիրներում, ուր հայ և լեհ պատմավեպասանները հեռանում են Վալտեր Սկոտից, ավելի քան գտնում են նմանության եզրեր:

Իհարկե, չպետք է անտեսել, որ ամեն մի պատմավեպասան, ստեղծագործելով XIX դարում, նախ՝ ամուր կապված է եղել ազգային գրականության ավանդույթներին, և

¹² H. Sienkiewicz, Dzieła, wydanie zbiorowe pod red. J. Krzyżanowskiego, t. XLV, Warszawa, 1951, s. 100—101.

ապա՝ առավել կամ պակաս շափով ազդվել շոտլանդացի գրողից և համաշխարհային մյուս գրողներից: Եթե Մուրացանը իր պատմավեպերը ստեղծելիս հենվել է նախորդների՝ Աբովյանի, Ծերենցի, Բաֆֆու գրական փորձի վրա, ապա Սենկևիչը յուրացրել է լեհ պատմավիպասանների Յու. Նեմցիվիչի, Ֆ. Բերնատովիչի, Հ. Փեվուսկու, Զ. Կաչկովսկու, Ի. Կրաշևսկու հարուստ ավանդները:

Սենկևիչը, որ քաջատեղյակ էր Տոլստոյի ստեղծագործությանը և բարձր էր գնահատում այն, գիտակցաբար հրաժարվում է նրա ռեալիստական մեթոդից, և մի կողմից հետևում Սկոտի ու Դյումայի պատմավեպերի ռոմանտիկական մեթոդին, իսկ մյուս կողմից՝ ամուր հենվում ազգային ինքնագիտակցությունը պայմանավորող լեհական պատմավեպի ավանդույթների վրա: Եվ եթե նկատենք, որ Սենկևիչի ու Տոլստոյի հեղինակային մտահղացման ու գեղարվեստական մեթոդի առանձնահատկությունները տարբեր էին, ապա կտեսնենք, որ բացառիկ, հերոսական կերպարների պոետականացման իր գաղափարով «Եռերգություն» հեղինակը ավելի մոտ էր գտնվում արևմտեվրոպական վիպասաններին, քան Տոլստոյին: Այս առումով, Սենկևիչի հեռանորդ՝ Մ. Փերոմսկու «Մոխրի» գեղարվեստական մեթոդը և պատմության ընթացքի փիլիսոփայական մեկնաբանությունն է մոտ Տոլստոյին, որը և բացատրվում է ազգի ինքնագիտակցության դալու պրոցեսի նկարագրությունը տալու՝ երկու գրողների նույն ձգտմամբ¹³:

Գրող Բ. Պարնիցկին, խոսելով Տոլստոյի, Սենկևիչի և Ալդանովի պատմավեպերի մասին, ճիշտ է նկատում, որ «նրանցից յուրաքանչյուրի հետաքրքրությունների շրջանակները նեղանում են որոշակի հաջորդականությամբ: Տոլստոյին հետաքրքրում է ամբողջ մարդկությունը և նրա խաղացած դերը մարդկության պատմության մեջ, Սենկևիչին գրել-խափորապես հետաքրքրում է իր ժողովրդի («Եռերգությունում» — Բ. Բ.) կամ էլ որոշակի հասարակության, կրոնի («Յո

¹³ Sł' u Bazylu Białkożowicz, Z dziejów wzajemnych polsko-rosyjskich związków literackich w XIX w., Warszawa, 1971, s. 175.

երթասում»—Բ. Բ.) ճակատագիրը, այն էլ ոչ թե ամբողջ պատմության ընթացքում, այլ որևէ կոնկրետ ժամանակահատվածում, իսկ Ալգանովը զբաղվում է առանձին մարդկանց ճակատագրի խնդրի լուծմամբ»¹⁴։

Սկստել, որն իր ստեղծած քսաներեք պատմավեպերից յուրաքանչյուրում վերակենդանացնում է Շոտլանդիայի կամ մեկ այլ ժողովրդի որևէ ժամանակահատվածի պատմությունը, դրամատիկ իրադարձությունները, հերոսական դրվագները, ժամանակաշրջանին բնորոշ բարքերը, մտածողությունը և այդ ամենին տալիս սոցիալ-քաղաքական վերլուծություն, չէր կարող թեկուզև որոշակի սահմաններում չազդել Սենկևիչի վրա։ Եվ այնուհանդերձ, պատմավեպասաններից ամենամեծ ազդեցությունը Սենկևիչի վրա թողնում է Ալ. Դյուման (թեև նա ջատագովում է ընկերասիրության դադափարը, իսկ Սենկևիչը՝ հայրենասիրության), մասամբ՝ Հյուգոն, Պուշկինը և այլ գրողներ։

Եվ շնայած Սկոտլե համեմատաբար քիչ է ազդել Սենկևիչի վրա, այնուամենայնիվ, լեհ և շոտլանդացի պատմավեպասանների մոտ ոչ քիչ նմանությունների կարելի է հանդիպել։ Պրոֆ. Յու. Կթիժանովսկին նույնիսկ գտնում է, որ վալտերսկոտիզմը հիմնականում Սենկևիչի միջոցով է մուտք գործել լեհ գրականություն¹⁵։ Ամենահիմնական հարցերում, սակայն, Սենկևիչը հեռացել է Սկոտից. հասարակ ժողովրդի կյանքի պատկերումը, որ Սկոտի պատմավեպերին բերում է բացարձակապես նոր որակ (մի բան, որ ո՛չ կլասիցիստները, ո՛չ էլ ռոմանտիկները չէին պատկերել իրենց պատմավեպերում), չենք գտնում «Եռերգությունում»։ Լեհ պատմավեպասանի մոտ բացակայում է նաև դարաշրջանի սոցիալ-պատմական խորը վերլուծությունը, ինչպես նաև՝ պատմության փոփոխման անխուսափելիության փիլիսոփայական դադափարի ներգրումը։

Պատմության էջերը մասամբ՝ նույնպիսի հայեցակետով

¹⁴ „Myśl Narodowa“, 1930 № 18, s. 279.

¹⁵ Skł. J. Krzyżanowski, Z dziejów walterskołyzmu polskiego, „Przegląd współczesny“, t. XLV, 1933, № 130, s. 179.

է վերականգնացնում Մուրացանը: Հոմերոսի, Վերգիլիոսի, Միլտոնի, Ֆենելոնի, ինչպես նաև հայ հին մատենագիրներ՝ Խորենացու, Եղիշեի, Եղնիկի գործերը, որոնք երիտասարդ գրողի մոտ մեծ սեր են արթնացնում պատմութեան և հին վիպասանութեան նկատմամբ, և ինչպես ինքը՝ հեղինակն է խոստովանում, «մտածել են սովորեցնում իրեն»¹⁶, չէին կարող իրենց ազդեցութեան կնիքը չթողնել ձևավորվող պատմավիպասանի գեղագիտական մտքի ու ճաշակի վրա:

Սենկեիշի և Մուրացանի պատմավեպերի նմանությունը, անշուշտ, կապված չէ ազդեցութեան գործոնի հետ, այն կրում է զուտ տիպաբանական բնույթ, որը պայմանավորված է նկարագրվող ժամանակաշրջանների պատմական նույնանման իրադարձություններով, ինչպես նաև գրողների առջև դրված՝ վերը նշված խնդիրներով: Եթե լեհ պատմավիպասանի «Եռերգության» առաջին գիրքը ընդգրկում է 1647—1649 թթ. ուկրաինական ապստամբության դեմ ծավալվող պայքարի դեպքերը, «Ջրհեղեղը»՝ 1655—1656 թթ. շվեդների դեմ մղվող պատերազմի նկարագրությունը, իսկ «Պան Վոլոդըյովսկի» վեպում ավելի նեղ շրջանակներով ներկայացվում է թագավորի ընտրության հետ կապված դեպքերի պատմությունը, ապա Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպում արտացոլվում է X դարում արաբական լծի դեմ մղվող հայ ժողովրդի պայքարի պատմությունը:

Հարկ է նշել, որ հայ և լեհ պատմավիպասանները վերահիշյալ վեպերում իրենց հետաքրքրող դարաշրջանը վերապատկերելու համար ակտիվացնում են այն ամբողջ պատմական աղբյուրները, որոնք վերաբերում էին տվյալ դարաշրջաններին: Մուրացանը ուսումնասիրում է հայ պատմիչներ Հովհաննես Դրասխանակերացու, Թովմա Արծրունու, Ղևոնդ Երեցի աշխատությունները, ինչպես և վավերագրական այն աղբյուրները, որոնք վերաբերում են տվյալ դարաշրջանի անցքերին: Սենկեիշը լայնորեն օգտագործում է XVII դարի պատմական աղբյուրները, հենվում հատկապես լվովցի պատմիչ Կուբալի «Պատմական էսքիզների» վրա, օգտագործում

¹⁶ Տե՛ս Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 7, էջ 141:

նաև Պասեկի, Կոխովսկու, Տվարդովսկու դասական գործերը, արխիվային նյութեր, օրագրեր: Սակայն. պատմական աղբյուրների նկատմամբ և՛ Սենկևիչը, և՛ Մուրացանը հանդես են բերում ումանտիկներին հատուկ սուբյեկտիվ մոտեցում, այն առումով, որ տվյալ դարաշրջաններին վերաբերող փաստական նյութերի ընտրությունն ու դրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքը հարմարեցնում են իրենց մտահղացմանը:

Երկու պատմավիպասաններն էլ, թեև ստեղծագործությունների ֆոնը շատ լայն են վերցնում, այնուամենայնիվ, իրենց հետաքրքրությունների շրջանակները նեղացնում են: Թե՛ Սենկևիչը և թե՛ Մուրացանը վերցնելով աղգի կոնկրետ ճակատագիրը՝ ի տարբերություն Սկոտի, ոչ թե տալիս են դարաշրջանի սոցիալ-պատմական վերլուծությունը, այլ՝ ամենը հանգեցնում են բարոյական պատմափիլիսոփայության իրենց սկզբունքին:

Ա. Տերտերյանը նկատում է Սենկևիչի և Մուրացանի՝ այդ հարցում ունեցած նմանությունը: «Մուրացանի պատմավիպը,—գրում է նա,—հիմնականում դնացել է տրադիցիոն ուղով. այդտեղ առկա են սերը և պատերազմը, բայց բացակայում են աշխատանքը, ճորտատիրական պայմանների հիմնաշենքը, ֆեոդալիզմի ակնբախ բացասական կողմերը, ինչպես են տերերի դաժանությունը, խոշտանգումները և այլն: Մուրացանը, իբրև դեմոկրատ հեղինակ, հենց այդ բանում պիտի տարբերվեր այնպիսի 'պատմավիպասաններից, ինչպես են Լիստոնը, Սենկևիչը և այլոք, որոնց գործերում չկա ավատական շահագործման և ճնշման դեմ սոցիալական բողոք կամ անցյալի «վճռական պնահատություն», ինչպես կասեր Մաքսիմ Գորկին»¹⁷:

Տերտերյանը ճիշտ է նկատում սոցիալական հարցը շրջանցելու՝ Սենկևիչի ու Մուրացանի ունեցած ընդհանրությունը և այն, որ թեև հայ պատմավիպասանը խոսում և իր հերոսներին գործել է տալիս ժողովրդի անունից, հանդես է գալիս որպես ժողովրդի շահերի պաշտպան, այնու-

¹⁷ Ա. Տերտերյան, Մուրացան, Երևան, 1971, էջ 249:

հանդերձ, Սենկևիչի նման խուսափում է դարաշրջանի օբյեկտիվ վերլուծությունը տալուց:

Քիչ տեղ տալով սոցիալական արատների քննադատությանը, Սենկևիչն ու Մուրացանը գլխավորը համարում էին հասարակության բարոյական առողջացման խնդիրները, որոնց իրագործման հետ էլ կապում էին ազգի անկախության ձեռք բերումը: Եվ որովհետև, միայն հայրենասիրության գաղափարը կարող էր համախմբել հասարակության բոլոր անդամներին, անկախ նրանց սոցիալական դրությունից, ապա իրենց պատմավիպերի հիմքում դնում են հայրենասիրության ջատագովումը: Նրանց մանր-բուրժուական աշխարհայացքն էր, որ թելադրում էր սոցիալական տարբեր խավերի միավորման գաղափարը՝ հանուն ազգային ընդհանուր նպատակի:

Անցյալը վերապատկերելու ուժանտիկական մեթոդը հնարավորություն է տալիս տեսադաշտից հեռու պահել կոնկրետ երևույթների այնպիսի պատճառներ, որոնցից հեղինակներն իրենք են աշխատում հեռու մնալ: Ժամանակաշրջանը ցանկացած կողմից ճանաչել տալը պայմանավորված է լինում հեղինակի միտումով: Մուրացանի ու Սենկևիչի համար, որոնք ձգտում էին համոզել իրենց հայրենակիցներին, թե արտաքին ճնշողների դեմ պայքարելիս հարկավոր է ձեռք բերել ազգային միասնություն, առաջնային է դառնում հերոսների, ասպետների, պատերազմների պատմությունը:

Սենկևիչի մոտ, ի տարբերություն Ոկոտի, բացակայում է նաև հինը քննադատելու և նորը, առաջադիմականը ողջունելու տենդենցը: Սակայն այդ չպետք է բացարձակ հասկանալ, որովհետև «Եռերգությունում» լեհ պատմավիպասանը և՛ քննադատում է շլյախտային, և՛ հանդես բերում առաջադիմական տենդենց՝ դրվատելով կենտրոնաձիգ պետականության կողմնակից փշխաններին: Դա հատկապես ակնառու է «Ջրհեղեղում», որտեղ Սենկևիչը ավելի ճշմարտացի է վերապատկերում դարաշրջանը, ցույց տալիս Ռեչ-Պոսպոլիտայի և՛ ջատագովներին, և՛ դավաճաններին: Վեջիններս խոշոր ֆեոդալներն ու նրանց հոտից զինացող շլյախ-

տան էր: Քննադատության սահմանները լայնացնելով, Սեն-կեիշը դրանով իսկ, իհարկե մասամբ, նեղացնում է շլյախ-տայի իդեալականացումը, որը շատ բացարձակ էր «Հրով և սրով» վեպում:

Սկոտը (ինչպես և Սենկեիշն ու Մուրացանը), թեև մարդկանց և հասարակության դնահատման չափանիշը որոնում է բարոյականի մեջ, որն ի միջի այլոց, գործուն է բոլոր ժամանակների համար, այնուհանդերձ, օբյեկտիվորեն, արդի հայացքով է մոտենում նկարագրվող ժամանակաշրջանին, քննադատում է ոչ միայն անդլիական կառավարության քաղաքականությունը, սոցիալական արատները, այլև անհրաժեշտորեն նայում ֆեոդալիզմի պատմականորեն անխուսափելի կործանմանը: Անցյալն ու նրա հերոսներին փառաբանելու հետ միաժամանակ Սկոտը քննադատում է ֆեոդալական կարգերն ու նրա ներկայացուցիչներին: Բելինսկին իր «Ռուս գրականությունը 1843 թ.» հոդվածում շատ դիպուկ է նկատում, որ անդլիացի արխատուհանները, որոնք համարվում էին միջնադարի ասպետների հետնորդները, հիացմունքով են կարգում Սկոտի պատմավիպերը, փոխանակ ատելով՝ հպարտանում են նրանցով, թեև հենց այդ պատմավիպերում են արատավորված իրենց նախնիների պատիվը¹⁸:

Սակայն, շոտլանդացի պատմավիպասանի մոտ պահպանողական ու առաջադիմ ուժերի պայքարում հաղթում է ոչ թե դեմոկրատականը, կամ էլ պահպանողականը, այլ՝ «ոսկե միջինը»: Եվ քանի որ նա կողմնակից էր դանդաղ առաջադիմությանը, ապա նրա մոտ վառ անհատականությունները միշտ հաղթվում են, իսկ հաղթողները ոչ թե դեմոկրատիզմի կողմնակիցներն են, այլ այն պրոգրեսի, որն (ըստ Սկոտի)՝ ինքն իրեն պետք է առաջ ընթանար ու ինքնաբերաբար հաղթանակ նվաճեր:

Սենկեիշի մոտ հինը դատապարտելու և առաջադիմականը ողջունելու տենդենցներն ընդհանրապես թույլ կերպով են կրկան զալիս և դա բացատրվում է նրա պահպանո-

¹⁸ См. у В. Г. Белинского, Полн. собр. соч., т. 10, М., 1959, стр. 242

դական աշխարհայացքով: Բայց Սկոտը, պահպանողական լինելով հանդերձ, դեմ է դնում ժամանակի պատմագիտությանը, որը բոլորովին հակված չէր քննադատելու Անգլիայի պատմությունը:

Սենկեիչը նույնպես դեմ է դնում լեհական ժամանակակից պատմագիտությանը՝ հատկապես կրակովյան դրությունի պատմաբաններին, որոնք, սակայն, հակառակ անգլիացի գիտնականների, քննադատաբար էին մոտենում պատմությանը և պայքարում էին հայրենասիրական գաղափարներին նման ուղղություն տալու դեմ: Սենկեիչն իր հայրենակիցների հույսն ամրապնդելու համար նախնիների պատմությունը փառաբանում է ռոմանտիկական ոգով և հրաժարվում՝ անցյալը քննադատելուց: Նա դատապարտում է կրակովյան դպրոցի պատմաբաններին, որոնք, հանդիսանալով անցյալը իդեալականացնելու նախորդ՝ լեիվելյան դրությունի ռեակցիան, ընկնում էին, Սենկեիչի խոսքերով ասած՝ մյուս, ավելի վատ ծայրահեղության մեջ¹⁹: Նթե առաջինները Ռեչ-Պոսպոլիտայի թագավորության անկումը, որ ըսկըսվում է Բոգդան Խմելնիցկու ապստամբությունից հետո, բացատրում էին շլյախտայական ռեժիմի դեմոկրատացման արատավորությամբ, ապա Սենկեիչը և իր գաղափարակիցները, հանդես գալով «ֆեոդալական դեմոկրատիզմի» պաշտպանությամբ, նույնի պատճառը տեսնում էին շլյախտայական վերնախավի քաղաքական պասսիվության մեջ: Թեև Սենկեիչը քննադատում է Ռեչ-Պոսպոլիտայի կենտրոնացած իշխանության քաղաքականությունը, շլյախտայական վերնախավին, որը վտանգի պահին չի միանում զորավար Երեմիա Վիշնևեցկուն, այնուամենայնիվ, այդ ամենի պատասխանը ստանալու համար նա ոչ թե խորանում է դարի սոցիալ-պատմական վերլուծության մեջ, այլ իր գաղափարը հանգեցնում է բարոյական քարոզին: Իսկ դարաշրջանը միակողմանի պատկերելու, հայրենասիրական իդեալը միայն բարոյականի մեջ փնտրելու պատճառը հետևանք էր այն

¹⁹ *Տե՛ս* И. Горский, Исторический роман Сенкевича, М., 1966 стр. 85.

դասի (որի տեսակետն էր պաշտպանում հեղինակը) սահմանափակության, որը հասարակական կյանքում չէր կարող այլևս առաջադիմական դեր խաղալ: Սենկեիշը պաշտպանում էր այն տեսակետը, ըստ որի՝ պատմությունը ներկայացնելիս առաջնային պետք է լիներ բարոյականը, պետք է ցույց տրվեր հաղթանակի և ոչ թե անկման մոմենտները, փառաբանվեր հաղթանակը, և ոչ թե հաղթվածների պատմությունը: Ի դեպ, պատմության նման վերարտադրության համար նախադրյալ էր հանդիսանում նաև XVII դարի պատմական աղբյուրներին և պատմագիտական հարուստ նյութերին ժամանակակիցների կողմից տրվող հատուկ նշանակությունը, որը Սենկեիշի վրա ազդեցություն է ունենում հրկակի իմաստով. ազդում է փաստական նյութերի նբաբնությունը և իրադարձությունները լուսաբանելու նրա տենդենցի վրա²⁰:

Մուրացանի սուբյեկտիվ վերաբերմունքը դեպի պատմական անցյալը նույնպես պայմանավորված էր նրա ռոմանտիկական պատմափիլիսոփայությամբ: Ամուր հենվելով պատմական անցյալն իդեալականացնելու իր ռոմանտիկ պատրանքներին, իր համակրությունն արտահայտելով «Հին, բարի ժամանակների» նկատմամբ, Մուրացանը, ինչպես Ս. Սարինյանն է գրում, յուրովի է մոտենում պատմական դեպքերի ու իրողությունների փաստական համակարգին, պատմության փաստերը դասավորում է ավելի իր գեղագիտական սկզբունքների թելադրանքով, քան գաղափարական սկզբունքներ հաստատում նույն փաստերի օբյեկտիվ գիտական վերլուծությամբ²¹: Մուրացանի քննադատությունը X դարի պատմության վերաբերմամբ հանգում է իշխանության ներքին երկպառակությունների պատճառները բացահայտելուն, երկրին հասած չարիքը նախարարների անմիաբանության մեջ տեսնելուն, թեև հայ վիպասանի մոտ ևս նորից ի հայտ է գալիս սուբյեկտիվիզմը: Ճիշտ է, Մուրացանը պատմավեպի

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 83:

²¹ Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», հ. 4, Երևան, 1972, էջ 16:

Հիմքում դնում է կենտրոնաձիգ իշխանության դադափարը, որը դարաշրջանի համար առաջադիմական նշանակություն ուներ, Մարզպետունուն հանդես է բերում որպես առաջադեմ դադափարի կրողը, սակայն այդ հարցի լուծման համար ելակետ է ընդունում իր բարոյական պատմափիլիսոփայությունը:

Հայ պատմավիպասանը Աշոտ Երկաթի թագավորության մեջ տիրող երկպառակությունների, նախարարների անմիաբանության ու որպես կենտրոնախույս ուժեր հանդես գալու մեջ է տեսնում երկրին հասած շարիքի հիմքը, թեև չի խորանում այդ երևույթի ներքին պատճառների մեջ, այն չի ենթարկում սոցիալ-պատմական վերլուծության: Անտեսելով ֆեոդալական հարաբերություններից բխող գծությունների սոցիալական արմատները և զրա հետ միասին՝ նախարարների ֆեոդալական ձգտումները, հոգեբանությունը, Մուրացանը այդ երևույթը բացատրում է նրանց անձնական (բարոյականի վրա հիմնված) կոնֆլիկտներով:

* * *

Գեորգ Մարզպետունին, ինչպես նաև Երեմիա Վիշնեկցկին այդ երկու պատմավիպերում հանդես եկած միակ իշխաններն են (Ստեփան Չարնեցկուն՝ «Ջրհեղեղում», իսկ Յան Սոբեսկուն՝ «Պան Վոլոդըյովսկում» հեղինակն անհամեմատ պակաս է իդեալականացնում), որ մտածում են բոլոր նախարարներին միավորելու, թագավորությունը ամրապնդելու մասին: Այս հարցում, թերևս, Մարզպետունու և Վիշնեկցկու միջև հղած տարբերությունն այն է, որ երկուսն էլ թշնամու դեմ մղած պատերազմները թեև վարում են միայնակ, այնուամենայնիվ, Մարզպետունին դիմում է նախարարներին հաշտեցնելու գործնական քայլերի, մինչդեռ Վիշնեկցկին միայն գծգոհում է իշխանների անմիաբանությունից:

Եթե պատմականորեն նայենք այս զորավարներին, ապա կտեսնենք, որ նրանցից ոչ մեկն էլ իրականում այնպիսին չի եղել, ինչպիսին հեղինակներն են կերպավորել նրանց:

Պատմական Վիշնեկցկին ոչնչով չի տարբերվել ժամա-

նակի շլյախտիչ-մագնատներից, հղի է այնպիսին, ինչպիսիք էին Ռադձիվիլները, Պոսոցկիները, Լուբոմիրսկիները: Նա ոչ միայն չի հղի ժողովրդի շահերի պաշտպանը, այլև հակառակը՝ ժամանակի վերոհիշյալ իշխան-մագնատների նման ճնշել ու հարստահարել է նրան: Պատմական Մարզպետունու մասին հակված ենք նույնը մտածելու, քանի որ Դրասխանակերտցին նրա մասին ոչ մի տեղեկություն չի թողել, բացի այն փաստից, որ այդ իշխանը իր քսան զինվորներով հաղթել է թշնամուն:

Եվ, այնուամենայնիվ, վերաիմաստավորելով Վիշնևեցկու պատմական նշանակությունը, հեռանալով ռեալիստական ճշմարտացիությունից, Սենկևիչը իդեալականացնում է նրան, հայրենիքի փրկությունը կապում անհատ հերոսների, տվյալ դեպքում՝ Վիշնևեցկու հայրենասիրության հետ: Այս դադափարը ավելի համոզիչ դարձնելու համար հեղինակը պատմական խմելնիցկու կերպարը նույնպես վերաիմաստավորում է, սակայն պողիտիվ առումով: Բողոքան խմելնիցկին, որը պատմավեպում ներկայանում է ամենագորշ գույներով, Ուկրաինան խլելով Ռեչ-Պոսպոլիտայից հանձնում է Ղրիմի խան Թուհայ-Բեյին և դրանով իսկ ուկրաինական ժողովրդին մատնում թաթարների դաժան հաշվհարդարին, թուլացնում լեհ և ուկրաինացի «քրիստոնյա ժողովուրդների պայքարը այդ անհավատ թշնամու դեմ»:

Սենկևիչը, սակայն, դա անում է որոշ նպատակով. նախ՝ նման հակադրության միջոցով ավելի է ընդգծում Վիշնևեցկու հայրենասիրությունը, անձնուրացությունը հայրենիքին և ապա, ինչպես լեհ դրականագետ Շվեյկովսկին է նշում, այդ հարցը ամբողջապես կապում է ժամանակակից կյանքին: Վիշնևեցկու իդեալականացումը, ըստ դրականագետի կարծիքի, նշանակում էր՝ հավանություն տալ ժամանակի հայրենասիրական-ազատագրական պայքարին, իսկ խմելնիցկու դավաճանությունը Ռեչ-Պոսպոլիտայի նկատմամբ, նշանակում էր համաձայնողականություն ցարական ինքնակալության հետ²²:

²² Z. Szwejkowski, Trylogia Stenklewicz, Szkice, Poznań, 1961, s. 39.

Ինչպես տեսնում ենք, Սենկևիչի իդեալական հերոսը՝ Վիշնևեցկին «Հրով և սրով» վեպում ներկայացված է որպես համընդհանուր հակառակորդ։ Նա մեծ զորավար է, անձնվեր հայրենասեր, հավասարակշռված, մեծ կամքի տիր անձնավորություն, թեև զերծ չէ մարդկային թուլությունից։ Նրա միակ թուլությունը փառամոլությունն է, այն էլ ներկի, ոչ վտանգավոր։ Նա վիրավորվում է, երբ բարձրագույն հրամանատարություն են նշանակում ոչ ունակ մարդկանց, որոնց ինքը պետք է հնթարկվեր։

Իշխանը շատ լավ է ըմբռնում ժամանակակից Ռեչ-Պոսպոլիտայի իրադրությունը։ Տեսնելով, որ բոլոր իշխանները ետ են քաշվում և երկիրը թողնում անպաշտպան (թագավորը այդ իրադարձությունների ժամանակ մահանում է), իսկ կենտրոնաձիգ իշխանությունը փորձեր է անում խաղաղ ճանապարհով հաշտություն կնքել համընդհանուր հետ, Վիշնևեցկին դիտակցում է, որ միայն ինքը կարող է ադիտի առջև առնել Ս.Հ. թե իշխանը ինչու՞մ է տեսնում իդերկրին հասած դժբախտությունների պատճառը. «Ամենավատ թշնամին, դա դեռ համընդհանուր չէ,—ասում է նա,—այլ ներքին դժտություններն են, շլյախտայի կամայականությունը, զորքերի սակավությունն ու անկարգապահությունը, ամբարիշտ սեյմերը, անմիաբանությունը, անձնական հաշիվներն ու անհնազանդությունը, և նորից ու նորից անհնազանդությունը»²³։

Մարդպետունին, որ Մուրացանի գաղափարական իդեալի մարմնացումն է, պատմության մեջ նույնպես չի խաղացել այնպիսի դեր, ինչպիսին ներկայացված է պատմավեպում։ Օգտվելով Դրասխանակերտցու հակիրճ (քսանհինգ տողի սահմաններում) տեղեկությունից, Մուրացանը ռոմանտիկական երևակայության ուժով ստեղծում է իդեալական հերոսի այնպիսի մի կերպար, որին խորթ էին մարդկային ամեն մի թուլություն։ Նթե Սենկևիչը Վիշնևեցկուն օժտում է վերը նշված այդ մեկ ներքին թուլությամբ, ապա Մուրացանն իր

²³ Henryk Sienkiewicz, *Ogniem i mieczem*, t. 1, Warszawa, 1969, s. 410.

հերոսին պատկերում է որպես ամենակատարյալ անձնավորություն: Նա մեծ հայրենասեր է, խոշոր զորավար, անձնազոհ, նվիրված, շքնկեցի, ուժեղ կամքի տեր, առաքինի մարդ:

Սակայն պետական այդ մեծ գործչին Մուրացանը կտրել է X դարի ֆեոդալական ժամանակաշրջանը պայմանավորող հիմքից, դուրս բերելով նրան իր հայրենիքին ու թագավորին անշահախնդիր կերպով նվիրված մի անձ: Ժամանակին այս մասին ահա թե ինչ է գրել Ա. Տերտերյանը. «Գեորգ Մարզպետունու հայրենասիրությունը բավականաչափ անդրերկրային բնույթ ունի: Ասես թե մեջտեղ նա մի շահագրգռված անձ չէ, այլ զոհում է անձը հայրենիքին, որովհետև դա յուր պարտքն է. բայց ի՞նչ իրական և հարկադրական հիմքեր ունի այդ պարտքը: Մուրացանը պատասխանում է, թե նա թագավորի զորավարն է: Բայց դա դեռ քիչ է: Նախարարների մեջ պարտքի գիտակցությունը բխում է օրենքից, և որպեսզի այս իրական պարտավորության մեջ անձնազոհության հույզը ծագի, պիտի ունենա հոգեբանական շարժառիթներ: Հայաստանում ոչ մի իշխանություն չույլություն չունի. այդ իշխանությունը ստեղծում է Գեորգ Մարզպետունին և մատուցանում Աշոտ Նրկաթին: Սա մի շատ հազվագյուտ երևույթ է. և բավական չէ ասել, թե նա լավ մարդ էր, թե նա չէր կարող յուրացնել այդ իշխանությունը հօգուտ Մարզպետունյաց նախարարության, ինչպես ձգտում էին ուրիշ նախարարություններ: Ինչո՞ւ, ասի՞ր, ինչո՞ւ: Չկա պատճառաբանություն: Այսպիսով, մի ավելորդ անգամ ևս համոզվում ենք, որ Մուրացանի ստեղծագործությունը ինֆորմակ առանձնահատկություն ունի»²⁴ (ընդգծումը մերն է—Բ. Բ.):

Ա. Տերտերյանի այս տեսակետը վիճարկում է Վ. Պարտիզունին. «Այս առարկությունը,—գրում է նա,—բնգունելու դեպքում քիչ բան կմնա «Գեորգ Մարզպետունի» վկայից և Մարզպետունու կերպարից: Եթե Մարզպետունին էլ փորձեյ յուրացնել կենտրոնական իշխանությունը, այն ժամանակ

²⁴ Ա. Տերտերյան, նշվ. աշխ., էջ 99—100:

կղառնար մի Աշոտ Բռնավոր կամ կենտրոնախույս մյուս նախարարներից մեկը, և ոչ Մարզպետունի, որը պետութեան և հայրենիքի շահը վեր է դասում ամեն ինչից և պատրաստ է դրանց պաշտպանութեան համար մահ ընդունել»²⁵։ Նա գրանում է, որ հետևողական լինելու դեպքում, նույնը կարելի է առել ոչ միայն Մարզպետունու, այլև կենտրոնական իշխանութեանը հավատարիմ բոլոր նախարարների մասին։ «Եթե դրանցից մեկն ու մեկը,—ավելացնում է գրականագետը,— ձգտեր յուրացնել իշխանությունը, երկրում կենտրոնական իշխանությունը պետք է պաշտպաներ միայն թագավորը, որը առանց նախարարների ու նրանց զորքի, կպարտվեր։ Այդպիսի պայմաններում հաղթվողը միշտ կլիներ կենտրոնական իշխանությունը։ Բայց չէ՞ որ դա հակապատմական է, չէ՞ որ իսկապես կենտրոնաձիգ ուժի ներկայացուցիչը միայն թագավորը չի եղել։ Մուրացանը ճիշտ է հասկացել նկարագրված ժամանակաշրջանի այդ հիմնական հարցը»²⁶։

Իմ կարծիքով Պարտիզունին ճիշտ չի մեկնաբանել Տերտերյանին։ Վերջինս խոսում է ոչ թե այն մասին, թե Մուրացանը ինչու Մարզպետունուն չի պատկերել որպես կենտրոնախույս ուժերից մեկը, այլ գրում է, որ հերոսի անշահախնդիր լինելն ու հավատարմությունը պետք է ունենար «հոգեբանական շարժառիթներ», պետք է ունենար «պատճառաբանութուն»։ Տերտերյանը Մարզպետունու արարքը համարում է «հազվագյուտ երևույթ» և գրում, թե «բավական չէ ասել, թե լավ մարդ էր», պետք էր այն հիմնավորել հոգեբանորեն։ Եվ նույնիսկ այն միտքը, թե Մարզպետունին իշխանությունը չէր կարող իր օգտին ծառայեցնել, նա ասում է. «Ինչո՞ւ, ախր, ինչո՞ւ։ Չկա պատճառաբանութուն»։ Այստեղ խոսքը Մուրացանի կորմից երևույթը պատճառաբանելու մասին է։ Պարտիզունին չի խոսում այդ ամենին սոցիալ-պատմական պատճառաբանութուն տալու մասին, այդ ամենը այնպես, ինչպես տրված է Մուրացանի մոտ համարում է բնական։ Ավելին, նա չի ակնարկում, թե առկա է եղել նաև

²⁵ Վ. Պարտիզունի, Մուրացան, Երևան, 1956, էջ 329—330։

²⁶ Նույն տեղում։

բարոյական կատեգորիան, որն, ինչ խոսք, գործուն էր բոլոր ժամանակների մարդկանց համար: Այսինքն՝ եթե ղորավարն ասում էր «կհաղթեմ», ուրեմն պետք է հաղթեր, պարտավոր էր հաղթել թեկուզ այն բանի համար, որպեսզի բարձր պահեր ղորավարի իր պատիվը: Ի դեպ, Տերտերյանը հարցի այդ կողմը նույնպես անտեսում է. խոսելով նախարարների միայն իրավական պարտավորության մասին, շեշտը դնում է օրենքից բխող պարտքի գիտակցության վրա (որի համար, ըստ նրա՝ անհրաժեշտ էին միայն հոգեբանական շարժառիթներ), առանց հիշատակելու բարոյական կողմը: Եվ, այնուամենայնիվ, Տերտերյանը վերոհիշյալ հարցերը առաջ է քաշում միայն այն բանի համար, որպեսզի ցույց տա Մուրացանի ստեղծագործության ռոմանտիկական բնույթը: Նրա հլալեստը ճիշտ է, երբ գտնում է, թե՛ «Մարզպետունու հայրենասիրության անդրերկրային բնույթը» կապված էր Մուրացանի երկի «ինքնօրինակ առանձնահատկության» հետ, որը պայմանավորում էր նրա «զաղափարատիպերի» և ոչ թե «տիպերի» ստեղծումը: Այսինքն, Մուրացանի իդեալական հերոսների ստեղծման հարցը գրականագետը իրավամբ կապում է հեղինակի մտահղացման ու գեղարվեստական մեթոդի հետ:

Եթե այս երկու պատմավեպերի գլխավոր հերոսներին համադրենք, ապա կտեսնենք, որ շատ քիչ կողմերով են տարբերվում իրարից: Եվ դա զարմանալի չէ, քանի որ Մուրացանն ու Սենկևիչը այդ ռոմանտիկ կերպարներին հավասարապես օժտել են հայրենասեր հերոսի ամենաիդեալական հատկություններով: Վիշնևեցկին ու Մարզպետունին նման են իրար ոչ միայն այն բանով, որ երկուսն էլ որպես պետության ներկայացուցիչներ կոչվում էին կենտրոնաձիգ իշխանությանը, այլև նրանով, որ այդ մեծ ղորավարների միջոցով է լուծում ստանում երկրի ու ժողովրդի ճակատագրի հարցը:

Մուրացանն ու Սենկևիչը իրենց պատմավեպերում դնում են նաև այն զաղափարը, թե հայրենիքի ազատության համար թշնամիների դեմ կռվելը յուրաքանչյուրի սրբազան պարտքն է և որ այդ պարտքից ոչ ոք չպետք է խուսա տա:

Հերոս-զորավարների մոտ պարտքի դիտակցութիւնը միանըման մարմնավորում է ստանում: Անձնագոհութեան հասնող հայրենասիրութեան լավագույն ասպցոյցներից է զորքի ու ժողովրդի առջև նրանց տված հանդիսավոր երգումը: «Ես՝ Երեմիա Վիշնեցկիս, Մոլոռուսիայի վոյեվոդն ու Լուբլինի, Վիշնյովեցի իշխանը,—ասում է լեհ զորավարը,—Աստծո, Սուրբ Երրորդութեան և Մայր Աստվածածնի առջև երգւում եմ, որ սուրը կգործադրեմ այն խռովարարների դեմ, որոնց պատճառով իմ հայրենիքին հասել է այդ մեծ չարիքը և այն պատշաճ չեմ դնի այնքան ժամանակ, մինչև այդ նախատինքը չեմ սրբի, և թշնամուն Ռիչ-Պոսպոլիտայի առջև ծնկի չեմ բերի»²⁷:

Նույնպիսի անձնագոհութիւն ենք տեսնում նաև Մարզպետունու մոտ, որը կաթողիկոսի շիրիմին դնելով իր սուրը, դիմվորների ու Գառնու ժողովրդի առջև տալիս է հետևյալ հանդիսավոր երգումը. «Երգւում եմ ձեր առաջ, երգւում եմ հաճիտեանականի անունով, երգւում եմ իմ հայրենիքի արևով և այս սուրբ դերեղմանով, որ ես չեմ վերադառնալ ալլևս իմ ընտանյաց գիրկը, չեմ մտնիլ իմ հարկի տակ, մինչև վերջին հազարացին չհալածեմ հայրենի պահմաններից: Թո՛ղ կործանե ինձ աստված, թո՛ղ քրիստոնյան ինձ Հուդա և հայը Վասակ անվանե, եթե ես երբեք դրժեմ իմ ուխտին ու երգմանը»²⁸:

Ավելացնենք, որ Սենկևիչի պատմավեպում միայն Վիշնեցկին չէ, որ նման ուխտ է կնքում: Լիտվին Պոգրիպինտան, որը լեհ պատմավեպաստանի իդեալական հերոսներից մեկն է, իր հուժկու ուժով ու բարիութեամբ հայտնի ասպետներից մեկը, ուխտում է, որ չի ամուսնանա (թեև քառասուն տարեկան է) այնքան ժամանակ, մինչև երեք թաթարի զուխ միանգամից չկտրի:

Վերջապես, Մարզպետունու և Վիշնեցկու կերպարների համար կարող ենք մի քանի ընդհանրութիւններ ևս նշել:

²⁷ Henryk Sienkiewicz, Ogniem i mieczem, s. 298.

²⁸ Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 294:

Երկու զորավարներն էլ պահանջկոտ ու խստաբարո են ոչ միայն ուրիշների, այլև իրենց անձի նկատմամբ, հարկ եղած դեպքում մեծահոգի են ու բարյացակամ, և՛ խստապահանջ են, և՛ միաժամանակ ներող, հասարակ ու մատչելի են բոլորի համար, ընտանիքում նվիրված ամուսին ու հայր են, պատերազմի դաշտում ղինվորից քաջություն ու անձնազոհություն են պահանջում, իսկ դադարի ժամին հոգատարություն ցուցաբերում նրանց նկատմամբ: Եվ եթե ավելացնենք Մարզպետունու և Վիշնևեցկու արտաքին տրվյալների նկարագրությունը (բարձր, թիկնավետ հասակ, պատկառելի դեմք, իմաստուն հայացք), որ հարմոնիկ ներդաշնակություն է կազմում նրանց ուժեղ բնավորության հետ, ապա ավելի ակնհայտ կլինի այս կերպարների նմանությունը:

* * *

«Եռերգությունում» և «Գեորգ Մարզպետունի» պատմավիպում Սենկևիչն ու Մուրացանը հանդես են եկել ոչ այնքան որպես պատմագետներ, որքան՝ գեղագետներ: «Քերթողական արվեստի ամենատարրական օրինքն այն է,— գրում է Մուրացանը,—որ բանաստեղծը յուր գրվածքների մեջ առաջին տեղը տա ոչ թե պատմական, այլ իդեալական ճշմարտությանը և նրա կոչումը լինի ոչ թե հաստատել ճշմարտությունը, այլ ցույց տալ նրան»²⁹:

Եթե Սենկևիչը իր «Եռերգության» երեք պատմավեպերի ֆաբուլան կառուցում է հերոս-ասպետների՝ Սկշետուսկու, Կմիչիցի, Վոլոդըյովսկու սիրային արկածների ու պատմական իրադարձությունների միահյուսմամբ, ապա Մուրացանը, առաջնորդվելով նույն այդ սկզբունքով, իր պատմավեպի ֆաբուլան կառուցում է Աշոտ Երկաթի սիրային դրամայի և պատմության կոլիզիայի միահյուսմամբ: Սակայն գրողներից յուրաքանչյուրի համար սիրային պատմությունների ու ինտրիգների օգտագործումը տարբեր նպատակ է հետապնդում: Սենկևիչի մոտ այդ գծի վարդացումը մի կողմից կապվում էր պատմավեպերը հետաքրքրաշարժ դարձնե-

²⁹ Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 7, էջ 108:

չու հեղինակի ցանկութեան հետ, մյուս կողմից՝ համապատասխանութիւնն էր ստեղծում նրա հիմնական մտահղացման հետ, այն առումով, որ հերոսները ավելի լայն հնարավորութիւնն են ունենում իրենց անձնական արժանիքներն ու ասպետական էութիւնը բացահայտելու:

Մուրացանի համար սիրային պատմութեան գիծը, որ կապվում է Աշոտ Երկաթի կերպարի հետ, նույնպէս մեծ և զլխավոր տեղ է բռնում վեպում, սակայն դրա հետ հեղինակը կապում է բարոյափիլիսոփայական մի ամբողջ տեսակետ: Նախ՝ ներքին երկպառակութիւնների պատճառը նա համարում է թագավորի սիրային պատմութիւնը, և ասա՝ այդ կապակցութեամբ զարգացրած իր փիլիսոփայութիւնը ևս ծառայեցնում է պատմավեպում ներդրած հիմնական գաղափարին: Գեղագետ Մուրացանը, իհարկէ, կարողանում է այդ ամենը հոգեբանորեն պատճառաբանել ու հանգեցնել բարոյականի իր քարոզին: Պարզ ասած, նա զարգացնում է այն միտքը, որ եթե թագավորը հավատարիմ մնար թագուհուն, հարգեր իր և Ամրամի ընտանիքը (իսկ որպէս պետութեան ղեկավար, ըստ Մուրացանի՝ առավել ևս պարտավոր էր), ապա նախարարները դժգոհելու առիթ չէին ունենա, չէին ապրտամբի նրա դեմ, հազարացիներն էլ աւիթից օգտվելով չէին հարձակվի Հայաստանի վրա: Ուրեմն, հայրենիքին հասած չարիքի պատճառը թաքնված էր թագավորի բարոյական կերպարում:

Մուրացանը դատապարտում է մարդկային բոլոր տեսակի թուլութիւնները, որոնք ամենանվազագույն չափով անգամ կարող էին հայրենիքին վնաս բերել: Այսինքն, բոլոր տեսակի հարցերը, ինչպիսի սկիզբ ու վախճան էլ ունենային, Մուրացանը հանգեցնում է հայրենիքի, հայրենասիրութեան գաղափարին: Այս հարցերի նկատմամբ թե՛ Սենկևիչը և թե՛ Մուրացանը հանդես են բերում պատմափիլիսոփայական միեւնոյն մոտեցումը. մարդկային թուլութիւնները, արատները՝ փսամոլութիւնը, դավաճանութիւնը մերկացնում են բարոյականութեան տեսակետից, հաստատելու համար հայրենիքի հանդեպ մարդու ունեցած պարտքի գիտակցութեան գաղափարը:

Ի դեպ, եթե Մուրացանի պատմավիպում ուշադրության կենտրոնում են գտնվում թագավորը, արքունիքը, պալատական կյանքը, նախարարների հարաբերությունները, ապա Սենկեիշին քիչ են հետաքրքրում թագավորի ու մինիստրների հարաբերությունները, պալատն ու քաղաքը և ընդհանրապես պետության մեխանիզմը: Լեհ պատմավիպասանին ավելի գրավում են ազգերի միջև եղած բախումները, պատերազմները, XVII դարի մարդկանց ասպետականությունն ու արկածները, ազնվականների կյանքը:

«Եռերգության» երկրորդ մասում՝ «Ջրհեղեղում» պատկերված ազատագրական պատերազմը շվեդների դեմ բավական ընդհանուր գծեր ունի Մուրացանի պատմավիպի պատերազմական նկարագրությունների հետ: Ի տարբերություն «Հրով և սրով» վեպի, «Ջրհեղեղում», թագավորի Շլյոնսկ փախչելուց հետո, պատերազմի հաղթանակը Սենկեիշը չի կապում ո՛չ սեյմի, ո՛չ թագավորի ու իշխանների և ո՛չ էլ կանոնավոր բանակի գործունեության հետ: Այստեղ հեղինակը ցույց է տալիս, որ ղյուղացիների ու քաղաքացիների մեծ հայրենասիրության ու անձնազոհության շնորհիվ է (Իհարկե, երբեք չեն մոռացվում ասպետ հերոսները), որ ձեռք է բերվում հաղթանակը շվեդների դեմ:

Ի տարբերություն ռեալիստ պատմավիպասանների (Տոլստոյ, Ժերոմսկի), որոնց մոտ պատերազմական նկարագրություններում չի շեշտվում անհատի հերոսությունը, Սենկեիշի ու Մուրացանի պատերազմական տեսարաններում պատկերված են անհատ հերոսների ֆիզիկական ուժն ու ճարպկությունը, խելքն ու հնարամտությունը, քաջությունն ու հերոսությունը:

Հատկանշական է, որ երկու վիպասաններն էլ կարողացել են հրաշալիորեն կերտել մարտի տեսարանները: Եթե գրականագետ Վլոդիմեժ Ֆիշերը Սենկեիշին դասում է այն գրողների (Միցկևիչ, Պուշկին, Գոգոլ) շարքը, որոնք պատերազմական տեսարանները վերարտադրելիս օգտագործել են այսպես կոչված «հոմերոսյան» մեթոդը, ըստ որի՝ պատերազմները անմիջականորեն չտեսնելով հանդերձ, տալիս

էին մարտի տեսարանների հիանալի նկարագրեր³⁰, ապա Մուրացանին ևս կարող ենք դասել այդ նույն մեթոդը հիանալիորեն կիրառող գրողների շարքը:

* * *

«Եռերգության» և «Գեորգ Մարզպետունու» տիպաբանական համեմատությունները (իհարկե, մեր նպատակադրման սահմաններում) ամբողջական չեն լինի, եթե անտեսվեն Սենկևիչի և Մուրացանի պատմավեպերի գեղարվեստական ոճի, լեզվի, կոլորիտի պահպանման հարցերի քննարկումը, որոնք նույնպես պայմանավորել են այդ ստեղծագործությունների գեղարվեստական արժեքը:

Այս դժվարին պրոբլեմները իրականացնելու հարցում երկու գրողներն էլ աշխատում են հարազատ մնալ պատկերվող դարաշրջանին, պահպանելով «դարի բնութագրական գծերը», փաստորեն շարունակում են վալտերսկոտյան տրադիցիաները: Ե՛վ Սենկևիչը, և՛ Մուրացանը իրենց պատմավեպերում, չհարազատորեն վերարտադրելով դարի կոլորիտը, ի տարբերություն Սկոտի, մտցնում են ավելի մեծ գեղանկարչություն, գույների թափ, բարձր զգացմունքայնություն: Այս կապակցությամբ Ս. Ժերոմսկին իր հիացմունքն արտահայտելով հատկապես «Ջրհեղեղի» կապակցությամբ, գրում է. «Սենկևիչը չի կարողանում XVII դարի մեր նախնիների կյանքը վերարտադրել Կրաշևսկու հնէաբանական ճշտությամբ, բայց դրա փոխարեն կարողանում է զգալ այնպես, ինչպես զգում էին նրանք: «Ջրհեղեղում» զգացվում է անցյալ դարի հզոր շունչը»³¹:

Դարի կոլորիտը պահպանելու առնչությամբ հայ պատմավեպասանի մասին նմանատիպ կարծիք է հայտնել Ա. Տերտերյանը, երբ գրել է. «Մուրացանի պատմավեպը կարդալով, դուք տեղափոխվում եք այն դարաշրջանը, որ նկարագրում է հեղինակը: ...Մուրացանը կարողանում է տալ դարի բուրմունքը. անցյալի զգացմունքը նրա մոտ կենդանի

³⁰ Sk'n „Mysl Narodowa“, 1930, № 18, s. 279.

³¹ S. Żeromski, Dzienniki, t. 2, Warszawa, 1954, s. 440—441.

նի է, և նա կարողանում է դրանով վարակիլ իր ընթերցողին»³²։

Այդ գրողներից յուրաքանչյուրը իր պատմավեպում կարողանում է հիանալիորեն կերտել հայրենի բնութջան, ֆեոդալական ամրակուռ, վեհ ամրոցների ու բերդերի նկարագրությունները, պալատի (Սենկեիչի մոտ՝ ազնվական տների) կահավորանքի և հերոսների՝ դարին բնորոշ հագուստների, զենք ու զրահի ճշմարտացի վերապատկերումը։ Տվյալ դարաշրջանի պատերազմների, զինավառության, պաշարման գործիքների նկարագրությունը, ինչպես նաև զորավարների կողմից՝ ժամանակաշրջանի յուրատիպ ստրատեգիական ու տակտիկական պլանների իրագործումը պատերազմների ժամանակ, նույնպես վերստեղծում են դարի կոլորիտը։ Իհարկե, նրանց չի հաջողվել վերարտադրել դարի ամբողջական կոլորիտը, քանի որ այդ գրողները պատկերվող դարաշրջանների ոչ բոլոր կողմերն էին շոշափել։ Այսպես, Սենկեիչի մոտ բացակայում է հատկապես աշխատավոր ժողովրդի վարք ու բարքի, հագուստների, նրանց խրճիթների, առօրյա աշխատանքների նկարագրությունը, թեև ազնվականների (բայց ոչ՝ իշխանների) կյանքը պատկերելիս, լեհ գրողը փառահեղ կոլորիտայնություն է ստեղծել։ Մուրացանը թեև պատկերում է պալատը, իշխանների ամրոցները, այնուամենայնիվ, բացակայում է նրանց նիստ ու կացի նկարագրությունը իր ամբողջության մեջ՝ առօրյա կյանք, խընջույքներ, որսորդություն և այլն, էլ չենք խոսում հասարակ ժողովրդի կյանքը պատկերելու մասին։

Պատմավեպի ժանրում դարաշրջանի կոլորիտի պահպանման համար հսկայական նշանակություն ունեն տվյալ ստեղծագործության լեզվի ու ոճի հարցերը։ Իր ժամանակին Սկոտը, մեծ ուշադրություն դարձնելով այդ հարցերին, գրտնում էր, որ պատմավեպի «լեզուն չպետք է լինի միայն հնացած անհասկանալի բառերի շարադրանքից կազմված լեզու, չպետք է թույլ տալ, որպեսզի այդ բառերն ու արտահայտությունները բնորոշ լինեն միմիայն հաջորդ դա-

³² Ա. Տերտերյան, նշվ. աշխ., էջ 253։

րերին. այլ բան է՝ օգտվել այն լեզվից ու զգացմունքներից, որոնք ընդհանուր են մեր նախնիներին ու մեզ, և այլ բան՝ նրանց օժտել այն լեզվով ու զգացմունքներով, որոնք յուրահատուկ էին միայն նրանց սերունդներին»³³: Այս առումով Սենկևիչն ու Մուրացանը փայլուն լուծում են տվել «Եռերգության» և «Գեորգ Մարգալիտունու» լեզվա-ոճական խնդրին:

Սենկևիչը «Եռերգությունը» թեև գրում է իր ժամանակի գրական լեզվով, այնուամենայնիվ, ստեղծագործությունը այնպիսի տպավորություն է թողնում, որ կարծես ծայրեծայր գրված է հին լեհերենով: Գեղագիտական այդ բարդ խնդրի իրագործմանը նա հասնում է նեգատիվ ճանապարհով. մի կողմից խուսափում է օգտագործել այն բառերն ու արտահայտությունները, որոնք հատուկ չէին նկարագրվող դարաշրջանին, իսկ մյուս կողմից՝ վարպետորեն է գործածում հին լեհական բառերի ու արտահայտությունների կառուցվածքային ձևերը, և, որ ամենակարևորն է, չի շարաշահում արխաիկ բառերն ու ոճը: Լեհ գրողի լեզուն այդ պատմավեպերում հյուսվել է ու շատ սրամիտ: Հատկապես դիալեկտներում պահպանված է հին լեհերենի ոճական կառուցվածքը, որը XVII դարի շլյախտիչների ինքնատիպությանը ավելի մեծ հրանգ է հաղորդում: Դարաշրջանի կոլորիտը զգացվում է նաև այն ժամանակ, երբ հերոսները հրեման օգտագործում են լատինական որոշ արտահայտություններ, որոնք միջին դարերում գործածական էին շլյախտայական դասի շրջանում:

Մինչև «Եռերգության» հրևան դալը ոչ մի լեհ պատմավեպասանի, և ոչ նույնիսկ Սենկևիչին իր «Բաթարական լուծ» պատմավեպում, չէր հաջողվել լուծել լեզվա-ոճական այդ դժվարին խնդիրը: Իր այդ պատմավեպի լեզուն, օրինակ, Սենկևիչը ոճավորում է նկարագրվող դարաշրջանին բնորոշ լեզվական կառուցվածքի համաձայն, որը, ինչ խոսք, դժվարացնում էր ժամանակակիցների՝ վեպի դյուրին ընկա-

³³ Տե՛ս Ե. Դ. Рензов, Творчество Вальтера Скотта, М., 1965 стр. 282.

լումը: «Նուիրգությունում» արդեն (իսկ հետագայում՝ «Յոհրթաս» պատմավիպում) Սենկեիշը, օգտագործելով լեհ պատմավիպասանների՝ ոյդ ասպարիզում ձևը բերած հաջողություններն ու հաշվի առնելով անհաջողությունները, ստեղծում է պատմա-գեղարվեստական այնպիսի մի ոճ ու լեզու, որը լեհ պատմավիպասանությունը բարձրացնում է հիմնականի դասական մակարդակին:

Մուրացանի «Գեորգ Մարզպետունու» լեզուն նույնպիսի բարձր որակ է բերում հայ պատմավիպասանությանը: Օգտագործելով ժամանակակից գրական լեզուն, հայ պատմավիպասանը այն թարմացնում, հարստացնում է այնպիսի նոր բառերով ու ոճական արտահայտություններով, որ այդ պատմավիպը լեզվական բարձր կուլտուրայով մինչև այժմ էլ պահպանում է գեղարվեստական իր մեծ արժեքը: Պետք է շեշտել, որ հատկապես ժողովրդական արտահայտությունների օգտագործումը այդ պատմավիպի լեզվին արտակարգ կենդանություն են տալիս: Գրաբարյան արտահայտությունների չափավոր օգտագործումը իշխանների կողմից, ինչպես և նախորդ դարերի պատմիչների և Հոմերոսի մասին բազմիցս հիշատակությունները առթյալ՝ խոսակցությունների մեջ նույնպես մեծ չափով պահպանում են դարի կոլորիտը:

Սակայն թե՛ Սենկեիշի և թե՛ Մուրացանի պատմավիպերում բացակայում է հասարակ ժողովրդի խոսակցական լեզուն, որի պակասը անշուշտ խանգարում է նկարագրվող դարաշրջանների կոլորիտը իր ամբողջականության մեջ ընկալելուն: Իհարկե, դարաշրջանի «ներքին մոնոլոգը» երկու գրողներին էլ ներկայանում է իր օբյեկտիվությամբ՝ ընթերցողը պարզորոշ տեսնում է նախնիներին, լսում է նրանց ձայնը, ապրում՝ նրանց հույզերով, սակայն դա այն ամբողջականությունը չէ, որին՝ մյուս բոլոր խավերի խոսակցական լեզվի ու բարբերի համատեղ նկարագրությունը միայն կարող էր տալ:

Ի տարբերություն Սենկեիշի, Մուրացանի հերոսները նրբեմն խոսում են պաթետիկ, հանդիսավոր ոճով:

Հատկանշական է, որ երկու գրողներն էլ լեզվական ճկունությամբ կարողանում են սեփական ձայնը ձուլել պատ-

կերվող դարաշրջանի օբյեկտիվ «ձայնին» այնպես, որ հերոսների ունեցած հայացքները տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունների նկատմամբ դառնում են իրենց՝ հեղինակների հայացքները, որն էլ ստիպում է ընթերցողներին այդ ամենը ընկալել այնպես, ինչպես հեղինակներն են ընկալում ու տեսնում: Երկու գրողներն էլ փայլում են ընթերցողին իրենց վեպերի հերոսների ղգացումներով վարակելու վարպետությունը, կարողանում են նրանց մոտ առաջացնել այն պատրանքը, թե հերոսների ապրումները, ձգտումները հենց իրենց ապրումներն ու ձգտումներն են, իսկ դա գեղարվեստական ստեղծագործության համար շատ կարևոր ու մեծ արժանիք է:

«Եռերգություն» և «Գևորգ Մարզպետունի» պատմավեպերում եղած ընդհանրությունները, որոնք պատմության նկատմամբ Սենկևիչի ու Մուրացանի միանման հայեցության ու մտահղացման արդյունք էին, բավական են համոզելու, որ պատմավիպասանները հետապնդում էին հայրենասիրական գաղափարներով տոգորված պատմավեպեր ստեղծելու միևնույն նպատակը: Հայրենասիրության պաշտփարի ողջ իմաստը նրանց մոտ հանգեցվում էր բարոյականի ջատագովությանը, որը թեև վսեմ, բայց գործնականում անիրագործելի նույնատակ էր: Ի վիճակի չլինելով իրենց լավատեսությունը հիմնավորել պատմության դասերով, նրանք խորանում են բարոյական պատմափիլիսոփայության ծալքերում և փորձում ներկայի իդեալը գտնել անցյալում:

Դիմելով պատմական անցյալին և վերոհիշյալ պատմավեպերի էջերում հարություն տալով անձնազոհ հայրենասերների, ասպետների կերպարներին, Սենկևիչն ու Մուրացանը իրենց լավատեսությամբ ուղում էին վարակել հայրենակիցներին, ուղում էին ասել, որ այդպիսի փառահեղ, հերոսական անցյալ ունեցող ժողովուրդներին հնարավոր է ծնկի բերել, որ իրենց պանծալի պատմությունն արդեն դրավական է՝ բռնատիրության դեմ մղվելիք պայքարի հաղթանակի և Լեհաստանի ու Հայաստանի դալիք վերածննդի համար:

Ներկա ուսումնասիրության մեջ՝ հայ գրականության հետ Սենկևիչի ստեղծագործության ունեցած կապի, ազդեցության, տիպաբանության քննարկված, վերլուծված հարցերի բաղմամբիվ օրինակները ցույց են տալիս, անկասկած, թե լեհ գրականությունը հանձին Սենկևիչի, որքան մոտ է հայ ընթերցողին, և թե երկու ժողովուրդների գրականության մեջ որքան շատ են հղել գաղափարական-գեղարվեստական միանման թեմաները:

Սենկևիչի ստեղծագործությունները, սկսած առաջին շրջանի նովելներից և վերջացրած պատմական և ժամանակակից թեմաներով գրված վեպերով, ջերմորեն են ընդունվել հայ հասարակության կողմից, շնորհիվ նրանցում բարձրացված քաղաքական, հայրենասիրական, բարոյա-հասարակական այն պրոբլեմների, որոնք համընդհանուր էին երկու ժողովուրդների գեղարվեստական մտածողությանը:

Այն ամենը, ինչ պայմանավորել է լեհ գրողի սերն ու հոշակը հայ իրականության մեջ, ժամանակին լավագույն ձևով քնորոշել է Ալ. Շիրվանզադեն: «Անուններ կան, որոնց արտասանելիս մարդու հոգին պաշարում է մի տեսակ կրոնական զգացում,—գրում է նա: —Սենկևիչի անունը լեհ ազգի անցյալ փառքի, ներկա տառապանքների և ապագա երջանկության սիմվոլն է:

Նրա մեջ է մարմնացած լեհ ժողովրդի ազգային բարձր հանճարը:

Նա է հզորագույն ապացույցը, որ պատմական ոչ մի ձախորդություն և ճակատագրի ոչ մի հալածանք չի կարող մի ազգի մեջ սպանել կենսունակության ոգին, եթե նախախնամությունը տնորինել է, որ այդ ազգն ապրե ու բարգավաճե:

Լեհ ազգի պատմական ճակատագիրը նույնն է հղել և է այժմ իսկ, ինչ-որ հայ ազգի ճակատագիրը: Բաղմաշարշար Լեհաստան և թշվառ Հայաստան՝ երկու որբացյալ քույրեր դառապարտված միևնույն տեսակ տառապանքի—մեկն այնտեղ Եվրոպայում, մյուսն այստեղ Ասիայում:

Արդ՝ ո՞վ կարող է ավելի խորը համակրել լեհ գրողի մտքերին ու գաղափարներին, քան հայ գրողը, և ո՞վ կա-

րող է ավելի խորն ու ջերմ ղգալ լեհ ազգի հույսերն ու տեն-
չերը, քան հայ ազգը»³⁴։

Լեհ գրողն ակնհայտորեն ազդել է Նար-Դոսի, Ստ. Զոր-
յանի ստեղծագործությունների վրա։ Ա.Լ. Շիրվանզադեն, որ
բազմիցս իր հիացմունքն է արտահայտել Սենկևիչի ստեղ-
ծագործության նկատմամբ, խոստովանելով կրած դրական
ազդեցությունների մասին, Տուրգենևի, Տոլստոյի, Դիկկենսի,
Բալզակի, Ֆլոբերի, Հյուգոյի, Զոլայի կողքին հիշատակել
է նաև Սենկևիչի անունը³⁵, նրան համարել իր ուսուցիչներից
մեկը։

Ժամանակի հայ քննադատական մտքի ներկայացու-
ցիչները, որ բազմիցս հանդես գալով մամուլի էջերում,
բարձր գնահատական էին տալիս Սենկևիչին և նրան դասում
ամենահուշակավոր գրողների շարքը, գրում էին, թե նրա
ստեղծագործությունները իրենց շոշափած համամարդկային
թեմաների շնորհիվ պատկանում են ամբողջ մարդկությանը։

Սենկևիչի ստեղծագործության հայրենասիրական և հու-
մանիստական գաղափարներն ու գեղարվեստական մեծ ար-
ժեքն են հանդիսանում լեհ պատմավիպասանի և հայ գրա-
կանության սերտ կապի հիմքը։ Ինչպես Սենկևիչի և հայ գրա-
կանության առնչությունների ուսումնասիրությունը, այնպես
էլ ընդհանրապես՝ հայ և լեհ մյուս գրողների ստեղծագործու-
թյունների կապերի, ազդեցության, տիպաբանության ման-
րամասն ու բազմակողմանի հետադա հետազոտումը բավա-
կան օգտակար կլինեն թե՛ մեկ, և թե՛ մյուս կողմին, կստեղ-
ծեն ամուր հիմք դիտական փոխադարձ համագործակցու-
թյան համար, լույս կսփռեն ազգային գրականության մի
շարք պրոբլեմների վրա։

³⁴ «Մշակ», 1916, դեկտեմբերի 24։

³⁵ ՏԼՆ Ստ. Զորյան, Հուշերի գիրք (Ռոմանոս), Երևան, 1958,
էջ 159։

Հ. ՍԵՆԿԵՎԻՉԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵՀ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Սենկևիչի կենդանության օրոք նրա ստեղծագործությունների մայրենի և օտար լեզուներով լույս տեսած հրատարակությունների քանակն, իրոք, պատկառելի է:

Անհրաժեշտ տեղեկություններ Սենկևիչի ստեղծագործությունների հրատարակությունների մասին ստանում ենք Յու. Կժիժանովսկու կազմած՝ Սենկևիչի երկերի 60 հատորանոց հրատարակության վերջին երեք հատորներից, որոնք նվիրված են լեհերին և օտար լեզուներով կատարված հրատարակությունների մատենագրական տվյալներին, հրապարակված գրախոսություններին, հոգվածներին, լույս տեսած գրքերին:

Նշված մատենագրությունում, հայերենով կատարված թարգմանությունների մասին եղած տվյալները հեռու են իրականությանը մոտ լինելուց: Իհարկե, եթե նկատի ունենանք, որ հայ-լեհական գրական կապերը մինչև այժմ չեն ունումնասիրվել, ապա զարմանալի չի թվա, որ Սենկևիչի հայերեն թարգմանությունների մասին տրված են ոչ լրիվ, կցկտուր տեղեկություններ:

Դեռևս 1900 թ. «Tygodnik Ilustrowany» ամսագրում լույս է տեսնում լեհ գրականագետ Ստեֆան Դեմբայի կազմած «Սենկևիչից տարբեր լեզուներով կատարված թարգմանությունների մատենագրությունը»¹, որտեղ Սենկևիչի ըստ ստեղծագործությունների հայերեն թարգմանություններից հիշատակվում են միայն երկուսը՝ «Յո երթաս» և «Դնանք նրա ետևից» գործերը, որոնց տպագրության տարեթվերը 1898-ի, 1896-ի փոխարեն նշված են 1899:

¹ „Tygodnik Ilustrow any“, 1900, № 10, s. 201.

Ի դեպ, նշենք, որ «Kraj» լեհական թերթը դեռևս 1894 թ. հաղորդել է Սենկևիչից հայերեն թարգմանված մի քանի գործերի մասին, նշել «Առանց դավանանքի» վեպի հայերեն թարգմանությունը, որը հրապարակվել էր «Մուրճում» և լույս տեսել առանձին գրքով 1892 թ., ապա՝ «Գնանք նրա հտեից», «Յանկո երաժիշտ» և «Պոզնանի ուսուցչի հիշատակարանից» մանրավեպերի հայերեն թարգմանությունները (վերջիններիս հրատարակման տարիքները նշված չեն)²: 1898 թ. արդեն, «Kraj»-ը տեղեկացնում է «Յո երթասի» (1898) և «Տեսնենք նրան» (1898) նովելի հայերեն թարգմանությունների մասին³:

Սակայն Ստ. Դեմբան իր մատենագրությունը կազմելիս «Kraj»-ի հաղորդած տեղեկությունները չի օգտագործել, ամենայն հավանականությամբ՝ աչքից վրիպած լինելու պատճառով:

Սենկևիչի երկերի 59-րդ հատորում, որը նվիրված է լեհ գրողի ստեղծագործությունների մատենագրությանը, լեհ գրականագետը հայերեն թարգմանություններից թվարկում է 7-ը⁴, օգտագործելով Դեմբայի կազմած և «Kraj»-ի հրապարակած մատենագրական տվյալները:

Հետագայում լեհ հայտնի գրականագետ Ալինա Լադրկան, Յու. Կոբլանովսկու կազմած մատենագրության տվյալներն ամփոփելիս, չի օգտագործում Կադլմիր Ռոշբոյի (ծագումով հայ) 1956 թ. «Przegląd orientalistyczny» ամսագրում հրապարակած «Լեհ գրականության թարգմանությունները հայերեն լեզվով» հոդվածում⁵ նշված Սենկևիչի հայերեն թարգմանությունների նոր տվյալները: Կ. Ռոշբոն, օգտվելով Սամուելյանի⁶ և «Լիակատար ցուցակ գրողի»⁷

² *SL'u „Kraj“*, 1894, XIII, № 44, s. 16.

³ *SL'u „Kraj“*, 1898, XVII, dodatek literacki, s. 164.

⁴ Henryk Sienkiewicz, *Dzieła*, t. LIX (59), *Dzieła Sienkiewicza w przekładach*, Warszawa, 1953.

⁵ *SL'u „Przegląd orientalistyczny“*, 1956, № 2 (12).

⁶ *SL'u H. Samuelian*, *Catalogue de livres Arméniens Librairie, Venise*, 1955.

⁷ *SL'u «Լիակատար ցուցակ գրող»*, Վենետիկ, 1927, էջ 11 և 89:

վենետիկում հրատարակված կատալոգներից, Սենկևիչի ըստեղծագործությունների հայերեն թարգմանությունների քանակը հասցնում է 14-ի:

Ըստ Լադըկայի խմբավորած մատենագրական տվյալների՝ Սենկևիչից ամենաշատ թարգմանություններ կատարվել է ռուսերենով (258), ապա՝ իտալերենով (249), գերմաներենով (218), չեխերենով (161), ֆրանսերենով (160), սերբոխորվաթերենով (142), անգլերենով (106): Հայերենը տեղ է գտել ամենաքիչ՝ 5—9 թարգմանություններ ունեցող լեզուների շարքում:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Սենկևիչի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունները, վերահրատարակություններով հանդերձ՝ Կ. Ռոշքոյի նշած 14-ի փոխարեն կազմում են 70:

Իհարկե, չի բացառվում, որ հետագայում կատարվելիք նոր պրպտումները կավելացնեն Սենկևիչի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների քանակը:

Հ. ՍԵՆԿԵԼԻՉԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՆԵՐՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Z pamiętnika poznańskiego nauczyciela—1879

- 1 Պողանի ուսուցչի օրագրից, Շուշի, 1881, թրգմ. Տ. Նազարյանի:
- 2 Պողանի ուսուցչի հիշատակարանից, «Արձագանք», 1894^ա?, թրգմ. Ք. Նարթամյանցի:
- 3 Պողանի ուսուցչի հիշատակարանից, «Մուրճ», 1901, № 7, թրգմ. Ստ. Լիսիցյանի:
- 4 Պողանի ուսուցչի հիշատակարանից, Երևան, 1944, թրգմ. Վ. Միրախլյանի:

Bez dogmatu—1890

- 5 Առանց դավանանքի, «Մուրճ», 1891—1892, թրգմ. Տ. Հովհաննիսյանի:
- 6 Առանց դավանանքի, Թիֆլիս, 1892, թրգմ. Տ. Հովհաննիսյանի:
- 7 Առանց դավանանքի, Թիֆլիս, 1911, թրգմ. Տ. Հովհաննիսյանի (Երկրորդ ուղղված հրատարակություն):
- 8 Առանց դավանանքի, Կ. Պոլիս, 1925, թրգմ. Տ. Հովհաննիսյանի (Երկրորդ ուղղված հրատարակություն):
- 9 Առանց դավանանքի, Երևան, 1961, թրգմ. Տ. Հովհաննիսյանի (չորրորդ ուղղված հրատարակություն):

Latarnik—1881

- 10 Գարոսի վրա, Մոսկվա, 1892 (թարգմանչի անունը նշված չէ), Մկրտիչ Բարխուդարյանի տպարան:

* Ք. Նարթամյանցի չորս թարգմանությունների մասին տեղեկություն ենք բաղել լեհական «Kraj» (1898) թերթից, որոնցից «Հաղթող Բարդեղիլը» և «Երթանք նրա և տեղիցը» հայտնաբերել ենք նշված՝ «Արձագանք» ամսագրում, իսկ «Պողանի ուսուցչի հիշատակարանից» և «Յանկո երաժիշտ» գործերը (Բեկ դրանց գոյությունը չենք կասկածում) առայժմ չի հաջողվել հայտնաբերել, բայց հարկ ենք համարում նշել՝ ըստ լեհական թերթի տվյալների:

- 11 Փարոսի վրա, «Մշակ», 1894, № 143, թրգմ. Հ. Սուրխաթյանի:
- 12 Փարոսի վրա, Թիֆլիս, 1904, թրգմ. Հ. Սուրխաթյանի:
- 13 Աստղինվալի փարոսի պահապանը, «Մուրճ», 1905, № 8, թրգմ. Ատոմ Շահենի:
- 14 Փարոսի պահակը, «Ամերիկյան նովելներ» ժող., Երևան, 1954, թրգմ. Հ. Հարությունյանի:

Za chlebem—1880

- 15 Հացի համար, Թիֆլիս, 1892 (թարգմանչի անունը չկար. ղաջանթ պարզել):
- 16 Հացի համար, «Ամերիկյան նովելներ» ժող., Երևան, 1954, թրգմ. Հ. Հարությունյանի:

Bądź błogosławiona—1892

- 17 Եղիր օրհնված, «Տարազ», 1893, № 22, թրգմ. Ավ. Իսահակյանի:
- 18 Օրհնյալ լինես (հնդկական լեգենդ), «Մուրճ», 1894, № 5—8, թրգմ. Ա. Աղելյանի:
- 19 Օրհնյալ լինես (հնդկական դրույց), «Մշակ», 1897, № 43, թրգմ. ոմն տիկին Մ. (Բելզրադից):
- 20 Օրհնյալ լինես, «Տարազ», 1902, № 28, թրգմ. Ա. Խաչատրյանի:
- 21 Օրհնված եղիր (հնդկական առասպել), «Լուսա», 1903, № 1, թրգմ. Նվ. Աղանյանցի:
- 22 Օրհնված եղիր (հնդկական առասպել), Թիֆլիս, 1904, թրգմ. Քարվանի:

Uzródła—1892

- 23 Աղբյուրի մոտ, «Տարազ», 1893, № 21—22, թրգմ. Հ. Կարապետյանի:

Bartek zwycięzca—1892

- 24 Հաղթող Բարդեղի, «Արձագանք», 1893, № 82—91, թրգմ. Ք. Նարթամյանցի:
- 25 Բարթեկ հաղթողը, Երևան, 1944, թրգմ. Վ. Միրայելյանի:
- 26 Բարթեկ հաղթողը, Երևան, 1949, թրգմ. Վ. Միրայելյանի:
- 27 Բարտեկ հաղթողը, «Լեհական նովելներ» ժող., Երևան, 1955, թրգմ. Ս. Պայազատի:

Janko muzykant—1879

- 28 Յանկո Էրաժիշտ, «Արձագանք», 1894,?, թրգմ. Ք. Նարթամյանցի:
- 29 Յանկո Էրաժիշտ, Երևան, 1925, թրգմ. Ստ. Զորյանի:
- 30 Յանկո Էրաժիշտ, Երևան, 1955, թրգմ. Ստ. Զորյանի (վերահրատ.):
- 31 Երաժիշտ Յանկոն, Երևան, 1975, թրգմ. Ստ. Զորյանի (վերահրատ.):

Pójdźmy za nim 1892

- 32 Երթանք նրա հոտից, «Արձագանք», 1894, № 2—8, թրգմ. Ք. Նար-
թամյանցի:
33 Գնանք նրա հոտից, Ախլցխա, 1896, թրգմ. Տ. Վարդանյանի:
34 Հետևենք նրան, Բաբու, 1898, թրգմ. Հ. Աղամյանի:
35 Հետևենք նրան, Տփլիս, 1898, թրգմ. Հ. Աղամյանի:
36 Տեսնենք նրան, Թիֆլիս, 1898, թրգմ. Հ. Աղամյանի*:
37 Հետևենք նրան, «Ազատ ժամեր» գրք., Թիֆլիս, 1900, թրգմ. Հ. Աղամ-
յանի:
38 Անսր երթանք, Վենետիկ, ս. Ղազար, 1913, թրգմ. Ալեքսիս Հովսեփ-
յանի:

Pożar Rzymu—1894

- 39 Հոռմն է այրվում, «Արձագանք», 1895, № 150 (թարգմանչի անունը
նշված չէ):

Do Afiny—1890

- 40 Դեպի Աթենք, «Լուսմա», 1896, Գ(Ա—Բ), թրգմ. Գյուտ Աղանյանցի:
41 Դեպի Աթենք, Տփլիս, 1896, թրգմ. Գյուտ Աղանյանցի:
42 Դեպի Աթենք, Թիֆլիս, 1902, թրգմ. Գյուտ Աղանյանցի:

Quo vadis—1896

- 43 Յո երթաս, Թիֆլիս, 1898, թրգմ. Ստ. Լիսիցյանի:
44 Յո երթաս, Թիֆլիս, 1912, թրգմ. Ստ. Լիսիցյանի:
45 Յո՞ երթաս, «Շող», 1912,?, թրգմ. Ալ. Սիրունյանի (Օշին):
46 Յո՞ երթաս, Կ. Պոլիս, 1912, թրգմ. Ալ. Սիրունյանի (Երկրորդ հրատ.):
47 Յո երթաս, Բելյուրթ, 1952 (թարգմանչի անունը չկարողացանք պարզել):
48 Յո երթաս, Երևան, 1961, թրգմ. Ստ. Լիսիցյանի (Երրորդ ուղղված
հրատ.):

Sachem—1883

- 49 Սախեմ, «Մշակ», 1899, № 143, թրգմ. Տ. Հովհաննիսյանի:
50 Հնդիկների առաջնորդը, Մոսկվա, 1928, թրգմ. Աթ. Խնկոյանի:
51 Սախեմ, «Ամերիկյան նովելներ» ժող., Երևան, 1954, թրգմ. Հ. Հա-
րությունյանի:

Na Olimpie—1899

- 52 Օլիմպիոսի վրա, «Նոր-դար», 1900, № 91, թրգմ. Գր. Բեդեկյանի:

* Այս հրատարակությունը նշվում է ըստ լեհական «Kraj» թերթի
ավյալների (1898, XVII, dodatek literacki, s. 164), սակայն հակված ենք
կարծելու, որ դա Տփլիսի նույն հրատարակությունն է:

53 Ուլիմպիոսի բարձունքը, «Բազմավեպ», 1903, № 12, թրգմ. Ա. Ղազիկ-
յանի:

Sen—1893

54 Երազ, «Տարազ», 1901, № 2, թրգմ. Գ. Հովնանյանի:

Dwie łaki—1908

55 Երկու մարգագետիններ, «Մշակ», 1903,?, թրգմ. Տիրոսյանի:

56 Երկու հովիտ (հնդկական լեզվենդ), «Տարազ», 1915, № 8—9, թրգմ.
Ջ. Տեր-Գրիգորյանի:

Lilien Moris*

57 Լիլիեն Մորիս, «Մասիս», 1903, № 36—46, թրգմ. Զիֆթե Սարաֆի:

Serce poeta

58 Բանաստեղծի սիրտը (լեզվենդ), «Մասիս», 1904, № 44, թրգմ. Զիֆթե
Սարաֆի:

Beztroska

59 Անհոգություն, «Լույս» (օրացույց-հանդես), 1904 (թարգմանչի ա-
նունը նշված չէ):

Ogniem i mieczem—1884

60 Սրով ու հրով, «Բազմավեպ», 1906, թրգմ. Ա. Գունտարճյանի:

61 Սրով ու հրով, Վենետիկ, 1906, թրգմ. Ա. Գունտարճյանի:

62 Սրով ու հրով, «Արծիւլ»?**,

Potop—1886

63 Զրհեղեղ, «Բազմավեպ», 1912—1914, թրգմ. Ա. Գունտարճյանի:

64 Զրհեղեղ, Վենետիկ, 1913, թրգմ. Ա. Գունտարճյանի:

Pan Wolodyjowski—1888

65 Պան Վոլոդյովսկի, Վենետիկ, 1914, թրգմ. Ա. Գունտարճյանի:

* Սենկեվիչի «Լիլիեն Մորիս», «Բանաստեղծի սիրտը», «Անհոգու-
թյուն» նովելները պատկանում են լեհ գրողի այն փոքրածավալ գործերի
թվին, որոնց մասին ժամանակակից գրականագիտությունը հազվադեպ է
խոսում, ուստի հնարավոր չեղավ պարզել լեհերեն առաջին հրատարակ-
ման տարեթվերը:

** Վեպի այս հրապարակման մասին նշում է «Բազմավեպը» (1906 թ.,
էջ 211): «Արծիւլը» մեր ձեռքում չունենալու պատճառով չենք կարող
նշել հրապարակման տարեթիվն ու վեպը ամբողջապես հրապարակված
լինելու փաստը:

Przez stepy—1879

66 Պրերիաներով, «Ամերիկյան նովելներ» ժող., Երևան, 1954, թրգմ. Հ. Հարությունյանի:

Orso—1879

67 Օրսո, «Ամերիկյան նովելներ» ժող., Երևան, 1954, թրգմ. Հ. Հարությունյանի:

Szary sfuga—1875

68 Մեր ծառայողը, «Լեհական նովելներ» ժող., Երևան, 1955, թրգմ. Ս. Պայազատի:

Krzyżacy—1900

69 Խաչակիրներ, Երևան, 1957, թրգմ. Հ. Հարությունյանի:

Hania—1876

70 Հանյա, Երևան, 1960, թրգմ. Ա. Ղուկասյանի:



Ր Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ն ե ր ա ծ ու թ յ ու ն	5
Գլուխ առաջին—Հ. Սենկեվիչի նովելներն ու պատմվածքները հայ իրականության մեջ	24
Գլուխ երկրորդ—Հ. Սենկեվիչի վեպերը հայ բննադատական մտքի գնահատմամբ	51
Գլուխ երրորդ—Հ. Սենկեվիչի «Նուբգությունը» և Մուրացանի «Գե- վորգ Մարգարետունին»	88
Հ. Սենկեվիչի ստեղծագործությունների հայերեն թարգմանություն- ների լեհ-մատենագրության հարցի շուրջը	123
Հ. Սենկեվիչի ստեղծագործությունների հայերեն թարգմանություն- ների մատենագրություն	126

ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՎԻՉԸ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի
դիտական խորհրդի որոշմամբ

ИБ № 94

Հրատարակչական խմբագիր

Ա. Հ. ԶԱՔԱՐՅԱՆ

Նկարիչ

Հ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Գեղարվեստական խմբագիր

Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ

Տեխնիկական խմբագիր

Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սրբագրիչ

Ս. Կ. ԶԱՔԱՐՅԱՆ

ՎՖ 02199 Պատվեր 485 Հրատ. 4783 Տպաքանակ 1000

Հանձնված է շարվածքի 30.05. 1978 թ., Ստորագրված է տպագրության 17.11. 1978 թ.: Տպագրական 8,25 մամուլ, պայման. 6,93 մամուլ, հրատ. 5,88 մամուլ: Թուղթ № 1, 84×108¹/₃₂ գինը 95 կոպ.

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019,


Երևան, Բարեկամության 24 գ.

Издательство АН Армянской ССР, 375019, Ереван, Барекамутян, 24-г.

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան

Эчмнадзинская типография Издательства АН Армянской ССР

95 Կ.:



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220061805